ԷՋՄԻԱԾԻՆ

1986

ԱՄՀ 146

ԽԳ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վիեննա

1986

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՔԻ ԵՒ ԿԱՊԻՐ

ԱՐԵՒԵԼԵՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԻՍԱՄԱՐԱՆԱՅՆ ԱՅՍՈՑ ԾԱՌԱՅԱԳՈՒՆՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՔԵԱԼ ԱԳԱՌՈՒՆ ԱՌԱՒՏԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼ ԱՅԺՄ ԵԿԵՂԵՑՈՅՆ ՍՐՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՐԵՒԵԼԻ ՍՊԱՍՏԻՆ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ-Ի ԱՆՈՒԱՆ ՉԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ, ԵՒ ՉԱՅԱԳԷՏ ՇԻՍԱՅԱՍ ՏՈՒԹԻՒՆԸՍ ԿԵՐՄԱՆ ԿԱԼՆԻՆ, ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԱՆ ՍՐՈՅ ՈՂՋՈՅՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐՆՈՒԹԻՒՆԸ ՉԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ ԱԶԱՏՈՒ ՍՈՒՐԸ ԷՋԱՏՊԵՑԱՒ

1915-1916

1915 1916

Վարդէն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1916

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱԼԼԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱԳԵՏ ԴՈԿՏ. ՀԵՐՄԱՆ ԿՈԼՑԻՆ՝ ՀԱՅՐ ԻՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՄԱՀՎԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱԼԼԵԻ «ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ»-Ի ԱՆՈՒԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ, ԵՒ ՀԱՅԱԳԷՏ ԴԱՍԱԽՕՍ ՏՈՔԹ. ՀԵՐՄԱՆ ԿՈԼՑԻՆ, ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Հայոց Մայր Երկրից և Հայ Եկեղեցու պատմական կենտրոն Սուրբ Էջմիածնից բերում ենք ողջոյն և օրհնութիւն Հայր Իոհաննէս Լեփսիուսի յիշատակին, որին նուիրուած է ձեր գիտական նիստը, նրա մահուան վաթսունամեակի առթիւ, նպատակ ունենալով մեր օրերի աշխարհին ներկայացնելու մեծանուն գերմանացի հոգևորականի առաքելատիպ կեանքն ու կրօնական, գիտական և ընկերային ծառայութեանց բեղուն վաստակը:

Մեր գոհունակութիւնը և Մեր ջերմ գնահատանքն ենք յայտնում Ձեզ, որ երջանիկ գաղափարն էք ունեցել ձեր պատմական համալսարանի յարկի տակ կազմակերպելու սոյն հանդիսաւոր նիստը, որին հաճել էք հրաւիրել Մայր Աթոռիս երկու ներկայացուցիչներին, որոնք պիտի լինեն Մայր Աթոռիս դիւանապետը Տ. Ներսէս եպիսկոպոս Պոլսայլեան և Կենտրոնական Եւրոպայի Մեր պատուիրակը Տոքթ. Մեսրոպ ծ. վարդապետ Գրիգորեան: Նրանք պիտի մասնակցեն ձեր հանդիսութիւններին բերելով բոլորիդ Մեր եղբայրական ողջոյնը և բարի մաղթանքները:

Հայ Եկեղեցու և ժողովրդի համար Հայր Լեփսիուսը խորհրդանիշն է գերման ազգի քրիստոնէական խղճի և արդարութեան զգացումի: Նրա անունը յաւերժ արձանագրուած կը մնայ քսաներորդ դարի պատմութեան գրքում որպէս այդպիսին, իսկ հայ ազգի պատմութեան էջերում որպէս քաջակորով

ախոյեան մարդասիրութեան, որպէս անձնապոհ բարի հովիւ Յիսուսանման և որպէս դրօշ ու որպէս կոչ արդարութեան:

1915—1916 տարիներին էր, երբ Օսմանեան կառավարութիւնը ծրագրեց ու գործադրութեան դրեց բնաջնջումը հայ ազգաբնակչութեան Թուրքիոյ ամբողջ տարածքի վրայ: Իրենց պատմական հայրենի հողից տեղահան արուեցին ու կոտորուեցին անասելի տառապանքների մէջ աւելի քան մէկ ու կէս միլիոն հայ քրիստոնեաներ, քարուքանդ արուեցին հայաբնակ քաղաքներ, գիւղեր, բազմադարեան հայ եկեղեցական ու մշակութային յուշարձաններ, հրկիզուեցին բազմահազար ձեռագրեր և հայ արուեստի գործեր: Կատարուեց քսաներորդ դարի առաջին ցեղասպանութիւնը անմարդկային ւառնասրտութեամբ: Այդ տարիներին պատերազմ էր աշխարհում, երբ սուլթանական Թուրքիայի կառավարիչները առիթը գտել էին մեծ ոճիրը գործելու, վայելելով լուռ մեղսակցութիւնը դաշնակից Վիլհելմեան Գերմանիայի կառավարութեան:

Այս ողբերգութեան օրերին էր ահա, որ գտնուեց մի քաջ հովիւ՝ Հայր Իոհաննէս Լեփսիուսը, որ իր արդար ձայնը հնչեցրեց բարձր ու համարձակ ի պաշտպանութիւն նահատակուող մի քրիստոնեայ ժողովրդի:

Ճշմարիտ է, որ Հայր Լեփսիուսի ձայնը խափանուեց կայսերական շահերի հարուածով, սակայն այդ ձայնը հիսօր հնչեց քաղաքակիրթ մարդկութեան դատաստանի առաջ և շարունակում է հետզհետէ աւելի հիսօր հնչել մեր օրերին իբրև երկինք բարձրացող արդարութեան աղաղակ:

Հայ Եկեղեցին ու համայն հայ ազգը որ ի Սովետական Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, երախտապարտ հոգով յիշում են Հայր Լեփսիուսի արդար պայքարը, նրա հրապարակած հայանպաստ պատմական գրքերը՝ «Հայաստան և Եւրոպա» 1896-ին և «Գերմանիա և Հայաստան» 1919-ին, խոնարհւում են նրա յիշատակի առաջ ու աղօթում, որ նրա բարի հոգին միշտ լուսաւոր մնայ երկնային յաւերժութեան մէջ և այստեղ, երկրի վրայ, մարդկութեան յիշողութեան մէջ:

Հայոց ցեղասպանութեան օրերից անցել են 70 տարիներ, սակայն Հայր Լեփսիուսի բողոքող խօսքը հնչում է այսօր աշխարհով մէկ, առաւել ուժգնութեամբ, առաւել լայն արձագանքով:

Երբեմն ոճիրները միառժամանակ մնում են թաքցուած կամ քողարկուած, սակայն արդարութեան լոյսը կարելի չէ ընդմիշտ խափանել: Արդարութեան լոյսը ճեղքում է խաւարը, փշրում է ստի ու կեղծիքի պատնէշը, քանդում ոճիրի բոյնը և յաղթական ճառագայթում հորիզոնից հորիզոն: «Յանցանել մրրկի, եղծանի ամբարիշտն, իսկ արդարոյն խոյս տուեալ՝ կեցցէ յաւիտեան» (Առակք Սողոմ. Ժ 25):

Հայ Եկեղեցին ու նրա ժողովուրդը հայցում են երկնքից ու մարդկանցից, մեր օրերի աշխարհից, ճանաչումը ցեղասպանութեան եղերական ճշմարտութեան և արդար հատուցումը՝ հայութեան 1915-ի նահատակութեան: Այս նուիրական ճանապարհի վրայ, 1915-ի ողբերգութեան մեծ վկան՝ Հայր Լեփսիուսը, այսօր էլ հանդիսանում է հայ ազգի անհուն վշտի մխիթարիչը ու քաջամարտ պաշտպանը նրա արդար դատի:

Ու այս հանդիսաւոր առիթով Մենք յոյս ենք յայտնում, որ Հայր Լեփսիուսի ձայնը լսելի կը դառնայ նաև թուրք ազգի մերօրեայ սերունդներին, և կը գայ աստուածադիր օրը, երբ նրանք էլ հայերի կողքին կ'աղօթեն մեր նահատակների հոգիների խաղաղութեան համար: Ապնիւ ու աստուածասէր մարդիկ երկրագնդի բոլոր հորիզոններից աղօթելու են ու գործելու, որ յետ այսու աշխարհում ոչ մի տեղ, ոչ մի ազգութեան կեանքում չկրկնուեն նման ողբերգութիւններ, և մեծ ու փոքր ժողովուրդներ ապրեն ու գոյատևեն

այս երկրագնդի վրայ՝ որ բոլորին սնուցում է հաւասարապէս, այս արևի տակ՝ որ բոլորին լուսաւորում է հաւասարապէս, Աստուծոյ օրհնութեան ներքև՝ որ բոլորին բաշխւում է հաւասարապէս:

Երանի մարդիկ ու ազգութիւններ լսէին եղբայրացնող այս պատգամը՝ Աստուծոյ, արևի ու մայր հողի:

Երանի մարդիկ ու ազգութիւններ կեանքի կոչէին պատգամը մեծ սաղմոսերգուի՝ «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմ. ՁԴ 11): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10 Փետրուարի
1986 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1410



ԴՈԿՏ. ՀԱՅՐ ԻՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՄԱՀՎԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Սույն թվականի փետրվարի 18—19 օրերին, Արևելյան Գերմանիայի Հալլե-Վիտենբերգ քաղաքի Մարտին Լութերի անվան համալսարանի աստվածաբանական ֆակուլտետին կից Լեփսիուսի արխիվի տնօրենության կողմից, համալսարանի արևելագիտության և հնագիտության, ինչպես նաև պատմության ու հասարակագիտության ֆակուլտետների համագործակցությամբ կազմակերպվել էր մի գիտաժողով՝ նվիրված դոկտոր հայր Իոհաննես Լեփսիուսին, նրա մահվան 60-րդ տարելիցի առթիվ:

Փետրվարի 18-ի առավոտյան, ժամը 9-ին, համալսարանի Չերնիշևսկու անվան շենքի ընդարձակ դահլիճում գիտաժողովի բացումը կատարեց համալսարանի պրոռեկտոր դոկտ. պրոֆ. Ռ. Բավրմանը: Այնուհետև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի անունից ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը՝ ընթերցելով Նորին Վեհափառության սրբատառ կոնդակը նվիրված դոկտ. հայր Իոհաննես Լեփսիուսի հիշատակին և ուղղված Մարտին Լութերի անվան համալսարանի դասախոս և սույն գիտաժողովի կազմակերպիչ դոկտ. Գոլցին:

Ողջույնի խոսքերով հաջորդաբար հանդես եկան՝ ԳԴՀ-ի Ավետարանական Եկեղեցիների Միության անունից եպիսկոպոս դոկտ. Կ. Ֆորքը, Ռուսաց ուղղափառ Եկեղեցու անունից՝ Բեռլինի և Կենտրոնական Եվրոպայի էկզարխ Ֆեոդոս արքեպիսկոպոսը, Գերմանա-հայկական ընկերության ներկայացուցիչ, ԳՖՀ-ի Հայդելբերգի համալսարանի պրոֆ. դոկտ. Ֆ. Հայերը:

Գիտաժողովի նիստին հատկացված սրահում ցուցադրված էին դոկտ. Իոհաննես Լեփսիուսի արխիվը, նրա հրատարակած աստվածաբանական և ընկերային հարցերին վերաբերվող շահեկան գրքերը, նրա ընտանեկան նկարները և անձնական իրերը:

Առավոտյան ժամը 10-ին սկսվեցին գիտաժողովի աշխատանքները: Զեկուցումներով հանդես եկան Մարտին Լութերի անվան համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դեկան դոկտ. Հ. Գոլցը «Հայոց դատապաշտպան հայր դոկտ. Իոհաննես Լեփսիուսի կյանքն ու գործունեությունը» թեմայով, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ դոկտ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը «Հայաստանը նորագույն ժամանակներում» թեմայով, ԳՖՀ-ի Հայդելբերգի համալսարանի պրոֆ. դոկտ. Մ. Ռ. Լեփսիուսը՝ «Դոկտ. Ի. Լեփսիուսի պատանեկության և ուսանողական տարիների մասին» թեմայով:

Միջօրեի ճաշի դադարից հետո գիտաժողովը շարունակվեց: Զեկուցումներով հանդես եկան պրոֆ. դոկտ. Յ. Գլասնեկը (ԳԴՀ) «Երիտթուրքական ռեժիմի բնույթը Օսմանյան կայսրությունում» թեմայով, հոգշ. Տ. Սեպուհ ծ. վրդ Սարգսյանը՝ «Հայ-գերմանական գիտական կապերը Գարեգին Ա

Հովսեփյան կաթողիկոսի գործունեության մեջ» թեմայով, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից դոկտ. հայր Լևոն Զեքիյանը «Մխիթարյան միաբանության ներդրումը հայ մշակույթի և գիտության պահպանման գործում» թեմայով, պրոֆ. դոկտ. Պ. Նագելը (ԳԴՀ) «Գերմանացի արևելագետների արձագանքումը Օսմանյան կայսրության մեջ հայերի ճակատագրի վերաբերյալ» թեմայով: Ապա վեկուցեց ԳԴՀ-ի Գիտությունների ակադեմիայի անդամ պրոֆ. դոկտ. Յ. Իրմշերը «Յոզեֆ Մարկվարտ, կյանքը, գործն ու ազդեցությունը» թեմայով:

Երեկոյան, ժամը 18-ին, գիտաժողովը իր առաջին օրվա աշխատանքներն ավարտեց: Ժողովի մասնակիցները ընթրիքից հետո հրավիրվեցին Հալլե քաղաքի Մարկտ հրապարակում գտնվող Ս. Աստվածածնի տաճարը, որտեղ գիտաժողովի մասնակիցների և խուռներամ հավատացյալների ներկայությամբ կատարվեց էկումենիկ ժամասացություն: Ժամասացությանը իրենց մասնակցությունը բերեցին Ավետարանական, Կաթոլիկ և Հայ Առաքելական Եկեղեցիները, ինչպես նաև Կոլեգիում Վոկալե Հալլե և Հալլե Օկտետ երկու երգչախմբերը, որոնք գեղարվեստական բարձր մակարդակով կատարեցին մի շարք եվրոպական եկեղեցական երգեր և հատվածներ Կոմիտասյան պատարագից:

Էկումենիկ այս արարողության ընթացքում քարոզով հանդես եկավ Մագդեբուրգ քաղաքի եպիսկոպոս դոկտ. Դեմկեն, որն իր խոսքում յուրովի մեկնաբանեց հայկական խաչքարի նշանակությունը՝ այն նմանեցնելով հայ ժողովրդի անցյալի չարչարանքներին և ներկայի հարությանը: Ապա քարոզեց Տ. Ներսես եպս. Պոլապալյանը «Հավատը՝ սիրուց մղված» (Գաղ. Ե 6) բնաբանով:

Ներսես եպս. Պոլապալյանը դոկտ. Կոլցին է հանձնում Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը

Հաջորդ օրը, փետրվարի 19-ի առավոտյան նիստի ընթացքում ելույթներ ունեցան դոկտ. Ս. Սամեսը (ԳԴՀ)՝ «Օսմանյան կայսրությունում հայ քրիստոնյաների ճակատագրի մասին» թեմայով, պրոֆ. դոկտ. Ֆ. Հայերը (ԳՖՀ)՝ «Անգլիացի պետական գործիչ Վիլյամ Էվարթ Գլեդսթոնի և հայերի 1894—96 թվականների կոտորածի մասին» թեմայով, պրոֆ. դոկտ. Բ. Բրենտիեսը (ԳԴՀ)՝ «Գերմանական աշխատավորական շարժումը և Գերմանիայի հումանիստական ավանդույթները հայկական հարցում» թեմայով, դոկտ. Բ. Մալիխը (ԳԴՀ)՝ «Քրիստոնյա միլլեթները Օսմանյան կայսրության մեջ 19-րդ դարում գերմանացի պատմաբանների տեսակետից, մասնավորապես՝ Թրայչկեի»

թեմայով, պրոֆ. դոկտ. Ա. Անդերլեն (ԳԴՀ)՝ «Հայերի և վրացիների նկատմամբ ցարական քաղաքականության շուրջ» թեմայով:

Ճաշի դադարից հետո գիտաժողովը շարունակեց իր աշխատանքները, որոնց ընթացքում ելույթներ ունեցան դոկտ. Յ. Բրոյստեն (ԳԴՀ)՝ «Հայաստանի աշխարհագրական հետազոտությունը» թեմայով (այս առթիվ ցուցադրվեցին Հայաստանին վերաբերող քարտեզներ և սահիկներ): Պրոֆ. դոկտ. Հանիկը (Բելգիա) վեկուցեց «Արևմտահայության ճակատագիրը ժամանակակից ռուս գրականության մեջ» թեմայով, հայր դոկտ. Ք. Դիդրիխը (ԳԴՀ)՝ «Իոհաննես Լեփսիուսը և հարավ-ռուսական ջդունդիստները» թեմայով, դոկտ. Մ. Սենսը (ԳԴՀ)՝ «20-րդ դարում հին արևելյան Եկեղեցիների հետ աստվածաբանական երկխոսության վարգացման ընթացքի մասին» թեմայով: Վերջին վեկուցողը եղավ պրոֆ. դոկտ. Գ. Բասարակը (ԳԴՀ), որի վեկուցման թեման էր «Հայ Առաքելական Եկեղեցին խաղաղասիրական աշխատանքում» (Աստ, էջ 10):

Կարճ դադարից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակում և գիտաժողովի աշխատանքների եզրակափում:

Այս առթիվ եզրափակիչ խոսքով հանդես եկավ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը: Նա իր խոսքում գնահատանքով անդրադարձավ գիտաժողովի բոլոր մասնակիցների՝ պատմական կարևոր տեղեկություններով հագեցված գիտահետազոտական լուրջ աշխատանքներին: Այնուհետև սրբազան հայրը Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի անունից շնորհավորեց գիտաժողովի բոլոր մասնակիցներին՝ բերելով նրանց Սուրբ Էջմիածնի օրհնությունները և հայ ժողովրդի երախտիքը:

Ելույթ է ունենում Իոհաննես Լեփսիուսի թոռնորդի դոկտ. պրոֆ. Մ. Ռ. Լեփսիուսը

Այս առթիվ ելույթներ ունեցան նաև պրոֆ. դոկտ. Գ. Քրիչմարը (ԳՖՀ) և գիտաժողովի կազմակերպիչ դոկտ. Հ. Գոլցը:

Երեկոյան, ժամը 20-ին, Հալլե քաղաքի Մարիցբուրգ դղյակի սրահներից մեկում տրվեց պաշտոնական ճաշկերույթ ի պատիվ գիտաժողովի մասնակիցների: Ճաշկերույթին ներկա էին Մարտին Լութերի անվան համալսարանի պրոռեկտոր պրոֆ. դոկտ. Ռ. Բավրմանը, պետական իշխանությանց ներկայացուցիչներ, բարձրաստիճան հյուրեր, տեղական Եկեղեցիների ներկայացուցիչներ ու գիտաժողովի մասնակիցներ: Ճաշկերույթի ընթացքում պրոֆ. դոկտ. Գ. Բասարակը բաժակաճառ արտասանեց և առաջարկեց խմել Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա Հայրապետի կենացը: Բոլոր ներկաները հոտնկայս խմեցին Վեհափառի կենացը: Ի պատասխան սույն կենացի, շնորհակալու-

թյան խոսքով հանդես եկավ Տ. Ներսես եպս. Պոկապալյանը:

ԳԴՀ-ում գտնվելու օրերին, դոկտ. Հ. Գոլցի հրավերով, Տ. Ներսես եպիսկոպոսը այցելեց Մարտին Լութերի անվան համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը և ծանոթացավ տեղի աշխատանքներին, այցելեց նաև ֆակուլտետի գրադարաններն ու լսարանները՝ գոհունակությամբ տեղեկանալով, որ նույն այդ լսարաններում բավում տասնամյակներ առաջ սովորել ու աշխատել են Մայր Աթոռի միաբաններ Գարեգին սարկավագ Հովսեփյանը, Կարապետ սարկավագ Տեր-Մկրտչյանը, Գևորգ սարկավագ Հորեքչյանը, Կոմիտաս վարդապետը և Հայ Եկեղեցու բազմաթիվ այլ երախտավորներ:

Ուրբաթ օրը, փետրվարի 21-ին, Մագդեբուրգ քաղաքի եպիսկոպոս դոկտ. Դեմկեի հրավերով Տ. Ներսես եպիսկոպոսը, ընկերակցությամբ Տ. Մեսրոպ ծայր. վարդապետի և հայր Լևոն Զեքիյանի (Մխիթարյան Ուխտից), այցելեց Մագդեբուրգի Ս. Մորիս մայր տաճար, որտեղ կատարվեց գոհաբանական աղոթք: Ապա Դեմկե եպիսկոպոսը բարիգալստյան խոսքով ողջունեց հյուրերին: Հյուրերի անունից ողջույնի և շնորհակալության խոսք ասաց Տ. Ներսես եպիսկոպոսը՝ փոխանցելով Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական ողջույնները Տ. Դեմկե եպիսկոպոսին և օրհնությունները Ս. Մորիս տաճարի հավատացյալներին:

Գերաշնորհ Տ. Դեմկե եպիսկոպոսը Մագդեբուրգի նախկին արքեպիսկոպոսարանում, ի պատիվ Հայ Եկեղեցու ներկայացուցիչների, տվեց մասնավոր ճաշկերույթ: Մայր Աթոռի ներկայացուցիչները երկոյան մեծ տպավորությամբ բաժանվեցին հյուրընկալ Դեմկե եպիսկոպոսից և նրա հարգարժան ընտանիքից:

Փետրվարի 22-ին, շաբաթ օրը առավոտյան, Տ. Ներսես եպիսկոպոսը այցելեց Նաումբերգի հոգևոր ակադեմիա, որտեղ ունեցավ ակադեմիայի ռեկտոր դոկտ. Վալտերի հետ, ապա 12-րդ դարում կառուցված ակադեմիայի մատռան մեջ կատարվեց էկումենիկ մի կարճ մաղթանք: Այնուհետև Դոմինաֆոն Ուքրոն հյուրերին առաջնորդեց Նաումբերգի մայր տաճար:

Հետմիջօրեին Տ. Ներսես սրբազանը, դոկտ. Գոլցի ընկերակցությամբ, մեկնեց Սաքսոնիայի կենտրոն Լայպցիգ քաղաքը, ուր 20-րդ դարի սկզբին «Աբգար Հովհաննիսյան» հրատարակչությունը հայերեն և գերմաներեն լեզուներով հրատարակել է բազմահատոր գրքեր:

Նույն օրը, ժամը 17-ին, հյուրերը ներկա եղան նոր Կեվանտ համերգասրահում երգեհոնային երաժշտության մի համերգի:

Ավելի ուշ, ժամը 20-ին, Տ. Ներսես եպիսկոպոսը, ընկերակցությամբ դոկտ. Գոլցի, մեկնեց Արևելյան Բեռլին:

Փետրվարի 23-ին, կիրակի օրը, Ներսես եպիսկոպոսը Արևելյան Բեռլինի «Հովհաննես Թալ» թաղամասի Ավետարանական Եկեղեցու հոգևոր հովիվ Ի. Գրաութի կողմից հրավիրվել էր եկեղեցի՝ մասնակցելու կիրակնօրյա եկեղեցական արարողությանը: Հոգևոր հովիվը համառոտ տեղեկություններ տվեց հավատացյալներին Հայ Եկեղեցու և ժողովրդի մասին, որից հետո Տ. Ներսես եպիսկոպոսը քարոզեց «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնաբանով: Ժամասացությունից հետո Մայր Աթոռի ներկայացուցչի և հավատացյալների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

Փետրվարի 24-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Տ. Ներսես սրբազանը ջերմ տպավորություններով մեկնեց Արևելյան Բեռլինից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադառնալու համար:

ԹՂԹԱԿԻՑ





ՊՐՈՖ. ԳԵՐՀԱՐԴ ԲԱՍԱՐԱԿԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ*

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ Ի ՆՊԱՍՏ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Ֆրիդրիխ Լուֆսը, որը 1887-ից մինչև 1926 թվականը այստեղ եկեղեցական պատմություն էր ուսումնասիրում, գրում է. «Հայ Եկեղեցին արևելյան ազգային Եկեղեցիների շարքում ոչ միայն պատվականագույնն է, այլև ամենանշանավոր և հոգևոր կենսունակություն ունեցողը»:

Օտարների նման հաստատումները հիմնավորվում և վավերական են դառնում հայազգի հեղինակների վկայություններով, որոնք առավել ևս արժեքավոր և լուսաբանող են, երբ վերաբերում են Հայ Եկեղեցու տեսանկյունից մի հերետիկոսի, այսինքն՝ հայ բողոքականի: Եկեղեցուց արտաքսման մասին նա գրում է. «Նա (Եկեղեցին) վտարում է տվյալ անձին ոչ միայն Եկեղեցուց, այլև ազգային հավաքականությունից: «Ազգ» և «Կրոն» գաղափարները միևնույնն էին: Հայը միաժամանակ քրիստոնյա էր և ոչ թե մի կողմից հայ և մյուս կողմից քրիստոնյա»: Ազգի և Եկեղեցու, Եկեղեցու և ազգի այս նույնությունը, ոչ որպես մեկի նույնականությունը մյուսի հետ նշանակում է, որ պատմությունը, պատմական ճակատագիրը հավասարապես է բաժին ընկել երկուսին միաժամանակ՝ թե՛ պատերազմի և թե՛ խաղաղության ընթացքին, ինչպես և հավաքական գոյությանը ընդհանրապես: Վերոհիշյալի արտահայտությունն եմ նկատում, օրինակի համար, որ Հայոց Կաթողիկոս Գևորգ 6-րդը 1950 թ. հոկտեմբեր 16-ին Մոսկվայում գումարված Սովետական Միության խաղաղության երրորդ համաժողովին ընտրվում է Խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ... և ժողովրդի կողմից նա կոչվում է «հայրենասեր կաթողիկոս»:

Ես պետք է ներկայացնեմ խաղաղության պաշտպանության ի խնդիր Հայ Առաքելական Եկեղեցու ներդրումների վանական երեսները: Նյութի վերաբերյալ առանձին ուսումնասիրություն ինձ ծանոթ չէ: Անցյալին վերաբերող տվյալների համար ես հենվում եմ հիմնականում Ֆրիդրիխ Հայերի կողմից «Աշխարհի Եկեղեցիները» շարքում հրատարակված «Հայ Եկեղեցին» հատորյակի վրա: Մեր օրերի վերաբերյալ օգտագործում եմ ունեցած որոշ տեղեկություններ և նյութեր՝ Էջմիածնի կողմից ինձ տրամադրված:

Ցավոք պետք է ասենք, որ անցյալում ընդհանուր առմամբ Եկեղեցիների համար

* Տպագրվում է փոքրիկ հապավումներով:

«Խաղաղությունը» գրեթե նյութ չի եղել: Վիճակը փոխվում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ խաղաղությունը Լենինի հայտնի կոչի մեջ հայտարարվում է որպես մարդկության պարտավորություն: Սա ամենևին միայն պրոպագանդայի նյութ չէր: Սովետական երիտասարդ պետությունը ձեռնամուխ եղավ խաղաղությունը իր քաղաքական բարձրագույն նպատակը հռչակելու: Ուստի զարմանալի չէ, որ 1920 թ. Հայաստան ներխուժած Քեմալ Աթաթուրքի բանակի դեմ «Հայ կոմունիստները... Կարմիր բանակին օգնության կանչեցին և 1920 թ. նոյեմբերին... Հայաստանը դարձավ Սովետական Հանրապետություն»: Մի ծանրակշիռ քայլ, որով հին հայկական, նոր սովետական հայկական հայրենիքը այսուհետև պաշտպանվում էր թուրքական հերթական հարձակողական գործողություններից: 1934 թ.,— գրում է Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը,— «Նյու Յորք Թայմս»-ի մոսկովյան թղթակիցը Էջմիածնում հարցազրույց է անցկացնում Խորեն 1-ինի հետ Սովետական Միության մեջ Հայաստանյայց Եկեղեցու վիճակի մասին: Կաթողիկոսը իր երախտագիտությունն է հայտնում Ռուսաստանին՝ խաղաղության ապահովման և օգնության համար, որ ռուսները ցուցաբերեցին հայերին՝ իրենց հայրենիքի վերաշինման աշխատանքներում, որ կառավարությունը ցուցաբերում է բոլոր խնդիրները բարի կամեցողությամբ և փոխադարձ հասկացողությամբ լուծելու պատրաստակամություն»: Հանրածանոթ է, որ Ռուս Օրթոդոքս Եկեղեցին կազմեց Դիմիտրի Դոնսկոյի անվան տանկային շարասյունը ընդդեմ գերմանական ֆաշիստ ներխուժողների, սակայն շատ քչերին է ծանոթ, ինչպես Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանն է հիշատակում, որ նաև Հայ Առաքելական Եկեղեցին է նման քայլի ձեռնարկել. «Հայաստանում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը Ստալինից արտոնություն է ստանում ազգային հերոս Սասունցի Դավթի անունով տանկային շարասյուն կազմելու: Արքեպիսկոպոսը դրամ հավաքեց սփյուռքի հայ համայնքներից և 18 մարտ 1944 թ. Սովետական բանակին հանձնեց տանկային շարասյունը: Նա 1944 թ. մի կոչ ուղղեց Հայ ժողովրդին՝ ազդարարելով, որ պետք է իր երկիրը հայրենասիրությամբ պաշտպանել»: «1945 թ. ապրիլի 19-ին 76-ամյա տեղապահը ընդունվում է Կրեմլում: Այս հանդիպումից 10 օր հետո Սովետական բանակը մուտք է գործում Բեռլին: Թամանյանի անվան հմր. 89 հայկական դիվիզիան գեներալ Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ սխրանքներ է գործում: Մայիսի 8-ին պատերազմը ավարտված էր և մայիսի 31-ին Գևորգ արքեպիսկոպոսը մեծարվում է Կովկասի պաշտպանության մեդալով»:

Գևորգ արքեպիսկոպոսը (կաթողիկոսական տեղապահ 1941-ից) 1945 թ. հունիսի 22-ին ընտրվում է կաթողիկոս, իբրև Գևորգ Զ: Նա քաջալերում է արտասահմանում ապրող հայերի Սովետական Հայաստան ներգաղթելու ոգևորությունը:

Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը հիշատակում է. «Գևորգ 6-րդը աշխատում էր նաև խաղաղության պաշտպանության ի խնդիր: 1950 թ. օգոստոսի 5-ին Թբիլիսիում նա ստորագրում է Ռուսաց Պատրիարք Ալեքսեյի, վրաց կաթողիկոս Կալիստրատոսի հետ խաղաղության հրովարտակ: Նա մահանում է 1954 թ.»:

Գևորգ Զ-ին՝ 1955 թ. սեպտեմբերի 30-ին միաձայնությամբ հաջորդ է ընտրվում Վազգեն Ա-ն: Հայ Առաքելական Եկեղեցու խաղաղության ի նպաստ ներդրումը ամբողջապես սևեռվում է դեպի կաթողիկոսը: Նա, ի տարբերություն բողոքական Եկեղցու, ներկայացուցիչն է իր Եկեղեցու ողջ գործունեության: Եկեղեցին որոշ առումով կենտրոնացած է նրա անձի մեջ: Նույնիսկ երբ Եկեղեցու նվիրապետության որևէ անդամ ինչ-որ եկեղեցական պարտականություն է ստանձնում, այդ կատարվում է կաթողիկոսի օրհնությամբ: Կաթողիկոսն է, որ Եկեղեցու անդամներին առաջադրում է որոշակի պարտականություններ՝ ի հարկին Գերագույն Հոգևոր Խորհրդի համաձայնությամբ: «Գ. Հ. Խորհուրդը բոլոր կարևոր հարցերում կանգնած է կաթողիկոսի կողքին, որպես խորհրդատու: Սկզբում այն բաղկացած էր միայն եպիսկոպոսներից, բայց 1945-ից սկսյալ մաս են կազմում աշխարհիկ կրթյալ-գիտնական անձինք: Ներկայի Հոգևոր Խորհուրդը կազմված է 4 եպիսկոպոսներից, (2-ը Սովետական Միությունից, 2-ը արտասահմանից) և 3 աշխարհականներից, որոնք դասախոսներ են Հայ գրականության, պատմության և լեզվի»:

* * *

Հայ Առաքելական Եկեղեցին խաղաղության ի նպաստ իր պարտավորությունը իրականացնում է տարբեր կերպով: Մի դեպքում դա ուղղակի կաթողիկոսի կողմից տարված աշխատանք է, կամ նրա կողմից պարտավորեցված Եկեղեցու որևէ անդամի գործունեությունը՝ լինի ճամփորդություն արտասահման, արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն, այսինքն հե-

ղինակավոր անձերի ընդունելություն Սուրբ Էջմիածնում: Մյուս դեպքում գործունեություն ազգային խաղաղասիրական կազմակերպություններից ներս, վոր օրինակ համագործակցություն այլ Եկեղեցիների և Սովետական Միության կրոնական կազմակերպությունների հետ՝ Սովետական Միության խաղաղության կոմիտեի շրջանակում, և վերջապես համագործակցություն կամ անդամակցություն միջազգային խաղաղության կազմակերպություններում, Աշխարհի խաղաղության խորհրդում կամ Քրիստոնեական խաղաղության ժողովում:

Արդ, նման գործունեության ամբողջական պատկերը ներկայացնելը գերազանցում է բանախոսության հնարավորությունները և անկասկած նաև իմ գիտելիքները: Այդ իսկ պատճառով պիտի սահմանափակվեմ առանձին օրինակներ ներկայացնելով:

Նման դեպքերում, ի դեպ իմ տեղեկություններն ամենևին էլ միայն գրականության սահմաններում չեն ամփոփված: Ինձ համար արտակարգ առանձնաշնորհում եմ նկատում Նորին Սրբությանը 1961-ից Պրագայի համաքրիստոնեական խաղաղության կոնֆերանսից սկսյալ բավականին հաճախ հանդիպելը և նրա անձի մեջ հայրաբար ընկեր և ճշմարիտ եղբայր գտած լինելը:

Այսպիսով ես հաճախ եղա ընդունելությունների, որ նա տալիս էր արտասահմանյան այցելուներին, և միշտ տեսնում էի, որ ժողովուրդների միջև խաղաղության խնդիրը վրույցների նախասիրած նյութերից էր: Իր քարոզների մեջ նույնպես նա երբեք չի հոգնում խաղաղությունը ավետարանելուց՝ շատ հաճախ այն առնչելով իր ժողովրդի նկատմամբ 1915 թ. կատարված ցեղասպանության հետ: Ես մեջբերում եմ կատարում Ծննդյան առթիվ խոսված քարոզից. «Հիսուս Քրիստոսի ծնունդով Աստուծո և մարդու միջև կյանքի և խաղաղության մի պայման սկսվեց... Ով փնտրում է խաղաղությունը, նա կգտնի Աստծուն»:

1959 թ. հոկտեմբերին Վազգեն Ա կաթողիկոսը դիմել է Սովետական Միության Մինիստրների խորհրդի նախագահին և ԱՄՆ-ի պրեզիդենտին. այդ դիմումի մեջ ասված է. «Քրիստոնեությունը հիմնականում սիրո և խաղաղության վարդապետություն է մարդկային և հասարակական կյանքում... «և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Քանի որ Ամենայն Հայոց կաթողիկոսը աշխարհասփյուռ համայնքներ ունի հովվելու, ուստի իր համայնքի անդամներին այցելելու նպատակով հաճախ ճամփորդություններ է կատարում արտասահման: Այսպես օրինակ. 1968 թ. մայիս 2-ին Ամերիկա կատարած հովվապետական այցելության ժամանակ հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի ժամանակի գլխավոր քարտուղար Ու. Թանթի հետ Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր շենքում: Ի միջի այլոց կաթողիկոսը ասել է. «Մեր ցանկությունն է, որ ՄԱԿ-ը աստիճանաբար մի ուժ դառնա... միայն խաղաղության ոգին և փոխադարձ բարի կամքն է եղել աղբյուրը երջանկության և մարդկային առաջընթացի»: Հայ ժողովրդի ցեղասպանության 50-ամյակի առիթով կաթողիկոսը իր կոնդակում գրել է (և այս կոնդակը մասնավորապես հատկանշական է, որ Սովետական Միությունը մեծարվում է իբրև խաղաղության պաշտպան իր պատմության մեջ հաճախ ճնշված և վտանգված մի (հայ) ժողովրդի). «Մեր ժողովրդի դարավոր պատմությունը կենդանի մի հուշարձան է, որը վեր է բարձրանում մարդկային հորիզոնում... և մեր սրբազան երկիրը՝ Հայաստանը, ապրում է իր վերապարթոնքը իբրև ազգային պետականություն»: Վստահորեն սա բնորոշ նկարագրություն է և ամեն անգամ, երբ մարդ այցելում է Հայաստան, զարմանքով և ուրախությամբ հաստատում է, թե ինչպիսի նոր առաջընթացներ են արձանագրվել: Բայց այդուհանդերձ խաղաղությունը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր վտանգված է. և այդ զգում ես, երբ տեղեկանում ես, որ սահմանից այն կողմ ՆԱՏՕ-ի հանձնարարականով ամերիկյան ատոմական ռակետներ են ուղղված այդ երկրի վրա, մի երկիր, որը ամեն օր Էջմիածնի մոտ գտնվող ատոմական էլեկտրակայանից հոսանք է մատակարարում Թուրքիային: Ատոմական ռակետներ, ատոմական հոսանքի դիմաց, ինչպիսի փոխանակություն: Սա հիշեցնում է մի դրվագ, որին ես ականատես եղա Սովետական Միության վրա հարձակման նախօրեին: Մինչ գերմանական զորաբանակները արդեն հարձակման հրաման էին ստացել և դարանակալ՝ Բուգ գետի ափին էին, սահմանի մյուս կողմում պայծառ լուսավորված մի կայարանում ցորենի վագոններ էին բեռնավորվում՝ Գերմանիայի համար նախատեսված: Ցեղասպանությունը մասնավորապես մեզ էլ է առնչվում: Սա ոչ առաջինն էր և ոչ 'էլ վերջինը՝ տեխնիկապես կատարելագործված մեր դարաշրջանում: Դրանցից երեքին գերմանացիները ուղղակի կամ անուղղակի մասնակից էին: 1905 թ. ցեղասպանություն էր գործում Հերերոսի նկատմամբ: 1915-ին լռություն պահպանեց Բարձր դռան առջև, թեև ներխուժումը անարդյունք չպիտի մնար: Հայր Լեփ-

սիուսի հիշատակը հուշում է մեկ այդ մասին: Եվ 1945 թ. իրականացվեց դարի մեծագույն ցեղասպանությունը Սովետական Միության, Լեհաստանի և հրեաների նկատմամբ: Մարդկությունը ազատագրվեց գերմանական ֆաշիզմից՝ խաղաղության համար, որը ամեն դեպքում, մնացել է անկայուն, և որի համար պետք է շարունակել պայքարել: Այդ պայքարը մղում է հայոց Եկեղեցին Սովետական մյուս Եկեղեցիների հետ միասին: Կաթողիկոսը և Հայ Եկեղեցու մյուս հոգևորականները մասնակցում էին միջկրոնական խաղաղության մեծ համաժողովներին Սովետական Միությունից ներս: Այսպես խոսք առավ կաթողիկոսը 1982 թ. մայիսին՝ Մոսկվայում գումարված «Կրոնական ներկայացուցիչների հավաք, **կյանքի սուրբ պարգևը ատոմական աղետից փրկելու համար»** համաժողովում: Իր ողջույնի խոսքում նա ի միջի այլոց ասաց. «Մենք հաճույքով ընդունում ենք ի գիտություն, որ արդարության և խաղաղության ոգին արտացոլված պիտի լինեն ՄԱԿ-ի բոլոր գլխավոր փաստաթղթերում... Թող երբեք մայրերը չողբան իրենց որդիների մահը, թող երեխաները խաղաղությամբ քնեն և առավոտյան կվարթ արթնանան»: Կաթողիկոսը իր խոսքը ավարտեց Մատթեոսի Ավետարանի Լերան քարոզի խաղաղարարներին ուղղված երանիով»:

Հելսինկիի խաղաղության համաշխարհային համաժողովում 1965 թ. հուլիսի 12-ին Հայոց Ծայրագույն Պատրիարքը հայտարարեց. «Հնագույն քրիստոնեական Եկեղեցիներից մեկի կրոնապետի հանգամանքով ցանկանում ենք ընդգծել, թե ինչպիսի նշանակալի դեր կարող են ստանձնել Եկեղեցիները՝ խաղաղության մթնոլորտ ստեղծելու համար: Խաղաղության մթնոլորտ ստեղծելու առաքելությունը պարզապես պատկանում է Եկեղեցուն, այն մտնում է նրա Սուրբ պարտականությունների մեջ»:

Հայ Առաքելական Եկեղեցու և նրա կաթողիկոս Վազգեն Ա-ի ջանքերը խաղաղության ի նպաստ արժանացել են 1966 թ.՝ խաղաղության պահպանության Ստոկհոլմյան կոմիտեի **Ժոլիոթ Քյուրի Փրայսեզ** պարգևին, 1968 թ.՝ **Սովետական Միության Պատվո Շքանշանին**, 1978 թ. **«Ժողովուրդների բարեկամության»** բարձր պարգևին:

* * *

Քրիստոնեական խաղաղության համաժողովը հիմնվել է 1958 թ.: Մեկ տարի ընդմիջումներով գումարված երեք անընդհատ նախաժողովներից հետո 1961 թ. կայացավ առաջին խաղաղության համաքրիստոնեական համաժողովը, որին իր մասնակցությունը բերեց Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Պատրիարք-կաթողիկոս Վազգեն Առաջինի: Կաթողիկոսը խոսեց «Խաղաղությունը և Քրիստոնեական արդարությունը» թեմայով: Նա ասաց, «Արդարև հնարավոր չէ խաղաղ գոյավիճակ հուսալ կամ ապահովել անհատի կամ հասարակության համար առանց արդարության... քանզի արդարության պտուղն է կյանքի ծառը» (Առակաց ԺԱ. 30): Շարունակելով իր մտքերը խաղաղության շուրջ կաթողիկոսը բնութագրեց այն իբրև քրիստոնյաների արժեքավոր ժառանգություն: «Խաղաղության իդեալը մի աշխարհ է, մի աշխարհայացք... Հանդես գալ ընդդեմ պատերազմի, նշանակում է խոնարհվել Աստուծո կամքի առջև»: Հայ Եկեղեցին՝ 1961 թ. սկսած օգտաշատ կերպով գործակցում է Խաղաղության քրիստոնեական համաժողովին: Մի անգամ ժողովին մասնակցություն է բերում իր պատգամավորների միջոցով, ուրիշ անգամ հրավիրում է, որ այն կայանա Հայաստանում: Այդպես պատահեց միջազգային քարտուղարության, ինչպես նաև մյուս մասնաճյուղերի հետ, առանձնակի պատասխանատվություն ստանձնեց Հայ Եկեղեցին Միջին Արևելքի մասնաճյուղի համար, որի ժողովները բազմիցս գումարվեցին Հայաստանում: Մասնաճյուղի նախագահը ներկայացնում էր Հայ Եկեղեցին: Վերջապես անհրաժեշտ է նաև հիշատակել, որ Հայ Եկեղեցին նաև ֆինանսական նշանակալի օգուտ է տվել Խաղաղության համաքրիստոնեական համաժողովին: Ընդհանուր հայտարարի բերելով կարելի է ասել, որ փոքրիկ Հայ Եկեղեցին մեծ նպաստ ունի աշխարհի խաղաղության և արդարության նվիրված աշխատանքներում: Այս բոլորի կողքին նաև Հայ Եկեղեցու գործունեությունը Եկեղեցիների համաշխարհային խորհուրդում, որտեղ Հայ Առաքելական Եկեղեցին ակնառու տեղ է գրավում ոչ միայն որպես «պատվիրակություն», այլև «ամենանշանավոր» և «հոգևոր կենսունակություն ունեցող» արևելյան ազգային Եկեղեցի:



ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 4-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն:

Մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ Ս. Ղևոնդյանց անունն ու նահատակությունը գրավում են բացառիկ կարևոր տեղ: Ս. Ղևոնդյանց նահատակությունը և խնկելի հիշատակը սերտորեն կապված են 451 թվականի Վարդանանց հերոսամարտի հետ:

Նրանք էին՝ Ս. Ղևոնդյանք, «Վասն Յիսուսի և վասն Հայրենեայց» մղված հերոսական պայքարի ոգեշնչողներն ու կազմակերպիչները: Եթե մինչև Ավարայրի հերոսամարտը հայ հոգևորականները բանակ էին մտնում ճակատամարտի միջոցին որպես աղոթողներ, Ավարայրում հոգևորականներն էլ ռազմի դաշտ իջան որպես զինված մարտիկներ՝ կռվելու ճշմարտության և ազատության թշնամիների դեմ:

Վարդանանց քաջամարտիկ հայրենասերների հետ նահատակվեցին նաև Ս. Ղևոնդյանք, «զի զնոյն նահատակութեամբ նահատակեցաւ և Աշխարհս Հայոց» (Փարպեցի):

Ս. Ղևոնդյանց նահատակ հոգևորականների մեջ բոցաշունչ եկեղեցական էր Վանանդեցի Ղևոնդ երեցը, թե՛ խոսքով և թե՛ գործով, «Աւարայրի արծիւ, այրն հաւատարիմ և ճշմարտապաշտ»:

Ղևոնդ երեցի անունով պրբագործված նահատակ հոգևորականների ամբողջ խումբը կոչվեց «Ղեւոնդեան քահանայք»: Ս. Ղևոնդյանք նահատակվեցին 454 թվականի հուլիս ամսի 31-ին, Ապար աշխարհի Ռևան գյուղի մոտ, Վարդանանց նահատակությունից երեք տարի հետո, բանտի, աքսորի, չարչարանքի դաժան տարիների կենդանի նպատակությամբ:

Նահատակված հոգևորականների մեջ էին՝ Հովսեփ կաթողիկոս Հողոցմեցին (Վայոց ձորից), Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսը, Վանանդեցի Ղևոնդ երեցը, Եղեգիկցի Արշեն երեցը (Բագրևանդ գավառից), Մուշե երեցը (Աղբակից), Սամվել երեցը (Այրարատի Արած գյուղից), Քաջաջ սարկավագը (Ռշտունիքից), Աբրահամ սարկավագը (Արած գյուղից) և Դենեպետը (Նյուշապուհ քաղաքից):

Ս. Ղևոնդյանց լուսապայծառ անունն ու սուրբ հիշատակը, որպես հայ հավատքի քաջարի նահատակների և հայրենասեր հոգևորականների, նվիրական ու թանկ են եղել մեր պատմության ողջ ընթացքում, հատկապես հայ հոգևորականության և մասնավորաբար Հայ Եկեղեցու՛ կյանքի համար: Ս. Ղևոնդյանց անձնուրաց նահատակությունը, մահվան դեմ քրիստոնեական խիզախումը հանուն հայ հավատի և Հայրենի սուրբ հողի, խորունկ ներշնչման և խանդավառության անսպառ աղբյուր են հանդիսացել մեր լուսաբնակ հավատավոր նախնիների և նախնյաց ավանդույթների հավատարիմ ժառանգորդների համար:

Մայր Աթոռում այս տարի ավանդական հանդիսությամբ նշվեց Ս. Ղևոնդյանց տոնը, որին մասնակցեցին Մայր Աթոռի և Արարատյան թեմի քահանայից դասերը:

Օրվա մեծ տոնի առթիվ, Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Արա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍՈՎ

ռատյան թեմից Տ. Գրիգոր քին. Ավետիսյանը և ոգեշունչ քարոզ խոսեց. «Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն, և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն» (Սաղմոս ՃԼԱ 16) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի և Արարատյան թեմի քահանաները առաջնորդվեցին Վեհարան, որտեղ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը Վեհափառ Հայրապետին ուղղված խոսքում հայտնեց քահանայից ծառայական պատրաստակամությունն ու նվիրումը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, օրվա տոնի առթիվ ողջունելով քահանաներին, իր խոսքում նշեց Վարդանանց հերոսամարտում հայերի բարձր բարոյական արժանիքների մասին. անդրադարձավ հավատքի և հայրենիքի անձնվեր մարտիկ Ղևոնդ երեցի նկարագրին, նշելով, որ նա առաջինն էր, որ իր սուրը բարձրացրեց հանուն ապատության՝ ոգևորելով նույնիսկ Վարդանին: Եզրափակելով իր խոսքը Վեհափառ Հայրապետը ասաց. «Վարդան ու իր քաջերը ոչ թե պարտվեցին, այլ նահատակվեցին, իսկ քրիստոնեական ըմբռնումով ամեն նահատակություն հաղթանակ է»:





Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 6-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոց Վարդանանց կօրավարացն մերոց հավար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Մայր Աթոռում, ինչպես միշտ, այս տարի ևս առանձին հանդիսավորությամբ նշվեցին Վարդանանց տոնն ու Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Փետրվարի 5-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվեց Վարդանանց նախատոնակը: «Նորահրաշ» շարականի տպավորիչ երգեցողությամբ մի անգամ ևս բոլորի սրտերում պայծառացան հայրենիքի և հավատքի անվեհեր մարտիկների անունները:

Փետրվարի 6-ին, հինգշաբթի, ժամը 11-ին, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, սկըսվեց հանդիսավոր ս. պատարագ: Ժամը 12-ին, եկեղեցական թափորով Մայր տաճար իջավ Ամենայն Հայոց Հայրապետը: Օրվա պատարագիչն էր հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը, որը հավարտ ս. պատարագի արտասանեց Վարդանանց հերոսամարտին նվիրված հետևյալ ոգևորիչ և հայրենասիրական քարոզը:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»: «Զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զկօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հապեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յաղթութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք» (Եղիշե, Ե եղանակ):

Մայիս ամիս, 451 թվական, գարնանային մի պայծառ գիշեր էր: Աստղապարդ երկինք, լիալուսին և մի անդորր, խաղաղություն, ինչպես մի մեծ դեպքից առաջ է լինում՝ երկրաշարժ թե մեծ հրաշք: Հղի էր ժամը: Ավարայրի դաշտում, մի բլրակի վրա գիշերային ժողով էր: Վարդան Մամիկոնյանը, հայոց սպարապետը, իր զորականներով շրջապատված, իր վերջին պատգամները էր տալիս նրանց և ուղարկում հանգըստանալու:

Մենակ էր Վարդանը, մենակ՝ իր մտորումների և իր հուզումների հետ: Արդյոք ճի՞շտ էր իր առած քայլը, արդյոք ինքը իրավունք ունե՞ր մի ողջ ժողովրդի ճակատագիրը վճռելու: Նայում էր հեռուն, այնտեղ երևում էին հայկական լեռները, որտեղ Հայկ Նահապետը կռեց իր ազատությունը, և այդ անկախությունը պահելու համար իր աղեղով պայքարեց հարավային Բելի դեմ: Այդ նույն լեռների վրա իր պատիվն ու կյանքը պահելու համար՝ Արա Գեղեցիկ իր կյանքը զոհաբերեց:

Իր ընտանեկան պատմությունը նա շատ լավ գիտեր: Մամիկոնյան տոհմը միշտ թագավորի կողքին էր և Լուսավորչի՝ պաշտ-

պանելու համար քրիստոնեությունը, պաշտպանելու համար հայ ժողովրդի ինքնությունը: Մեծերի անունները շատ էին Մամիկոնյանների տոհմում. Վաչե, Վասակ, Մուշեղ:

Կար սակայն դառն հիշողություն: 428 թ. վերջ գտավ Արշակունյաց հարստությունը: Եվ այդ օրվանից պարսիկները Հայաստանը նկատում էին իրենց հողի մի մասը: Եվ հասկանալի է, որ պիտի չհանդուրժեին՝ հայ առանձին կրոն, հայ առանձին իշխանություն, հայ առանձին մշակույթ: Եվ սկսվեց ճնշումը: Բայց հայերը դիմանում էին: Եվ երբ պարսիկները տեսան, որ մեքենայությունները չօգնեցին, Հավկերտը մի նամակ գրեց՝ պահանջելով հայերից, որ միանգամ ընդմիշտ հրաժարվեն քրիստոնեությունից: Եվ հայերը պատասխանեցին այդ նամակին. **Մենք ձերն ենք մարմնապես, բայց հոգեպես մենք միայն մեկ Աստված ունենք և միայն նրան ենք պաշտում և ծառայում:**

Եվ հայ նախարարները Տիրոն կանչվեցին հաշվեհարդարի: Եղավ առերես ուրացում: Վերադարձան Հայաստան մոգերով, մոգպետներով, իբր թե տարածելու մազդեական կրոնը Հայաստան աշխարհում: Սակայն ժողովրդի ձայնը, ժողովրդի արյունը այլ բան էր պահանջում: Ժողովուրդը պահանջում էր ապատորեն իր քրիստոնեական կրոնը պաշտել: Հայ ժողովրդի համար այլևս քրիստոնեությունը զուտ խոսք չէ՛ր, արտաքին հագուստ չէ՛ր, իր արյունն ու միսն էր դարձել:

Վարդանը գիտեր իր մեծ հորից՝ Սահակ Պարթևից, որ սա այն երկիրն էր, ուր Աստված Իր Որդուն էր ուղարկել, այս տաճարն էր նախագծել, որպես Իր ժողովուրդը մյուս քրիստոնյա ժողովուրդների շարքին, որ Աստված հայ ժողովուրդը ապատելու համար Իր Սուրբ մատով գրել էր հայկական այբուբենը և Մեսրոպի Սուրբ հանճարին և մըտքին հանձնել այն, որպես հայ ժողովրդի հավիտենականության գրավական: Եվ սպարապետը չէր կարող իր ժողովրդի դեմ գնալ:

Մեկդի էր նետել կեղծ ուրացությունը: Հաշվի էր առել և՛ քաղաքականությունը, և՛ զորությունը: Մեկնել էր հյուսիս՝ Վրաստան և Աղվանք՝ այն կողմերից մաքրելու բոլոր պարսկական զորակայանները, որպեսզի թիկունքն ապահով լինի, հյուսիսային ցեղերի հետ դաշինք կնքեց, որպեսզի այնտեղից նրանք սպառնային պարսից աշխարհին: Նույնիսկ Բյուզանդիոն դիմեց՝ քրիստոնյա պետության օգնությունը ունենալու համար: Սակայն քրիստոնյա Բյուզանդիոնը, վախկոտ ու թուլամորթ իր կայսրով, աստվածաբանական ժողովների մեջ էր:

Վարդան մտածում էր. իր վրանի առջև. ինքը, իր ժողովրդի ընտրյալը՝ աստղապարդ երկինքը և իր Աստվածը, ընդդեմ հսկոր Արյաց արքայի բանակին: Եվ այդ մտորումների մեջ, այդ հոգեկան խռովքի մեջ մի տեսիլք ունեցավ. իրեն երևաց այն քաջածանոթ դեմքը, որ իրեն սովորեցրել էր Աստվածաշունչը և Աստվածային պատգամները: Դա իր մեծ հայր Սահակ Պարթևն էր, որ նրան ասաց. «Մահ իմացեալ անմահութիւն է», գիտակցված մահը մահ չէր սովորական, այլ անմահություն: Այս մեկ միտքը, Աստվածային միտքը, փարատում էր նրա մեջ ամեն մի մտահոգություն, և կարծեք այլևս իր մարմինը չէր դիմանում իր հոգու ընդվզումին: Կամենում էր մենակ խուժել պարսկական բանակի մեջ և ոտնատակ անել: Այդ որպեին լսվեց սաղմոսների երաժշտությունը, երգը: Հայ եկեղեցականները ամբողջ գիշեր բանակը ոգևորում էին իրենց սաղմոսներով և հաղթական երգերով:

Հասել էր ժամը, երբ Վարդան Մամիկոնյանը իր բանակի հետ միասին հաղորդվում էր: Հաղորդվում էր Տիրոջ արյամբ և մարմնով, որպեսզի ինքը պատարագվեր հանուն իր ժողովրդի և հանուն իր հայրենիքի: Եվ իր ոգեշունչ ճառի մեջ Վարդանն ասում է. «Ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը»: Վարդան Մամիկոնյան ճշմարտության, արդար իրավունքի համար էր կռվում:

Եվ առավոտյան երկու հսկա ալիքների նման բանակները իրար զարնվեցին: Այդտեղ ոչ թե մեկը մյուսին չէր հաղթում, այլ քաջերն էին իրենց քաջությունը ցույց տալիս: Սուրեր, տեգեր, նիզակներ, նետեր՝ և Վարդանը իր սուրով ու խաչով իր զինակից մարտիրոսների հետ գնաց դեպի հավիտենականություն՝ արժանանալով փառա՛ց պսակին. և այդ օրվանից Վարդանը հավիտենականորեն շարունակում է իր ընթացքը ամեն մի հայու հոգու մեջ:

Վարդանանց պատերազմը ճակատամարտ էր միայն. մեկ օրվա ճակատամարտ: Եվ հայերը իրենց ուժով և հավատքով կարողացան եռապատիկ պարսիկներ տապալել: Ճիշտ է, որ հայերը պարտվեցին այդ ճակատամարտում, սակայն պատերազմը չավարտվեց: Ամբողջ 30 տարի ամեն մի հայկական բերդի վրա, ամեն մի հայկական բարձունքի վրա Վարդանի հոգին խրախուսում էր հայոց բանակի մնացորդներին: Եվ վերջ ի վերջո, նրանք կարողացան Վահան Մամիկոնյանի միջոցով Նվարսակի դաշնագրով ստանալ այն, ինչ որ պարսիկները աշխատում էին, խլել: Եվ այդ նույն Վարդանանքի հոգիով է, որ մեր դարասկզբին հայ ժողովուրդը պայքարեց հանուն իր գոյատևման Սասունում, Մուշում, Շապին Գարահիսարում և Մուսա դաղում: Պայքարեց, որպեսզի

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

իր իրավունքը պաշտպանի: Եվ պայքարելով նվաստեց, քաշվեց-հասավ այս սուրբ Հողը. նենգ թշնամին փորձեց այս հողն էլ գրավել և վերջ տալ լույսին: Բայց խավարը երբեք ու երբեք չի կարող վերջնականապես հաղթել լույսին:

Մենք լույսի որդիներ ենք, և կհավատանք լույսի վերջնական հաղթանակին խավարի վրա: Եվ հայ ժողովուրդը ի մի կանգնեց եկեղեցականներով, ռամիկով, գյուղացիով, և Սարդարապատում պաշտպանեց իր արդար իրավունքները, որպեսզի բարձրանա կողմն ճշմարտության, որ մարմին ստացավ 1920 թվականի նոյեմբերով:

Այսօր Խորհրդային Հայաստանը խաղաղ է: Այսօր ամեն ինչ, որ նրանք երազեցին, կա և գոյություն ունի: Վարդանանք և բոլոր նրանք, որոնք զոհվեցին, զոհվեցի՛ն, որպեսզի մենք Հայրենի՛ք ունենանք, որպեսզի մենք Հո՛ղ ունենանք, որպեսզի մենք մշակո՛ւյթ ունենանք, և որպես ժողովուրդ ուրիշների կողքին պատվով՝ բաց ճակատով ապրենք: Հրաշք է այսօր մեր գոյությունը: Բարձունքե բարձունք պիտի բարձրանանք, լույսի ամրոցներ պիտի կառուցենք, պիտի զորանանք:

Հետևաբար սիրելի հավատացյալներ, Վարդանանք ողջ են այսօր. ողջ են մեր ամեն մեկ հայու հոգու մեջ, և մենք պետք է շարունակենք նրանց կիսատ գործը մեր պայմանների և մեր ժամանակների ձևերով:

Այսօր, սիրելի հավատացյալներ, տոնն է ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի: 30 տարի շարունակ Վազգեն Վեհափառ Հայրապետը բազմեց Լուսավորչի գահին: Կարծեք իսկապես ձայն բազմաց, ձայն Աստուծո էր: Ժամանակը ճիշտ մարդը ընտրեց Հայրապետական գահի վրա: Աստված ճիշտ մարդը ընտրեց, հայ ժողովուրդը ընտրեց ճիշտ ժամանակին: Վազգեն Վեհափառ 30 տարի շարունակ իր աչքի լույսը, իր հոգին կաթիլ առ կաթիլ, հյուլե առ հյուլե քամեց և տվեց Լուսավորչի կանթեղին, որպեսզի Լուսավորչի այդ կանթեղը միշտ, բոլոր մրրիկների մեջ իսկ լույս տա հայ ժողովրդին՝ և՛ այստեղ, և՛ սփյուռքում, որպեսզի նրանք տեսնեն, հասկրնան Ս. Էջմիածնի իրողությունը՝ ըմբռնեն Հայ Եկեղեցու դերն ու նշանակությունը. և ըմբռնեն հայկական այս հողի արժեքն ու նպատակը: Հետևաբար մենք կշնորհավորենք մեր Հայրապետի անվանակոչությունը: Կշնորհավորենք մենք և կմաղթենք ի սրտե, որ Աստված իրեն երկար կյանք և առողջություն պարգևի, որպեսզի, իսկապես, Լուսավորչի կանթեղը շարունակե գոյատևել և լույս սփռել մեզ բոլորիս»:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն՝ կազմակերպված հոգևոր ճեմարանի տեսչության կողմից:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, ուխտավորներ և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությունը սկսվեց Վեհափառ Հայրապետի «Հայ մեր»-ով, որից հետո հնչեց Հայկական ՍՍՀ պետական հիմնը: Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ հոգեշնորհ Տ. Հայկակուն վրդ. Նաջարյանը:

«Կամոքն Աստուծո, այս տարի ևս հավաքվել ենք՝ տոնախմբելու Վարդանանց հիշատակը: Եթե փորձենք մեր ժողովրդի պատմությունը ամփոփել մի նախադասությամբ՝ այն կհնչի որպես «լինել թե չլինել»: Արդարև, մեր ողջ պատմությունը մաքառում է եղել. մաքառում լինելու, լինելով լույս տալու, ստեղծելու, կառուցելու, թեկուզ և այդ լինելը եղել է մահանալով, ավերվելով, կոտորվելով: Մեր մաքառման ճանապարհին Վարդանանքը պատմականորեն շատ փոքր, մի աննշան դեպք է, որի կողքով օտարները անտարբերությամբ կանցնեին: Սակայն Եղիշեն զինված իր մեծ ուսուցիչների՝ Սահակի և Մաշտոցի լույսի զենքերով, խորասուզվեց Աստվածաշնչի մեջ, գտավ այն միտքը, որով Վարդանանքը կերպարանափոխվեց խորհրդի:

Նա թարգմանը հանդիսացավ համաժողովրդական այն գիտակցության, թե մեռնելով կարելի էր անմահանալ: Ահա խորհուրդը Վարդանանց. մի հավիտենական ճշմարտություն, որին հայերը դիմել էին իրենց ճակատագրական և օրհասական պահերին՝ լինի դա Սարդարապատում թե Հայրենական մեծ պատերազմում:

Պատմության մեջ գրեթե աննախադեպ է, որ մեր հայրենիքը 40 տարվա խաղաղության մի շրջան ունենա: Ճիշտ է, որ այս կարճ շրջանում զոհողությունների մեծ գնով հրաշքների հասնող բարձունքի է հասել մեր հայրենիքը, սակայն այն դեռևս քիչ է:

Մենք մեծ անցյալ ունենք, սակայն և մեծ կորուստներ ենք ունեցել, հետևաբար հայը իրավունք չունի բավականանալու քչով:

Յուրաքանչյուր հայ իր ուսերին կրում է ոչ միայն իր պատմությունը, այլև այն տասնյակների, հարյուրավորների և հազարավորների, որոնք այսօր կարող էին լինել, բայց ընկան. գիտակցորեն կոիվեցին, որ մենք լինենք և շարունակենք նրանց գործը: Եվ ով նկրտում է նսեմացնել այսօրվա մեր պետականությունը, անտեսում է նրանց հիշատակը, մեղանչում՝ թափված արյան դեմ:

Միայն ու միայն համառ ու նվիրական աշխատանքով կարող ենք պարկերես մնալ Վարդանանց և նրանց նմանների հիշատակի առաջ, և արժանի լինել արյունով ու քրտինքով շաղախված այս սուրբ հողին, մեր հրաշքների ու նպատակների միակ, ճշմարիտ գրավականին»:

Ապա Նաիրի Զարյանի «Զայն հայրենական» պոեմից մի հատված արտասանեց հոգևոր ճեմարանի Ա լսարանի սան Զավեն Ղարիբյանը:

Այնուհետև Վարդանանց հերոսամարտի խորհրդին նվիրված պատմական ակնարկով հանդես եկավ հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս Կարեն Մաթևոսյանը: Նա ի միջի այլոց ասաց. «Վարդանանց սխրանքի՝ Ավարայրի հերոսամարտի մասին խոսել, նշանակում է թափանցել ամեն մի հայրենասեր հայի ներաշխարհը, որովհետև մեր բազմադարյան պատմության այդ փառավոր էջը՝ իր սկիզբով, ընթացքով և ավարով, իր պատճառով, գաղափարով և ընդհանրացած խորհրդով, շատ է հայկական: Այն հայկական է անգամ իր հիշատակի չխամրող երկարակեցությամբ, որովհետև շատ ժողովուրդներ կան, որ իրենց պատմության ընթացքում բազում բախտորոշ ճակատամարտեր են մղել, բայց ես չգիտեմ, կա՞ արդյոք մի ժողովուրդ, որ այնպես տնականորեն և նախանձախնդիր կերպով հիշի իր կենսագրության բախտորոշ գոյամարտերից մեկը՝ ինչպես հայերն են հիշում Ավարայրը:

Պատահական չէ, որ Եղիշեն Վարդանանց պատերազմն անվանում է «Հայոց պատերազմ», քանզի ոչ թե մի թագավոր էր կըռվում մի այլ թագավորի դեմ, հանուն փառքի ու իշխանության, այլ մի ողջ ժողովուրդ էր ոտքի ելել բազմագլուխ մի վիշապի դեմ՝ հանուն իր ինքնության ու հավատի:

451 թվականին դեռ հայոց մեջ թարմ էին 387 թվականին երկրի բաժանման՝ երկատման՝ 428 թվականին, հայ արքայատոհմի անկման տխուր հիշողությունները: Սակայն մի զարմանալի կանխատեսությամբ հայ ժողովուրդը գտել էր կոյատևումն ապահովող հզորագույն վենքը՝ մաշտոցյան այբուբենը— վենքը, որի ամրության առջև փշրվեցին հետագա բոլոր դարերի նվաճողների պողպատե սրերը:

Ընդամենը 23 տարի առաջ էր հնչել Սահակ Պարթևի մարգարեական հորդորը. «ինչպե՞ս կարելի է, որ իմ ախտավոր ոչխարը փոխեմ ուրիշի առողջ գպանի հետ, որի հենց առողջությունն է մեզ համար պատուհաս»: Թագավորական տունն այլևս չկար և ահա եկել էր պարսից «առողջ գպանը» և պահանջում էր հավատափոխություն: Զնայած եղան տատանվողներ, բայց հայոց պատասխանը միանշանակ էր. «Այս հավատից մեզ ո՛չ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված»:

Եվ որովհետև ոչ բռնակալն էր ընդունում հակաճառություն, ոչ էլ ընդվզողներն էին թուլակամ, հարցը պիտի լուծվեր մարտի դաշտում: 451 թվականի մայիսի 26-ին, հայոց Արտավ գավառում, Տղմուտ գետի մոտ, իրար դեմ ելան երկու զորաբանակ: Հայրենաշունչ պատմիչի՝ Եղիշեի ճարտար գրչի շնորհիվ, մենք այժմ գիտենք ճակատամարտի մանրամասները. անգամ հայոց բանակի հրամանատարի՝ քաջն Վարդանի խոսքը՝ ուղղված մարտիկներին: Եվ ամեն անգամ այն կարդալիս դժվար է չզարմանալ հայ զորավարի հոգու ազնվության, վեհանձնության վրա: Լսվա՞ծ բան է, որ մի զորավար, զինվորներին դիմելով ասի. «Զեզանից շատերը քաջությամբ ինձնից առավել են...»: Տեսե՞լ ենք մենք մի հրամանատարի, որ կռվից առաջ, ինքնագովության փոխարեն, զորքին ասեր. «Շատ պատերազմներ եմ մղել ես և դուք էլ ինձ հետ, տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ...»:

Բայց Վարդանի ճառի բուն գաղափարը ոգևորող էր ու համոզիչ. «Եթե մահկանացու հրամանատարի համար... քաջ գործեր էինք կատարում, ինչքա՞ն ավելի ևս [պետք է կատարենք] մեր անմահ թագավորի համար, որ ...բոլոր մարդկանց դատելու է իրենց գործերի համեմատ... Մեր զորավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների զորագլուխը...»:

Ճակատամարտն անողոք էր ու անզիջում: Հայերի կողմից գուցե ավելի հախուռն ու կատաղի, պարսից կողմից՝ ավելի սառնասիրտ ու դաժան: Երկուստեք մեծ զոհեր եղան: Առյուծաբար կռվեց և ընկավ նաև Վարդանը... «Եվ որովհետև ժամանակը գարնանային էր, ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահոս արյունով» և մեծ տրտմություն պատեց Հայոց աշխարհին: Սակայն հայերը «քաջվեցին երկրի զանազան ամուր վայրերը»՝ շարունակելով կռիվը բռնակալի դեմ: Նրանց արդար պատերազմը շարունակվեց երկար ու ձիգ տարիներ և միայն Վահան Մամիկոն-

յանի ժամանակ պսակվեց վերջնական հաղթանակով:

Ավարայրի գնահատման հարցում ընդունված տեսակետն է, որ հայերը ռազմական պարտություն կրեցին, բայց բարոյական հաղթանակ տարան, որովհետև պարսիկներին չհաջողվեց իրագործել իրենց նախատեսածը: Կան նաև այլ կարծիքներ: Սակայն ըստ իս հայերը բարոյական հաղթանակ էին ձեռք բերել՝ մինչև Ավարայր. ճակատամարտը ռազմական բախման գագաթնակետն էր միայն. **Հակերտի հրովարտակի մերժումը և որոշման մեջ անդրդվելի մնալը**՝ սա էր էականը և սա էր, որ հարատևեց նաև Ավարայրից հետո՝ տարիներ, տասնամյակներ, նաև դարեր:

Դրանից հետո շատ փորձություններ պայթեցին Հայոց աշխարհի վրա: Տեղ կար, որ հայորդիները վենքը ձեռքներին հաղթեցին թշնամիներին, տեղ էլ կար, որ թշնամիներն հաղթեցին: Բայց որքան էլ թշնամիներն հաղթեցին, հաղթեցին միայն ֆիզիկապես՝ քանզի Ավարայրից ի վեր, գտնված էր բարոյական հաղթանակի բանալին՝ **կարելի է նահատակվել, բայց չդավաճանել սեփական խղճին ու հավատին, մայրենի լեզվին ու հայրենի հողին:** Ազգային ոգու անսասանության մի ողջ դպրոց է Վարդանանց «Հայոց պատերազմը»:

Որքան հեռանում ենք Ավարայրից, այնքան ավելի ենք համոզվում, որ այն սոսկ պատմական մի եղելություն չէ, այլ մի հավերժող ոգի, որն արդեն 1500 տարի անդավաճան ուղեկցում է իր ժողովրդին, որպես նրա կենսահաստատ գոյի ոսկե անկյունաքար: Այժմ, երբ ժամանակի փոթորիկների միջից, փյունիկ թռչունի պես հառնել է նորօրյա Հայաստանը և հին ու նոր ազգերի հետ կանգնել է 21-րդ դարի նախաշեմին, մեր սրբազան պարտքն է վառ պահել հիշատակը բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը նվիրեցին այս լեռնառատ երկրի հավերժության համար: Եվ կարելի է վստահորեն ասել, որ զուր չեն եղել այն բյուրք բյուրոց զոհերը, որ դար ու դարեր գումարվել են Ավարայրի 1036 նահատակների «անմահների գնդին»: Վկան արդի Հայաստանը, իր ծաղկուն ներկայով, և լուսավոր հույսերով ողողված ապագայով»:

Ապա ճեմարանի սաներ Ռազմիկ Իսախանյանը և Արամայիս Հունանյանը գրաբար և աշխարհաբար հատվածներ արտասանեցին Եղիշեի «Հայոց պատմությունից»:

Այնուհետև «Հայ Եկեղեցին և Ավարայրը» թեմայով ելույթ ունեցավ Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը: Նա մասնավորապես ասաց. «Այսօր, երբ 1500 և ավելի տարիների հեռավորությունից մեր հայացքն ենք ուղղում Վարդանանց խորհուրդ խորին հերոսամարտին՝ վերարժևորելու այն մեր օրերի գաղափարական մտահորիզոնով, ինքնաբերաբար պահանջ է առաջանում պատասխանել որոշ հարցերի. ինչի՞ց և ինչպե՞ս սերվեց Վարդանանց ու Ղևոնդյանց Ոգին Ավարայրի, և թե ի՞նչն էր, որ դարձրեց այն սրբազան խորհուրդ, մնայուն արժեք հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ:

Այսօր, երբ խորաթափանց մտքով Վարդանանց-Ղևոնդյանց Ոգուն ականջ դրած ընթանում ենք դեպի խորհուրդն Ավարայրի, մեր առաջ պարզորեն վեր է խոյանում խորանն այն լուսո՝ ավագանը Լուսավորիչ-Մեսրոպյան, ուր մկրտվելով և Աստվածային շնորհներ զգենալով մանուկ քրիստոնյա Ոգին պիտի դառնար աննկուն ու անկոտրում: Ընդամենը 150 տարի առաջ էր, որ քրիստոնեական լույսը ողողելով հայոց երկնակամարը, փարատեց հեթանոսական խավարի վրա թանձր մթությունը: Այդ լույսն էր, որ ճառագեց Սահակ—Մեսրոպի մտքից ու հոգիներից ներս և նրանց ջանքերով քրիստոնեությունը հայացավ և հայությունը քրիստոնեացավ: Կենարար լույսն այդ կրելով իր հոգում, հայն այն բաշխեց ամենքին ու դարձավ լուսատու ջահ Արևելքի: Սակայն ջահն այդ հրացոլք ատելի դարձավ նենգամիտ խավարասերներին, որոնք իբրև վայրագ հողմեղ ու սառնաշունչ քամիներ խուժեցին Հայոց աշխարհ: Ընկավ հայոց թագավորությունը, սարսռաց պարսից ջահերի ոտքի կոխան դարձած հողը հայրենի: Սակայն երբեք երկյուղ չապրեց հավատը հայի: Եվ որքան էլ խոցել ցանկացան՝ մեռցնելու համար, հավատը հրաշագործեց և ապացուցեց, որ ինքն անմեռ է հայ ժողովրդի հոգում:

Ու երբ Հակերտ Բ 451 թվականին իր ազգայնամոլ ձգտումներով ու կրոնական մոլեռանդությամբ փորձեց հրով, սրով ու աքսորով նվաճել հայ ժողովրդի կամքը, շրջթայել նրա ապատությունը, տեսավ իր դեմ միակամ, միասիրտ ու միահոգի կանգնած մի ածու պատրաստ նահատակության ի սեր իր հայրենիքին ու հավատին: Չկար այլ միջոց, ապավինած Տիրոջ կամքին իջանք Ավարայր, ելանք դեմ-դիմաց ամենակուլ վորքին պարսից, ոչ միայն հաղթելու, այլ նաև մեռնելու համար: Քանզի հավատացած էր հայը, որ հանուն քրիստոնեության իր հեղած արյունը, սերմը պիտի լինի նորածին քրիստոնեական Եկեղեցու: Այո ընկան քաջորդիներն հայոց, ընկավ Վարդանը՝ կրծքին Ավետարան, ընկավ դասով իր քահանայից սուր ի ձեռքին Ղևոնդ երեց, որոնց հերոսական մարտիրոսության շնորհիվ միշտ կանգուն ու կենդանի մնաց Հայրենիքը հայր, Եկեղեցին մայր ու ծոցածին նրանց վավակ

լեկուն Մեսրոպյան՝ և հավատը Լուսավորչյան: Ավարայրը, որ թերևս կարելի է համարել քրիստոնյա աշխարհի առաջին ռազմական մեծ բախումը՝ լույսի ու խավարի, կյանքի ու մահվան, հավատի ու հավատուրացության, հայրենիքի ու ստրկացման իրարամերժ գաղափարների, մեկ անգամ ևս հաստատում է Հիսուսի՝ մեռնելով ապրելու պատգամը, որ ոսկեծղիկն Եղիշեն բանաձևվել է՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: Անցել են դարեր, բայց Հայաստանյայց Եկեղեցին այսօր Վարդանանց ու Ղևոնդյանց արյունով գրված «Վասն հաւատոյ ու Հայրենեաց» խաչվառը ձեռքին ամենուր և ամենքին ներարկում է Ոգին այդ անմահ և պատգամում՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել չարին դիմակայելու և, թե պետք է, նահատակվելու «Վասն հաւատոյ և Հայրենեաց»: Եվ մենք որպես միաբան այս սրբական հաստատության, չէինք ցանկանա, որ երբևիցե անգամ իր մտքում հայն ասեր, թե Ավարայրը անցյալ է, որովհետև այսօր հաղորդակցության մեջ ենք մտնում նրանց խոսուն ու կենդանի հոգու հետ, և դա կենդանի էությունն է մեր: Որպես միաբան այս սրբական հաստատության, չէինք ցանկանա, որ երբևիցե անգամ իր մտքում հայն ասեր, թե Ավարայրը անցյալ է, որովհետև հայն այսօր ունի Սփյուռք, ուր զավակներն իր հարազատ ապրում են ու մաքառում գոտեպնդված ու ներշնչված Ոգով Ավարայրի, պահպանելու օտարության մեջ հայրենի հավատքն իրենց, և լեկուն մայրենի, այն վառ գիտակցությամբ, որ «Քանզի մի է մայր մեր եկեղեցի որ երկնեացն վմեկ, և մի է հայր մեր սուրբ հոգին՝ որ ծնաւ զմեզ. զիա՞րդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին, և ոչ միաբանք»:

Եվ ինչպես Ավարայրի ճակատագրական օրերին, այսօր նույնպես Հայաստանյայց Եկեղեցին՝ ի գլուխ ունենալով Ս. Էջմիածինը, պետք է դառնա միավորող օղակն ու ամրացուցիչ շաղախը՝ հաղթահարելու տարամետ և կենտրոնախույս տրամադրությունները, որպեսզի մեր ժողովուրդը աշխարհին ու մարդկությանը ներկայանա նույնքան միակամ ու միաձույլ, որքան Ավարայրի օրերին: Թադեոս և Բարթուղիմեոս առաքյալներով առաքելականացած, Ս. Գրիգոր Լուսավորիչով լուսահիմք դարձած, Սահակ-Մեսրոպով ոգի ու հայեցիություն զգեցած Եկեղեցին էր, որ միավորեց և հավասարակշռեց բոլոր տարամետ ուժերը և Ավարայրը դարձավ «Վասն Յիսուսի և վասն Հայրենեաց»: Այսօր ինչպես Հայրապետն Հայոց ասել է իր խոսքի մեջ. «Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու համար եղել է, է և կմնա միշտ իբրև ամենանվիրական սրբություններից մեկը և անմոռաց էջը մեր ազատագրական պայքարի, որի գաղափարի ու լույսի մեջ սերունդներ են դաստիարակվել»: Թող թանձի հաղթական Ոգին քաջ Վարդանանց ու Ղևոնդյանց՝ մնալով ախոյան ու պաշտպան մարդկային ազնիվ ու արդար իրավունքների»:

Բանախոսությունից հետո հոգևոր ճեմարանի Ե լսարանի ուսանող Գևորգ Գյուլգյուլյանը արտասանեց Խաչիկ Դաշտենցի «Հայերեն» և Ա լսարանի սան Համլետ Մեհրաբյանը՝ հատվածներ Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմից:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս Կոմիտաս Քեշիշյանի, կատարեց «Պլպուլն Ավարայրի», «Երգ մեռնող հայրենասերի», «Հայրենիք», «Լռեց» երգերը և «Նորահրաշ» տոնական շարականը:

Հանդիսության փակման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պողպատյանը:

«Վեհափառ Տեր, շատ հարգելի ներկաներ:

Ձմեռն եկել ու տարածել է թևերը ողջ Հայաստանի վրա: Փետրվարյան ցուրտ ամիս է, բայց որքան բախտավոր և երջանիկ ենք, որ Հայաստանյայց Եկեղեցին ձմռան այս խստաշունչ ամսին ամեն տարի նշում է Վարդանանց վորամարտի հրաշալի հիշատակը և դրանով ջերմացնում մեր սրտերը:

Այս հանդեսի խնամված ծրագրի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմին և սաներին, որոնք ամբողջական մի հայտագրով կարողացան հոգևոր ուրախությամբ, Վարդանանց ոգով լցնել և ջերմացնել մեր սրտերը:

Վարդան սպարապետի և մի շարք իշխանների գլխավորությամբ հազար երեսուն և վեց զորականներ Ավարայրի դաշտում իրենց անգին արյունը թափելով, մարմնավոր կյանքից փոխադրվեցին հոգևոր կյանքի: Նրանք չմեռան, այլ դարձան ոգեղեն ներշնչանք հայ ժողովրդի հետագա պատմության ընթացքում, նոր իմասավորում տվին գիտակցական մահվան, իր խորքով և էությամբ ամբողջապես քրիստոնեական և իր գործադրության ձևով ու ըմբռնողությամբ հարազատորեն հայկական:

Այս համոզումով հայը ապրեց իր ողջ պատմության ընթացքում. Սարդարապատից մինչև հայրենական պատերազմ ամեն մեկ մասնակից հայ զինվոր Վարդանանց ոգով մարտնչեց չարի դեմ, երբ հարկ եղավ՝ իր

արյունը թափեց վասն հայրենիքի, վասն խաղաղության ամենայն աշխարհի և վասն բարօրության գալիք սերունդների:

Ահա այս զգացումներով դիմավորում ենք Վարդանանց տոնը:

Այսօր մեկ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վինվորյալ միաբանության համար, ինչպես նաև ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի սփռված հայության համար, ուրախության օր է, որովհետև տոնն է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչության:

Բոլոր ներկաների անունից թույլ տվեք շնորհավորել Վեհափառ Հայրապետին: Թող Աստված երկար-երկար կյանք պարգևի Հայոց Հայրապետին և թող ամեն տարի Վարդանանց տոնին, իբրև նոր ժամանակների Վարդան զորավար, Վեհափառը լինի մեր մեջ, նախագահի այս հանդիսությանց Իր շնորհաբաշխ ներկայությամբ՝ մեկ բոլորիս միխիթարելու համար:

Կեցցեն Վարդանանք»:



ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դու ես լոյսն գովելի, սուրբ և առաջին լոյսն,
ի քէն փ՛ախչնու խ՛աւարն, և պլոյս քո կենդանի,
Տէ՛ր, ծագեա՛ ի սիրտս մեր» (Ժամագիրք)

Հայ Եկեղեցին, ամեն տարի մեծ հանդիսությամբ՝ հոգեվմայլ շարականների ու երգերի երգակցությամբ, տոնում է Տյառնընդառաջը:

Քրիստոսի ծննդից 40 օր հետո, Նրա մայրը՝ Մարիամ, Նրան Տաճար է տանում «յանդիման առնել Տեառն», ահա թե ինչու այդ տոնը Հայ Եկեղեցում կոչվում է Տյառնընդառաջ: Քառասնօրյա Մանուկը ընծայվում է Հայր Աստծուն կատարելու՝ «զօրէնս վասն փրկութեան հեթանոսաց»:

Տյառնընդառաջի տոնը առավելապես լույսի տոն է: Առաջին անգամ Սիմեոն ծերունին է, որ Սողոմոնի տաճարում հռչակում է Լույսի ծնունդը: Տաճար բերված քառասնօրյա Մանուկը հռչակվում է իր ժամանակի և բոլոր ժամանակների Լույսը: Ճշմարտության և արդարության. լույսը եկել է աշխարհ, դեպի մարդիկ, որպեսզի մարդիկ ձրգտեն դեպի նա, դեպի ճշմարիտ Լույսը. «Մինչդեռ աշխարհի եմ, լոյս եմ աշխարհի» (Հովհ. Թ 5):

Հայ Եկեղեցին ընդառաջ գնալով Լույսին կանգնեցրել է Լույսի խորան Ս. Էջմիածինը և այն վառել Լուսավորչի կանթեղով, որ հավատացյալ հոգիները երկրպագելով Լույսին՝ լուսավորվեն նրանով:

Այս տարի Լույսի տոնը Մայր Աթոռում նշանավորվեց հոգևոր ճեմարանի վերջին լսարանի յոթ շնորհալի երիտասարդների սարկավագական ձեռնադրությամբ: Նրանք պարտականության գիտակցությամբ պատրաստ են Լույսից այրվելու և ծառայության հոգով ներշնչված իրենց ուժերը անմնացորդ նվիրաբերելու ի պայծառություն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

Փետրվարի 14-ին, ուրբաթ. Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր առավոտյան, ժամը 10.30-ին, Մայր տաճարի Ավագ խորանի վրա տոնական ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը: Ս. պատարագի սուրբ գրական ընթերցումներից առաջ, սկսվեց հոգևոր ճեմարանի վերջին լսարանի յոթ ուսանողների, ինչպես նաև Ս. Գայանե վանքի կիսասարկավագ Ռաֆմիկ Հովհաննիսյանի սարկավագական ձեռնադրությունը, խարտավիլակությամբ Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանի:

Նորընծաները իրենց կիսասարկավագական կոչումը ստացել էին փետրվարի 12-ին, հավարտ «Խաղաղական» ժամերգության: Նախորդ օրը, «Երեկոյան» ժամերգությունից հետո, հոգևոր ճեմարանի Դ լսարանի յոթ

Մի պահ ձեռնադրությունից

ուսանողներ իրավունք էին ստացել կրելու ուրար, իսկ Գ և Բ խարանների մի խումբ սաների շնորհվել էին դպրության չորս աստիճանները:

Ձեռնադրությունը խորհրդանշվեց վկայակոչությամբ՝ «աստուածային և երկնային շնորհ, որ միշտ լնու պպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զնոսա ի դպրութենէ ի սարկաւագութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Այնուհետև Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, օրհնությամբ տվեց «զսուրբ ուրարս», «իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ Աւետարանս, յեկեղեցիս Աստուծոյ» և «հրաման խնկարկել և բուրել հոտ անուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյն»:

Ձեռնադրության արարողությունից հետո, ձեռնադրիչ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը նորընծաներին ուղղված ոգեշունչ և խրատական քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը նորընծաներին առաջնորդեց Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը հայրական սիրով ընդունեց Իր հոգևոր զավակներին, օրհնեց նրանց հոգևոր ծառայության ուխտը և մաղթեց, որ լինեն հավատքին նվիրված և աղոթքի մարդիկ:

Ժամը 14.30-ին, միաբանական սեղանատանը, տրվեց ճաշկերույթ՝ ի պատիվ նորընծա սարկավագների:

Նորընծաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը՝ մաղթելով, որ նորընծաները ունենան անկեղծ նվիրում Հայ Առաքելական Եկեղեցուն ու հայ ժողովրդին:

Հանուն սարկավագների, երախտագիտության և շնորհակալական խոսք ասաց Ռաֆմիկ սարկավագ Իսախանյանը:

*
* *

Տիգրան սարկավագ Զուլֆայան. ծնվել է 1963 թ. Բեյրութում: Ծննդավայրում ստացել է ութամյա կրթություն: 1976 թվականին եղել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց ժառանգավորաց վարժարանի սան: 1977 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1979 թ. վերադարձել է Բեյրութ: Երեք տարի ընդմիջումից հետո՝ 1982 թ. վերընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան:

Գևորգ սարկավագ Գյուլգյուլյան. ծնվել է 1960 թ. սեպտեմբերի 15-ին, Բեյրութի Պուրճ-Համմուտ թաղամասում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Վահան Թեքեյան Ազգային վարժարանում: 1977—1979 թթ. սովորել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դպրեվանքում: 1979 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան: 1980 թ. վերադարձել է Բեյրութ: 1982—1983 ուստարեշրջանին վերընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

Հովակիմ սարկավագ Քիլեճյան. ծնվել է 1967 թ. Էջմիածին քաղաքում: 1974—1979 թթ. սովորել է ծննդավայրի № 1 միջնակարգ դպրոցում: 1979 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

Հրաչ սարկավագ Հակոբյան. ծնվել է 1965 թ. Իրաքի Մուսուլ քաղաքում: 1970 թ. ընտանիքով բնակություն են հաստատել Բաղդադում, որտեղ և Հրաչ սարկավագը ընդունվել է «Թարգմանչաց» դպրոցը: 1979 թ. ավարտելով Բաղդադի «Թարգմանչաց» դպրոցի լրիվ դասընթացը, նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

Ռաֆմիկ սարկավագ Իսախանյան. ծնվել է 1963 թ. Իրանի Հաղարջրիբ գյուղում: 1969 թ. ընտանիքով ներգաղթել են Մայր Հայաստան և բնակություն հաստատել նախ Հոկտեմբերյան, ապա Էջմիածին քաղաքներում: 1970—1980 թթ. սովորել և ավարտել է Էջմիածին քաղաքի № 1 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1981—1983 թթ. ծառայել է Սովետական բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Գևորգ սարկավագ Մկրտչյան. ծնվել է 1961 թ. Եղեգնաձորի շրջանի Ռինդ գյուղում: 1968—1978 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1980—1982 թթ. ծառայել է Սովետական բանակում: 1982—1983 տարեշրջանին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

Մանվել սարկավագ Մաթևոսյան. ծնվել է 1960 թ. Էջմիածին քաղաքում: 1967—1977 թթ. սովորել և ավարտել է ծննդավայրի № 2 միջնակարգ դպրոցը: 1979—1981 թթ. ծառայել է Սովետական բանակում: 1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

Ռաֆմիկ սարկավագ Հովհաննիսյան. ծընվել է 1941 թ. սեպտեմբերի 1-ին, Աշտարակի շրջանի Ագարակ գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1960—1963 թթ. ծառայել է Սովետական բանակում: Ռաֆմիկ սարկավագը երկար տարիներ ծառայել է Ս. Գայանե վանքում՝ իր մասնակցությունը բերելով վանքի ծիսական արարողություններին:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա սարկավագներին և մաղթում, որ նրանք լինեն ճշմարտապես գիտակից սպասավորները Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ոչ այնպէս իցէ և ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ» (Մատթ. Ի 26—27) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 9-ին, կիրակի.— Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուրուգվայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Հակոբ ծ. վրդ. Գըլընճյանը՝ «Ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով» (Ա Կորնթ. ԺԲ 3) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վահափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 12-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 13-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Տյառնընդառաջի նախատոնակի ժամերգությունը:

Ավելի ուշ, ժամը 19-ին, հոգևոր ճեմարանի մարզադաշտում բոցավառվեց Տյառնընդառաջի ավանդական խարույկը:

*
* *

Փետրվարի 16-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Արտաքսման):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը՝ «Վա՛յ աշխար-

հի ի գայթակղութեանց. հարկ է գալ գայթակղութեանց, բայց վա՜յ մարդոյն այնմիկ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն» (Մատթ. ԺԸ 7) բնաբանով:

* * *

Փետրվարի 23-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Անառակին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Հայկակուն վրդ. Նաջարյանը՝ «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո» (Ղուկաս ԺԵ 18) բնաբանով:

* * *

Փետրվարի 26-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:



ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Ծնվել է 1955 թվականի հունվարի 19-ին Թբիլիսիում:

1961—1967 թվականներին սովորել է Երևանի միջնակարգ դպրոցում:

1967 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1973 թվականին ավարտել է հոգևոր ճեմարանը և նույն թվականի հուլիսի 22-ին ձեռնադրվել քահանա Մայր տաճարում՝ ձեռամբ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

1975 թվականի աշնանը պաշտպանել է վարդապետական թեկ՝ «Մովսես Երզնկացու դավանաբանական թղթերը» թեմայով:

1977 թվականին ընդունվել և 1981 թվականին ավարտել է Աթենքի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը:

Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը 1980 թվականից առ այսօր վարում է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը:

1985 թվականի դեկտեմբերի 16-ին Աթենքի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ «Հայ Եկեղեցու դիրքորոշումը սրբապատկերների նկատմամբ» թեմայով:

Աշխատության մեջ խոսվում է Հայաստանի քաղաքական և եկեղեցական վիճակի մասին Զ—ԺԲ դարերում, ապա տրվում է Հայ Եկեղեցու դիրքորոշումը Քաղկեդոնի ժողովի դավանաբանական որոշումների նկատմամբ, Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունն ու դիրքորոշումը սրբապատկերների նկատմամբ մինչև Ը դար, ապա Հայ Եկեղեցու դիրքորոշումը սրբապատկերների նկատմամբ Թ—ԺԲ դարերում՝ համապատասխան եզրակացություններով:



ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Խավար էր չորս դին,
Ու խավարի մեջ Աստված անխոռով
Լույս էր արարում:

Ու տվեց պատգամ,
Որ լույսի միջից
Լույս ապգեր ծնվեն ու լույս կանթեղներ
Պահեն խավարում:

Արարչի կամքով փոթորիկ եղավ,
Երկինքն ավետեց,
Ու կայծակները խաչվեցին իրար:
Եղեգան փողից վազեց մի մանուկ՝
Աչքերը կրակ ու հաղթաբազուկ:
Երկնային ծովը երկնեց մի նոր ապգ,
Նայեց անհամբեր,
Ու իր ծնածից ինքը գոհ մնաց:

Հայ ապգը ծնվեց:

Ու ահեղագոչ Վահագնը լուսաչ
Վիշապների դեմ դուրս ելավ մարտի:
Խավար էր չորս դին՝
Դրա համար էլ մեր Քաջն իր ձեռքին
Սրի փոխարեն կանթեղ էր բռնել:

Նա հաղթեց՝ լույսով...
Ու կանգնեց հաստատ
Արագած սարի բարձր գագաթին՝
Լույսն իր ցանելով տիեզերքով մեկ,
Որպես Ծիր-Կաթին:

Ու անցան դարեր...
Բայց դարերի մեջ լույսն այդ չմարեց,
Նվազեց հաճախ...
Ու ամեն անգամ
Մի լուսաչ Վահագն,
Կամ մի սուրբ Մեսրոպ,
Կամ մի սուրբ Նարեկ,
Մարմինն իր դարձրեց կանթեղին պատրույգ,
Ու հոգին տվեց ձեթին կանթեղի՝
Որ լույսն Աստուծո երբեք չմարի:

Ու անցան դարեր...
Եվ եթե այսօր
Կանթեղի լույսը նվազի հանկարծ,
Ոտքի կկանգնեն բյուր հազար Վահագն,
Բյուր հազար Մեսրոպ, բյուր հազար Նարեկ,
Ու հին կանթեղը լույսն իր նորօրյա
Կսփռի նորից տիեզերքով մեկ:

ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ

1985 թվականին խանդավառ պայմաններում տոնախմբվեց Ալեքսանդրիայի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման և օծման 100-ամյակը:

Դեռևս 1984 թվականի սեպտեմբերի 10-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը թիվ 1297 սրբատառ իր կոնդակով գրում էր այդ առթիվ. «Միջերկրականի ափին բարձրացած Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին մշտավառ ջահի նման ահա ուղիղ մեկ դարե ի վեր շարունակ Քրիստոսի Ավետարանի լույսն ու ջերմությունն առատորեն կբաշխե ձեզ բոլորիդ, ի մխիթարություն ձեր հոգիներուն և ի շինություն ձեր կրոնական և մշակութային կյանքին՝ պահպանումովը մեր նախնյաց քրիստոնեական սուրբ ավանդություններուն»:

«Հոբելյան մըն է այս,— խնդությամբ արձանագրում է Վեհափառ Հայրապետը Ալեքսանդրիա առաքված սրբատառ կոնդակով,— ...ոգեկան հաղթանակներեն մին եգիպտական հյուրընկալ ու մարդասեր արաբ ժողովրդի ծոցին մեջ: Հոբելյան մը, որ ճըշմարիտ ավետիս մըն է նաև համայն մեր Եկեղեցիին և հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար»:

Իրավ հոգեկան մխիթարություն էր, որ Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով եգիպտահայոց բարեջան առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանի հրավերին, մեկ ուղարկեց մասնակցելու այդ հանդիսություններին:

1985 թվականի դեկտեմբերի 17-ին, Մոսկվա-Կահիրե չորսժամյա օդանավային թռիչքից հետո, հասանք Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք: Մեզ դիմավորեց Տ. Զավեն արքեպիսկոպոսը՝ ուղեկցողների՝ արժանապատիվ Տ. Նարեկ քահանա Ֆրընճյանի ու բարեշնորհ Հարություն սարկավագի հետ: Պարզվեց, որ մինչև Ալեքսանդրիա մեկնումը 10—11 օր մնալու էինք այստեղ:

Հաջորդ օրն իսկ մշակվեց մի ծրագիր, և անմիջապես մենք առիթը ունեցանք տեսնելու Կահիրեի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ հոյակապ եկեղեցին, ճանաչելու թեմական և քաղաքական ժողովների անդամներին: Քաղաքավարական այցով եղանք համայնքի երեք՝ «Արև», «Զահակիր» և «Հուսաբեր» թերթերի խմբագրություններում, այցելեցինք Գիզա և դիտեցինք Մեծ Բուրգը՝ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, Սֆինքսը, եղանք Սակկարայում, պետական-պատմական թանգարանում և այլուր:

*
* *

Եգիպտահայ պատմական գաղութը հին է, իսկ այսօրվա ժողովուրդը՝ դարձյալ եկեղեցասեր, հայաշունչ և հայրենասեր:

Եգիպտոսը մեկ հայտնի է մանավանդ Ալեքսանդրիայով, որը պատմությունից մեկ ծանոթ է իբրև քրիստոնեության կենտրոն՝ Կյուրեղ Աղեքսանդրացու, Աթանաս Մեծի, Որիգինեսի և ուրիշների, գիտության ու փիլիսոփայության քաղաք: Այստեղ ուսանելու է գնացել մեր պատմահայր Մովսես Խորենացին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն 1956 թվականին հովվապետական այցելությամբ եղել է եգիպտահայ թեմում և մեծ ոնդունելության արժանացել պետական իշխանությունների կողմից: 1956 թվականի եպիսկոպոսական ժողովը գումարվել է Կահիրեի առաջնորդարանի մեծ դահլիճում:

ԺԷ դարում ստեղծվում են քաղաքական

բարենպաստ պայմաններ՝ շնորհիվ միջազգային առևտրի աշխուժացման ու մանավանդ Մուհամմեդ Ալիի՝ հայերի հանդեպ բարյացակամության: ԺԸ—ԺԹ դարերում հայ գաղութը աշխուժանում է: Հարյուր տարի առաջ կառուցված Ալեքսանդրիայի հայոց եկեղեցին արգասիքն է մշակութային-ազգային աշխույժ կյանքի: Հիմնվում են հայ դրպրոցներ:



Կահիրեի եկեղեցու կանգակատունը

Քաղաքի կենտրոնում գտնվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը կառուցվել է 1925—1928 թվականներին՝ հայկական ոճով: Բարերարներն են՝ Գր. Եղիայանը, Նուբար, Տիգրան և Տապրո փաշաները, իսկ ճարտարապետը՝ Լևոն Նաֆիլյանը:

Նույն բակում է գտնվում եռահարկ առաջնորդարանի շենքը՝ կառուցված Թորգոմ արքեպ. Գուշակյանի առաջնորդության շրջանին:

Ս. Մինաս եկեղեցին, որ կառուցվել է 1843 թվականին, վերանորոգվել է մի քանի անգամներ, գտնվում է հին գերեզմանատան մեջ: Այստեղ է, որ տարին մեկ անգամ կատարվում է սուրբ պատարագ և հոգեհանգստյան պաշտոն՝ եկեղեցու բարերարների, մեծ երախտավորների հոգիների համար:

Այժմ Եգիպտոսում հայերի թիվը տասը հազարի չի հասնում: 1956 թվականին երբ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը այցելեց Նեղոսի երկիր, հայերի թիվը հասնում էր քառասուն հազարի. մի մասը իր վերջին հանգրվանը գտավ Մայր Հայրենիքում, իսկ մյուս մասը գաղթեց հեռավոր ափեր՝ Ամերիկա և Կանադա: Չնայած այժմ հայերը թվով քիչ են, սակայն մնում են շատ հայրենասեր, եկեղեցասեր և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հավատարիմ:

Ինչպես հայտնի է, այս հնավանդ գաղութը շուրջ ութսուն տարի առաջ (1906 թ.) ծնունդ տվեց նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, և այս կազմակերպությունն էր, որ սիրով իր մասնակցությունը բերեց «Սասունցի դավիթ» տանկային շարասյան հանգանակությանը, երբ մեր հայրենիքի գլխին կախված էր ֆաշիզմի ահավոր վտանգը:

Դեկտեմբերի 21-ի երեկոյան Հելիոպոլսի Նուբարյան ազգային վարժարանում, «Պլրքտանյան» սրահում, տեղի ունեցավ Կահիրեի Հայ Աղքատախնամի տարեկան ձեռնարկը և հաջորդ օրը, դեկտեմբերի 22-ին, կատարեցինք մեր ուխտի պատարագը:

Թե՛ Աղքատախնամի տարեկան ձեռնարկին և թե՛ մեր ուխտի պատարագին հովանավորում էր Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոսը: Մենք խոսեցինք Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի մասին:

Հանդեսին և սուրբ պատարագին ներկա էին գաղութի թեմական և գործադիր մարմինների անդամներ, ազգային երեսփոխանները և մշակութային շրջանակի վարիչները: «Շնորհալի» երգչախումբը, ղեկավարությամբ երգահան Էդվարդ Հակոբյանի, Աղքատախնամի տարեկան ձեռնարկի առթիվ համերգ տվեց և կատարեց կիրակնօրյա սուրբ պատարագի երգեցողությունը:

Դեկտեմբերի 26-ին Կահիրեի «Հայկական ընթերցասրահի» վարչությունը հյուրասիրություն կազմակերպեց: Էդվարդ Հակոբյանը, հանուն «Հայկական ընթերցասրահի» վարչության խոսք առնելով, բարի գալուստ մաղթեց մեզ և ապա սեղմ գծերի մեջ ներկայացրեց «Հայկական ընթերցասրահի» վարչության ավելի քան 80-ամյա մշակութային և ընկերային բազմաբեղուն գործունեության պատկերը՝ շեշտելով, որ վարչությունը միշտ իրեն օժանդակ է ունեցել Մայր Հայրենիքը և Սուրբ Էջմիածինը: Մեր խոսքում դրվատեցինք նրանց նվիրումն ու համերաշխությունը, որ երաշխիք է նրանց գոյատևման:

Կահիրեում մենք առիթը ունեցանք քա-

ղաքավարական այցելություն տալու Սովետական հյուպատոսին:

Դեկտեմբերի 28-ին մեկնեցինք Ալեքսանդրիա, ուր տեղի պիտի ունենար հոբելյանական հանդիսությունը:

Ալեքսանդրիայի Ս. Պողոս-Պետրոս 100-ամյա եկեղեցու մուտքին մեկ դիմավորեցին տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Գրիգոր քհն. Օհանյանը, ազգային վարչության անդամներն ու տասնյակ հավատացյալներ:

Ուխտի աղոթքից հետո Ալեքսանդրիայի հայ համայնքի, թեմական ու քաղաքական ժողովների անդամների անունից բարիգայրստյան խոսք ասաց Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը: Մեր հերթին պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեցինք հրավերի համար և հաղորդեցինք Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, ողջույններ՝ իրենց հայրենակիցներից և մանավանդ Շիրակի ոստանի հավատացյալ ժողովրդից:

Դեկտեմբերի 29: Տեսանք հայ համայնքի փառավոր եկեղեցին: Մտածեցինք աշխարհի խաղաղության մասին, որը համայն մարդկության և մանավանդ Հայ Եկեղեցու մտահոգությունն է: Հիշեցինք կրակների մեջ այրվող Լիբանանը և այնտեղ ապրող ժողովուրդների համար մեր աղերսը առաքեցինք առ Աստված՝ ասելով. «Տէր Աստուած, տուր սխաղաղութիւն քո ամենայն աշխարհի»: Եկեղեցում հավաքված հոծ բազմությանը խոսեցինք Մայր Աթոռում տեղի ունեցած Վեհափառ Հայրապետի գահակալության 30-ամյա հանդիսությունների, Մայր Հայաստանի վերապարթոնքի և արձանագրած մեծ հաջողությունների, Շիրակի թեմի մասին:

Սուրբ պատարագի ավարտին, որի երգեցողությունը կատարեց «Լուսավորիչ» երգչախումբը, եկեղեցական թափորը շարժվեց դեպի հայոց գերեզմանները, և կատարվեց հոգեհանգստյան պաշտոն ֆանգուցյալների հոգիների հանգստության համար:

Անմիջապես «Հոգւոց» արտասանեցինք եկեղեցու բակի մուտքին գտնվող կարմիր գրանիտա քարից պատրաստված (կառուցված 1965 թ.) Արիլյան եղեռնի հուշարձանի մոտ, մեր երկու միլիոն նահատակների հոգիների համար:

Օրն իր բացառիկությամբ շարունակվեց Պողոսյան վարժարանի «Մեյքոնյան» մանկապարտեզի սրահում տեղի ունեցած ամանորյա հանդեսով: Մանկապարտեզի երեխաները անուշ մայրենի լեզվով, մանկական ջերմությամբ արտասանեցին, պարեցին, երգեցին: Մենք նրանց նվեր հանձնեցինք Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի անունից՝ Արարատ լեռան մեծադիր նկարը: Վերջում շնորհավորեցինք բոլորին՝ մաղթելով նրանց երջանիկ ու խաղաղ տարի:

Հանդեսը փակվեց Տ. Զավեն արքեպիսկոպոսի «Պահպանիչ» աղոթքով:

Հին տարվա՝ 1985 թվականի ճանապարհումը և նոր՝ 1986 տարվա դիմավորումը անցկացրինք Ալեքսանդրիայի Գործադիր ժողովի ատենապետ տիար Վահրամ Թոնունյանի հարկի տակ, Տ. Զավեն արքեպիսկոպոսի և թեմական և քաղաքական ժողովների անդամների հետ միասին: Բոլորի մաղթանքն էր, որ հին տարին իր հետ տանի բոլոր չարիքներն ու թշնամությունները, և աշխարհում տիրի միմիայն խաղաղություն, և իրականանան մանավանդ մեր ժողովրդի բոլոր իղձերն ու երազանքները:

Ալեքսանդրիայի եկեղեցու զանգակատունը

Նոր տարում սուրբ պատարագ մատուցեցինք Ալեքսանդրիայի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում, որին նրկա էին բազում հավատացյալներ:

Ս. պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք:

Նոր տարվա առաջին օրը խանդավառ անցավ Ալեքսանդրիայի թեմական ժողովի

ցկյանս նախագահ Մարտիկ Զարբհանելյանի ընդունելության ժամանակ, որին ներկա էին Տ. Զավեն արքեպիսկոպոսը, թեմական և քաղաքական ժողովների անդամներ, մշակութային, հասարակական և այլ ասպարեզների ներկայացուցիչներ: Նրանց շատ էր հետաքրքրում այսօրվա Մայր Հայրենիքի վերելքը և Մայր Աթոռի վիճակը: Մենք պատասխանեցինք նրանց հուզող հարցերին:

Նույնպիսի մեծ ընդունելություն կազմակերպվեց հունվարի 5-ին, Ս. Ծննդյան ճրագալույցի երեկոյան՝ տեր և տիկին Վահան Ալեքսանյանների հարկի տակ:

Հունվարի 6: Ս. Ծնունդ և Աստվածահայտնություն:

Ալեքսանդրիայի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում կատարեցինք հանդիսավոր սուրբ պատարագ: Եկեղեցին լեփ-լեցուն էր ոչ միայն հայ հավատացյալներով, այլև օտար հյուրերով:

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Սուրբ Ծննդյան պատգամի ընթերցումից հետո, հանուն Հայ Եկեղեցու շնորհավորեցինք բոլոր ներկաների Նոր տարին՝ անդրադառնալով նաև սովետա-եգիպտական և հայ-եգիպտական բարեկամությանը, մաղթելով, որ այն շարունակվի դարեդար:

Երախտագիտական խոսք ասացինք եգիպտական կառավարությանը՝ Եգիպտոսում հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած դյուրությունների և վստահության համար:

Սուրբ պատարագից հետո առաջնորդարանում տեղի ունեցած հանդեսին իրենց շնորհավորանքի խոսքերով հանդես եկան հայ կաթուղիկե և բողոքական փոքրամասնությունների ներկայացուցիչները, քաղաքի հունաց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Ամբրոսիոս եպիսկոպոսը:

Կահիրեում ռադիոյով հայ ունկնդիրները լսեցին Ամենայն Հայոց Հայրապետի՝ Սուրբ Ծննդյան և Նոր տարվա պատգամը, որն ընթերցեց պատարագիչ Զավեն արքեպիսկոպոսը, որից հետո Վեհափառի Սուրբ Ծննդյան քարոզը հաղորդվեց արաբերեն լեզվով:

Հունվարի 2-ին «Հառաջդիմասեր»-ի մեծ սրահում ելույթ ունեցանք «Շիրակի թեմը և Յոթվիրաց առաջնորդանիստ եկեղեցին» թեմայով:

Հաջորդ օրը, հունվարի 3-ին, նորից ելույթ ունեցանք «Տիգրան Երկաթ» հնագույն սրահում՝ «Հայկական հայրենասիրություն» թեմայով:

Բոլորի հետաքրքրության առարկան հայրենիք-սփյուռք կապն էր, կարոտը հայրենիքի և Ս. Էջմիածնի նկատմամբ և ծանոթացումը Շիրակի թեմի հետ:

Հունվարի 7-ին տեղի ունեցավ Սուրբ Ծննդյան պատարագ ռուս ուղղափառ եկեղեցում: Ալեքսանդրիայի հայոց եկեղեցու Գործադիր մարմնի անդամ տիար Վ. Ալեքսանյանի հետ եղանք ռուս ուղղափառ եկեղեցում և սուրբ պատարագից հետո ներկա եղանք նրանց կազմակերպած ընդունելությանը, որտեղ շնորհավորեցինք ռուս համայնքի և նրա հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Դմիտրի քահանայի Սուրբ Ծնունդը և Նոր տարին: Ջերմ մթնոլորտում բաժակներ բարձրացվեցին ռուս-հայ և ռուս-արաբ բարեկամության կենացը, Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի և Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կենացները:

Հունվարի 8-ին վերադարձանք Կահիրե:

Ետդարձի ճանապարհին մտանք ղրպտիների Սուրբ Մակարիոս վանքը: Մեզ դիմավորեց և բացատրություններ տվեց Տ. Իրենիոս վարդապետը: Երբ ոտաբոբիկ մըտնում էինք Աբիսկիրոն եկեղեցին, հայր սուրբը մեզ ցույց տվեց հայերեն գրերը, որոնք վերջերս դուրս էին եկել ծեփերի տակից: Հուզվեցինք և մտքով ետ գնացինք դեպի մեր պատմության էջերը, երբ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը ուխտի այցով եկել էր այս տեղերը. «Շրջէր ընդ ամենայն անապատին Եգիպտացւոց... և գնաց բնակել ի լերինս ընդ միանձինս... և ստացաւ վարս խստակրօնս»: Նման խստակրոնությունը մինչև այսօր էլ կա այս անապատներում, այս վանքում, որ ունի 100 միաբան և 700 գործավորներ:

Հոգեկան մեծ լիցք ստացած բաժանվում ենք մեր քույր Եկեղեցու հպարտությունը հանդիսացող դպտական վանքից: Վանքը հանդիսանում է օազիս անապատում, որովհետև ունի հատուկ մի աշտարակ, որ մի տեսակ ուղեցույց է անապատով գնացողների համար և միաժամանակ ցոի սահեստ:

Ինչքան դժվար է սփյուռքի հաստության համար՝ հայրենիքից հեռու, օտար ափերում: Հասնացա և խոռապես թափանցեցի Տ. Զավեն սրբազանի խոսքերի մեջ, երբ նա մի առիթով ասաց. «Երանի ձեզ, որ այդպիսի կարոտը չի մաշեցնում ձեզ»:

Երկու օր հետո «Գեղարվեստասիրաց» սրահում կազմակերպված դոցերթի երեկո: Մեր շնորհակալական խոսքում անդրադարձանք հատկապես աշխարհի խաղաղության հարցին, որը կենսական անհրաժեշտություն է մանավանդ հայ ժողովրդի համար, և այդ պայմաններում է միայն, որ կարելի կլինի

ավելի ամրապնդել Սուրբ Էջմիածին, հայրենիք-սփյուռք կապը: Շնորհակալություն հայտնեցինք առաջնորդ Տ. Զավեն սրբազանին, Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական-քաղաքական ժողովների հարգարժան անդամներին, բոլոր ղեկավար ներկայացուցիչներին՝ ջերմ ընդունելության համար:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ

ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԳՆՈՒՄԸ

Մայր Աթոռս ուրախությունն ունի հայտնելու, որ Փարիզի առաջնորդարանի և Ամստերդամի հայ համայնքի երկարամյա բանակցությունները հոլանդական իշխանությունների հետ պսակվեցին հաջողությամբ, և Ամստերդամի հայոց պատմական եկեղեցին քաղաքապետարանի որոշումով պիտի վերավաճառվի հոլանդահայ գաղութին: Եկեղեցին ունի մեծ պատմական արժեք, և նրա վերադարձը իր բնիկ տերերին՝ խորհրդանիշն է Հայ Եկեղեցու և սփյուռքահայ գաղութների կենսունակության:

Մեր ընթերցողներին որոշ տեղեկություններ ենք տալիս այդ պատմական եկեղեցու կառուցման և վիճակի մասին՝ ըստ Առաքել Սարուխանի «Ազգային Մատենադարան» մատենաշարով (թիվ ՃԺԴ/114) Վիեննայի Մխիթարյանների տպարանում 1926 թվականին լույս ընծայած «Հոլլանդան և Հայերը» գրքույկի, որտեղ հեղինակը փաստական և փաստաթղթային տվյալներով կառուցում է եկեղեցու պատմությունը՝ ավելացնելով ականատեսի իր վկայությունը:

Ըստ Առաքել Սարուխանի, առաջին հայ քահանան, որ երևացել է Հոլանդիայում, եղել է Մարկոս քհն. Աբրահամյանը: Հոլանդացիները անտեղյակ էին հայերին և նրանց պատմությանը, նրանց ճանաչում էին որպես «կաթոլիկներ, որոնք Հռոմից կախում չունեին»: Հիմնականում հայ վաճառականներ էին գալիս Ամստերդամ և հետևհետե հիմնավորվում այնտեղ: Նրանց խորթ էր օտար եկեղեցին և արարողությունը, ուստի ԺԷ դարի կեսերին ծագեց սեփական աղոթատուն ունենալու անհրաժեշտությունը: 1663 թվականին ժամանակավորապես մի տուն վարձեցին և այն մատուռ դարձրին, Ս. Կարապետ անունով: Առաջին քահանայագործող եկեղեցականը եղավ Անդրիանեցի Կարապետ վարդապետը, որը մեծապես օգտակար դարձավ Ոսկան Երևանցուն՝ նրա տպագրական գործունեության մեջ:

Հաջորդ քայլը եղավ ունենալ սեփական բարեկարգ եկեղեցի: 1713-ին հայ առևտրականների ավագանին, Պապաջան Սուլթանյանի և Նիկողայոս Թեոդորյանի գլխավորությամբ, խնդրագիր ներկայացրեց քաղաքապետին՝ իրենց սեփական միջոցներով հայկական եկեղեցի կառուցելու համար: Քաղաքապետարանի հոկտեմբերի 26-ի որոշման մեջ ասված է. «Այստեղի հայ վաճառականների խնդրանքի հիման վրա, պատշաճավոր խորհրդակցություններից հետո բարի համարվեց արտոնել, որ նրանք այս քաղաքում մի տուն գնեն և եկեղեցիի վերածեն՝ իրենց հատուկ աստվածային պաշտամունքը կատարելու համար»:

Ուստի հայերը այդ ժամանակի քաղաքի կենտրոնական Boomsloot փողոցի վրա մի շենք գնեցին, որ պահեստ էր, քանդեցին բոլորովին և եկեղեցի կառուցեցին՝ բարեկարգ զարդարանքով, եկեղեցական սպասքով և զգեստներով: Անհրաժեշտ էր օծել եկեղեցին, ուստի ժամանակի Աստվածատուր Ա (1715—1725) Ամենայն Հայոց կաթողիկոսին հղեցին հետևյալ աղերսագիրը.

«Հայկապյան տոհմիս երիցս երանյալ Վեհափառ և բարձրագահ Դիտապետիդ, Տեր Աստվածատուր՝ լուսաբնակ Սուրբ Էջմիածնի արժանաժառանգ Աթոռակալիդ և մեր Գերարփիահրաշ Հոր՝ Լուսավորչի պանծալի Հաջորդիդ՝ ծնրադիր երկյուղածությամբ մատուցում ենք մեր որդիական ողջույնը նաև խնդալից սրտով Զերդ Սրբության երանելի իշխանությանը շնորհավորում ենք մենք այստեղ՝ Ամստելոդամում եղող ներքոգրյալ հայապգի նվաստ որդիները Սուրբ Աթոռիդ:

Մի փոքր հայտարարություն ունենք մեր Հորը: Շատ վաղուց մերապգի վտարանդի վաճառականներս՝ առևտրի համար օրը օրի վրա ավելանալով գալիս ենք այստեղ՝ այս ծովապարփակ, տիեզերահռչակ, բազմամարդ, սքանչելիորեն ամենահարուստ, մեծապոր և իրավադատ Ամստելոդամ քաղաքը, այդ պատճառով էլ հարկավոր համարեցինք ունենալ մեր առանձին տեղը՝ սուրբ պատարագի համար, մեր համար մի առանձին տեղ սահմանեցինք՝ քահանայով հանդերձ, որ-

Ամստերդամի հայկական եկեղեցին

տեղ միշտ և անխափան կերպով լսում ենք աստվածային պաշտամունքը ըստ մեր կարգի և օրենքի:

Բայց քանի որ այդ տեղը վարձել էինք և հարմար չէր, մի տասնամյակ առաջ հայպգի վաճառականներս համաձայնվեցինք այստեղ մի հաստահիմն եկեղեցի կանգնել, սակայն այլևայլ պատճառներով մինչև այսօր չէր իրագործվում: Իսկ այժմ Սուրբ Հոգու բարեհաճությամբ և համախոհ ու միաբան համաձայնությամբ, մենք, այստեղ եղող հայպգի վաճառականներս, գնեցինք մի հաստահիմն եկեղեցու տեղ, քաղաքիս մեծապոր և բարձրաբերձ իշխանների հրամանով ձեռնարկեցինք շինել անհրաժեշտ և փափագելի եկեղեցին՝ հաստակառույց հիմքով՝ ի փառս մեր Տիրոջ և ի պարծանս Արևմյան ազգիս:

Հետևաբար մեծ թախանձանքով հայցում ենք, որ Սրբազան Հայրդ ունկնդիր լինեք մեր համառոտաբանությանը:

Ձեր Սուրբ Աթոռի հրամանով միշտ այստեղ մի քահանա է եղել կատարելու համար աստվածային պաշտամունքը, մինչև Երևանցի Տեր Հովհաննեսի վախճանումը, որից քիչ ժամանակ անցնելուց հետո լուսահոգի Աղեքսանդր կաթողիկոսի հրամանով այստեղ եկավ Հովակիմ վարդապետը և ավելի քան մեկ տարի մնալուց հետո գնաց այստեղից մեծն Հռոմ, որտեղ դեռևս դեգերելով մնում է: Եվ մենք այսպիսի մի գրությամբ մեկ հազար մի քահանա խնդրեցինք լուսահոգի կաթողիկոսից, բայց նա վախճանվեց, երբ մեր թուղթը դեռ չէր հասել նրան:

Թեև Հովակիմ վարդապետը այստեղ թողեց իր նորընծա միայնակյացին՝ Տեր Եղիսե անունով, Փիլիպոսի որդին՝ Նորք գյուղից, բայց սա կամավոր հոժարությամբ չի ուզում մնալ այստեղ, քանի որ տարիքով փոքր է և կրոնակենցաղ, իսկ այս քաղաքը հոլանի և շպարադեմ:

Ուստի միաբերան համաձայնությամբ խընդրում ենք Ձերդ Բարձրագահությունից հոգալ մեկ և արագ կերպով այստեղ մի քահանա ուղարկել՝ տարիքով առույգ և գիտությամբ կատարյալ, ոչ կանամբի՝ կին ունեցող, այլ լինի ըստ Պողոսի սահմանածի Ա Տիմոթեոսի Գ գլխի 2-րդ համարում. աղ լինի, որով անհամը աղի դառնա, և լույս լինի, որ լուսավորի բոլոր մարդկանց: Կարող լինի նաև դիպուկ ժամին ողջամիտ վարդապետությամբ քարոզել և պատասխանել հարցումներին, որ այստեղ տալիս են միշտ այլազգիների բանասերները: Քահանան ընտանիքի հոգս չունենա, այլ այրի կամ կուսակրոն քահանա, որ մինչև կյանքի վերջը այստեղ մնա: Նա թող Ձերդ Վեհությունից հրաման ունենա օծելու մեր այս նորակերտ եկեղեցին. ջնորհեցեք նրան երկու թուղթեր, որոնցից մեկը հանձնարարական լինի քահանայի համար, մյուսը՝ պատվիրան այստեղ եղող հայ ժողովրդին, որպեսզի եթե քահանան իր խոսքով կամ գործով վրիպում թույլ տա, կամ խոչընդոտ հանդիսանա մեր եկեղեցական սահմանումների ու կարգերի դեմ, սրանք կարող լինեն խրատել նրան ըստ հանցանքների, որովհետև անհնար է դժվար ժամանակներում անմիջապես տեղեկացնել Սուրբ Աթոռիդ բոլոր լուրերը, քանի որ այս վայրը շատ հեռու է այնտեղից:

Եվ մենք այստեղ եղողներս խոստանում ենք անձեռնմխելի գանձանակ հաստատել Սուրբ Աթոռիդ անունով, որտեղ լումայաչափ պտուղ կմատուցվի Սուրբ Տեղիդ, որովհետև այստեղ մեր ազգից գրեթե ոչ մեկը բնակություն չի հաստատել, իսկ երթևեկող վաճառականներ ավելի քիչ են՝ այսինքն տասից երեսունի շուրջ, այն էլ երբեմն:

Այս է մեր խնդիրքը Ձերդ Բարձրագահ Վեհափառության, որին միշտ և ամեն ինչում կմնանք հարազատ և հնազանդ որդիներ:

Գրվեց Ամստերդամում 1715 Տիրոջ տարում և հայոց 1164 թվականին, սեպտեմբերի 20-ին:

Ներքոհիշյալ վաճառականների հավանությամբ այս թուղթը հորինվեց շարադրությամբ և տպագրությամբ Ղուկաս դպիր Վանանդեցու»:

Նորակառույց եկեղեցին օծվում է «յանուն Հոգւոյն Սրբոյ»: Սակայն եկեղեցին իր հաստատուն եկամուտը չուներ, ուստի գաղութը տարեկան տուրք է նշանակում, «որպեսզի եկեղեցին, որ բովանդակ հայ գաղութի մխիթարությունն է, կարենա իր գոյությունը պահպանել»:

1833-ին Ամստերդամ իբրև հոգևոր հովիվ եկավ ձեռնասուն և նվիրյալ Հովհաննես վարդապետ Ամասիացին, որ ժրաջան աշխատանքով և իր անձնական ծախսերով 1849 թվականին վերանորոգեց եկեղեցին և բերեց այժմյան տեսքին: Ներքին հարդարանքի ծախսերը հոգաց մի հարուստ վաճառական՝ Առաքել Տեր Առաքելենց:

ԺԸ դարի կեսերից գաղութի թիվը սկսեց նվազել. նոր վաճառականներ այլևս չէին գալիս: 1774-ին եկավ Դանիել քահանան, որ ծուխի նվազմանց և ապրուստի միջոցներից զուրկ լինելու պատճառով 1806 թվականին փակեց եկեղեցին և հեռացավ. այդ թվականից ի վեր հայոց լեզուն և հայ պաշտամունքը լռել են Ամստերդամի եկեղեցում:

Գաղութի վերջին անդամը՝ Ստեփան Գաբրիելյանը, մահացել է 1835-ին: Երկար տարիներ եկեղեցին իր գույքով վեճի նյութ դարձավ, և հոլանդական դատարանը Ֆրանսուա Թեոդոր Լուբլինեքին խնամակալ կարգեց,

որն իրավունք ուներ եկեղեցին վարձու տալու այլ համայնքի: 1845 թվականին պահանջատեր կանգնեց Մայր Աթոռը, որպես գլուխ բոլոր հայկական եկեղեցիների: Դատարանը նախ մերժեց, մինչև որ 1873-ին Հաագի ռուսական դեսպանը պաշտոնագիր ներկայացրեց հոլանդական կառավարությանը, որով հաստատում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավական պահանջը: Դատարանը ճանաչեց Մայր Աթոռի իրավասությունը և ամեն ինչ հանձնեց կաթողիկոսի հավատարմատար J.Wertheim-ին: Վերջինս գործելով ըստ հրահանգի, եկեղեցին աճուրդի հանեց 1874 թվականի մարտի 9-ին: Հետաքրքրական է, որ վաճառքի ենթակա չեն եղել հայերեն արձանագրությունները: Գնողը իրավունք է ունեցել դրանք տեղափոխել, բայց «եթե այս տեղափոխության ժամանակ որևէ վնաս կամ կորուստ պատահի, գնողը պարտավոր է հատուցանել վնասը կամ նորոգության ծախսը հոգալ: Գնողը պատասխանատու է այդ իրերի անվնաս պահպանման» (Անդ, էջ 164): Շենքը գնել է Ամենասուրբ Փրկչի Բարեգործական Միությունը, որ որոշել է եկեղեցին և հարակից շենքը օգտագործել միայն կրոնական-բարեգործական նպատակով և ըստ այնմ էլ այն հանձնել է իր կրոնական կարգի մայրապետներին, որոնք հայ եկեղեցու շենքը վերածելով աղջկանց դպրոցի, պահել են այն մինչև այսօր:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԱՐԿԱՎԱԳԱՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԼԻՈՆԻ Ս. ՀԱԿՈԲ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին, Հիսնակաց Բ կիրակի օրը, հոգևոր ուրախության և հուզումի բաղում պահեր ապրեցին հարյուրավոր լիոնցի և շրջակայից հայեր՝ ներկա գտնվելով Ս. Հակոբ Մայր եկեղեցում կատարվող եկեղեցական հանդիսություններին:

Առավոտյան ժամը 10-ին սկսվեց հանդիսավոր ս. պատարագը: Օրվա պատարագիչն էր Հայրապետական Պատվիրակի Լիոնի փոխանորդ Գերշ. Տ. Նորվան եպս. Զաքարյանը: Սրբազան հորը ս. խորանի վրա սպասարկում էին Տ. Վրթանես և Տ. Իսահակ քահանա հայրերը և դպրաց դասը:

Մի պահ ձեռնադրությունից

Ս. պատարագի քառաձայն երգեցողությունը կատարում էր եկեղեցու «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարությամբ տիար Հովհաննես Պերպերյանի:

Ս. գրական ընթերցումներից առաջ՝ սկըսվեց սարկավագաց ձեռնադրության արարողությունը: Երկու ընծայյալները՝ Գևորգ Փոխանյան և Սահակ Սուքիասյան, առաջնորդությամբ խարտավիլակ Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանի, ծնրադիր, շարականների ու սաղմոսների երգեցողության ներքո, մոտեցան ս. խորանին, որից հետո պատարագիչ Տ. Նորվան եպիսկոպոսը, համաձայն ձեռնադրության մաշտոցի, սկսեց արարողությունը:

Նորընծաներն իրենց կիսասարկավագության աստիճանն ստացել էին մեկ օր առաջ, նոյեմբերի 30-ին, շաբաթ երեկոյան, «Կիրակամտից» ժամերգությունից անմիջապես հետո:

Եվ այսպես սաղմոսներ, շարականներ, ընթերցվածներ, աղոթքներ...

Մոտեցավ ձեռնադրության ամենախորհրդավոր պահը: Հնչեց Ս. Հոգու շնորհաբաշխության «Աստուածային և երկնաւոր շնորհըս...» շարական-աղոթքը:

Այնուհետև Սրբազան հայրը ձեռնադրության աղոթքները կարդալուց հետո, նորընծաներին շնորհեց սարկավագության ուրարներ կրելու, ինչպես նաև ս. խորանին սպասարկելու իրավունքը:

Ձեռնադրության արարողության ավարտին Նորվան սրբազանը, շնորհավորելով Գևորգ և Սահակ սարկավագներին, հոգևոր-խրատական քարոզ խոսեց՝ վեր հանելով սարկավագի, որպես եկեղեցու սպասավորի անձնվիրության և հոգևոր ծառայասիրության հատկանիշները և ապա հորդորելով նրանց ասաց.

«Բարեշնորհ սարկավագներ,

Հետ այսու ձեր նայվածքը անդուլ լարված պիտի պահեք դեպի Հիսուս Քրիստոս: Վառ հույսերով պիտի նայիք դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, աներկյուղ հավատով պիտի դիտեք Լուսավորչի կանթեղը: Հիշելու եք միշտ սարկավագներու պաշտպան սուրբը՝ Ստեփանոս Նախավկան, որուն բարեխոսության հաճախ պետք է դիմեք՝ խնդրելով, որ Աստված բազմացնե ու շատցնե Հայ Առաքելական Եկեղեցվո սպասավորները, մշակները, որոնցմով երաշխավորվելու է Հայ Եկեղեցվո պայծառությունը և կենսավորվելու է մեր հավաքական կյանքը»:

Եկեղեցական արարողությունից հետո, եկեղեցուն կից «Ապգային տան» սրահում, Ապգային միության վարչությունը, եկեղեցու հոգաբարձությունը և Տիկնանց միությունը, ի պատիվ նորընծա սարկավագների, կազմակերպել էին շնորհավորանքի և մաղթանաց գինեձոն, որի ընթացքում փոխանակվեցին ողջույնի և շնորհակալության խոսքեր:

Այս հանդիսությունները լիոնահայ հոգեվոր-եկեղեցական կյանքի համար նոր լիցք ու նոր ավյուն հանդիսացան:

ԶԱՏԻԿ ԱԲՂ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԲՈՒՌՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1985 թվականի դեկտեմբերի 15-ին, կիրակի օրը, Մելբուռնի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց սարկավագական ձեռնադրություն: Օրվա սուրբ և անմահ պատարագը մատուցեց և ձեռնադրությունը կատարեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոլյանը: Խարտավիլակի պաշտոնը կատարեց Տ. Ներսես քահանա Գրոլյանը՝ սարկավագների խմբի օգնությամբ:

Ընծայյալը՝ Վիգեն Ավետյանը, փոքր տարիքից նվիրված է եղել Հայաստանյայց Եկեղեցու ծառայությանը: Նա դպրության աստիճան է ստացել Հալեպում, իսկ ուրարկրելու իրավունք՝ Մելբուռնում:

Ձեռնադրիչ սրբազան հայրը իր խրատական քարոզում բացատրեց սարկավագության նշանակությունը՝ շեշտը դնելով ծառայասիրության վրա:

Որքա՜ն հուզիչ էր պահը, երբ ընծայյալը հավատքով ու գիտակցությամբ ծնրադրեց սուրբ խորանի առաջ՝ ստանալու համար այս նվիրական աստիճանը: Կրկնակի հուզիչ էր պահը, երբ ձեռնադրիչ սրբազան հայրը Վիգեն Ավետյանի ուսին գցեց ուրարը՝ որպես նշան քաղցր լուծի, կոչումի ու վոհողության:

Մի պահ ձեռնադրությունից

Ձեռնադրության ավարտին Վիգեն սարկավագ Ավետյանը, վորացած Սուրբ Հոգու շնորհներով, սպասարկեց սուրբ խորանին՝ խնկարկելով ու վերաբերում կատարելով:

Ս. պատարագի ավարտին ձեռնադրիչ սրբազան հայրը և Վիգեն սարկավագը ընդունեցին ներկա հավատացյալների շնորհավորանքներն ու բարեմաղթությունները:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԻ ՄԵՋ

Հինգշաբթի, 6 փետրվար 1986, Տոն Սրբոց Վարդանանց Զորավարացն մերոց, ցընծալի օր մը եղավ իրաքահայության համար:

Աշխատանքի օր ըլլալուն պատճառով ժամանակե մը ի վեր Վարդանանց հանդիսությունները տեղի կունենան երեկոյան: Այս տարի ևս հոծ բազմության մը ներկայության առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ ս. պատարագ մատույց թեմիս բարեխնամ առաջնորդ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը: Պատարագի հոգեղեն երգեցողության իր մասնակցությունը բերավ «Զվարթնոց» երկսեռ դպրաց դասը:

«Հայր Մեր»-են առաջ պատարագիչ առաջնորդ սրբազանը իր քարոզին մեջ պանծացուց հիշատակը Վարդանի և 1036 վկաներուն, ի միջի այլոց հաստատելով թե՝

«Քաջամարտիկ Մամիկոնյան սպարապետը ու իր անձնվեր զինակիցները հայոց պատմության ոսկեգիր մատյանին մեջ կներկայանան որպես անշեջ փարոսներ, որպես մշտավառ լույս, հույսը նավուն՝ փոթորկոտ ծովուն վրա: Ավարայրեն ցայսօր 1500 և ավելի տարիներ վերջ, մերազն ժողովուրդի այն վավակները որոնք սփյուռքյան պայմաններու բերումով կապրին տարբեր երկինքներու ներքո հաճախ ենթակա հավատքի նոսրացման ու ապազգայնացման վտանգներուն, ահավասիկ Հայ Եկեղեցվո լուսապսակ ճանապարհին վրա, տարին անգամ մը գոնե, կիանդիպին Վարդանին ու Ղևոնդ երեցին, Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսին ու հայ պալատականին, Հայ Եկեղեցվո նվիրյալ սպասավորներուն ու երամ-

երամ հավատավոր ժողովուրդին, հանդիպում՝ որ անպայմանորեն պիտի հագեցնե մեր ծարավ հոգիները՝ նորոգող կանչ մը հանդիսանալով՝ վերստին վերադառնալու հայ ժողովուրդի ճշմարիտ հոգևոր արժեքներուն ու իրավ ազգային բյուրեղ դիմագիծին:

Վարդանանց հիշատակը մշտական հրավեր մըն է դարերու խորքերեն եկող, կոչ մը մերօրյա և գալիք սերունդներուն՝ ամուր պահելու հավատքը հայուն Էջմիածնով նվիրականացած ու պայմանավոր, ինչպես նաև կառչած մնալու մշակույթին հայոց՝ Մեսրոպատառ հիասքանչ նշանագրությամբ խորհրդանշված: Այո, Վարդանանք գիտակցաբար ընտրեցին Ավարայրի ճակատագիրը, կամովին ընդունելով նահատակության պանծալի պսակը, որպեսզի հարատև մնան Էջմիածինն ու Այբուբենը ամենայն հայոց, կույգ գրավականները ազգիս հավատքի ու մշակույթի անանց գոյության»:

Քարոզի վերջավորության տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք, ապա ընթերցվեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որով առաջնորդ սրբազան հոր միջնորդությամբ ավագության պատիվ և սև ծաղյա փիլոն կրելու իրավունք շնորհվեցավ թեմիս հոգևորականներեն արժ. Տ. Օշական քհն. Գլըճյանին իր քահանայական ձեռնադրության 20-ամյակին առթիվ:

Պատարագի վերջավորության առաջնորդարանի դահլիճին մեջ տեղի ունեցավ ընդունելություն ի պատիվ նորոգ պարգևատրված Տ. Օշական ավագ քահանայի, որը

Ավագ եպս. Ասատուրյանը կարդում է Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը

շնորհակալություն հայտնելով առաջնորդ սրբազան հորը այս վստահության համար, ավելցուց ըսելով.

«Այսօր նվիրական այս պահուն, գոհություն և փառք կմատուցանեմ Ամենակալին, որ վիս արժանացուց ավագ քահանայի կոչման Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Վեհափառի սրբատառ կոնդակով: Այս պահուն կմտաբերեմ սաղմոսերգուին հետևյալ խոսքը՝ «Ի քեզ Տէր յուսացայ զի մի ամաչեցից յաւիտեան»—«Տեր, իմ հույսը քու վրադ դրի, որպեսզի հավիտյան ամոթով չմնամ իմ հոգևոր ծառայության ճամբու վրա»:

Սրբազան Հայր, Ձերդ Սրբազնության, Ազգային Կեդրոնական Վարչության և ներկա հավատացյալ ժողովուրդին առջև խորունկ գիտակցությամբ, սրտիս խոր վիրա-

պեն այս պահուս կվերանորոգեմ ուխտս՝ հանդեպ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Վեհափառ Հայրապետի, թեմիս տիրախնամ առաջնորդի և Ազգային Կեդրոնական Վարչության»:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔԻ» ՇԱԲԱԹԻՆ՝ ՄԻԼԱՆՈՅԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԵՋ

Կաթոլիկ Եկեղեցվո որոշումով, հունվար 18—25-ի ութնօրյա շրջանը հայտարարվեցավ «Քրիստոնյաներու Միության աղոթքի» շաբաթ:

Այս տարի, ինչպես նախորդ տարիներուն, Միլանոյի և շրջակա քաղաքներուն կաթոլիկ Եկեղեցիներու ու միաբանություններու հատուկ հրավերով, Իտալիո հայոց հոգևոր հովիվ Սարգիս քհն. Սարգիսյան իր անմիջական մասնակցությունը բերավ վանական հոգևոր պաշտամունքներու և արարողություններու:

Ուրբաթ 17 հունվարին, Միլանոյի թեմի ռադիոն, որ իր հաղորդումները կձայնասփռե Լոմպարտիա նահանգի հինգ ու կես միլիոն կաթոլիկ հավատացյալներուն, Սարգիս քհն. Սարգիսյանի նախաձեռնությամբ 20 րոպե տևողությամբ տեղեկություններ հաղորդեց հայ ժողովուրդի քրիստոնեության դարձի, Ս. Էջմիածնի կառուցման, գրոց գյուտի, Աստվածաշունչի թարգմանության, Վարդանանց պատերազմի, Ամենայն Հայոց կաթողիկոսության, այսօրվա ծաղկյալ Հայաստանի, Իտալիո հայերու հոգևոր-մշակութային կյանքի և Հայ Եկեղեցվո Էքումենիկ շարժման մասնակցության վերաբերյալ: Հաղորդման վերջավորության ձայնասփռվեցան Եկմալյան պատարագեն հատվածներ:

Նույն օրը երեկոյան, Միլանոյի Ֆրանչեսկո Ռոմանա եկեղեցվո մեջ Սարգիս քհն. Սարգիսյան նախագահեց Էումենիկ արարողության մը՝ եկեղեցվո երեք հոգևոր հովիվներու մասնակցությամբ, տասնյակ մը մայրապետներու և հարյուրավոր իտալացի հավատացյալներու ներկայության: Արարողության սկիզբը ան խոսեցավ հայ ժողովուրդի, Հայ Եկեղեցվո և մշակույթի մասին:

Չորեքշաբթի հունվար 22-ին, Սարգիս քահանա Միլանո երկրորդ նորակառույց ավանի գլխավոր եկեղեցվո մեջ «Խաղաղական» և «Հանգստեան» ժամերգություն կատարեց, որու ընթացքին Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի «Հաւատով խոստովանիմ» աղոթքը իտալերեն լեցվով կարդացվեցավ կաթոլիկ հոգևորականներու և հավատացյալներու կողմե: Ներկաները հոգևոր պաշտամունքին կհետևեին Հայ Եկեղեցվո հոգևոր երգերուն ու աղոթքներուն իտալերեն թարգմանությունը ի ձեռին ունենալով:

Նույն հոգևոր պաշտամունքը կատարվեցավ նաև հաջորդ օրը՝ հունվար 23-ին, Միլանոյեն 40 քիլոմեթր հեռու գտնվող Պներա գյուղաքաղաքի քահանայապետական միսիոնարական կեդրոնի եկեղեցիին մեջ: Նախքան եկեղեցական արարողությունը Սարգիս քահանա մասնակից դարձավ միսիոնարական կեդրոնի հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության հետ սիրո ընթրիքին և անոնց խոսեցավ Հայ Եկեղեցվո դավանության և Էքումենիկ շարժման մասնակցության մասին:

Հունվար 24, ուրբաթ օր, Սարգիս քահանա Պուսթո Արսիցիո քաղաքի միսիոնարական կեդրոնին տեսչության հրավերով տեղվույն Մայր տաճարին մեջ թեմի եպիսկոպոսի ներկայության մասնակցեցավ Էքումենիկ աղոթքի արարողության մը: Նախքան պաշտամունքը սկսիլը, Սարգիս քահանա տասնյակ մը եկեղեցականներու, երեսունե ավելի մայրապետներու և ավելի քան երկու հազար իտալացի հավատացյալներու տեղեկություններ տվավ Հայ Եկեղեցվո, Հայաստանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Իտալիո հայերու եկեղեցական-մշակութային կյանքի մասին: Հոգևոր պաշտամունքի ընթացքին մինչ հոգևորականները և հավատացյալները վիրար կողջագուրեին՝ ողջույնի համբույրով՝ Սարգիս քահանա երեցկնոջ հետ կերգեր «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» շարականը:

Չորեքշաբթի փետրվար 12-ի երեկոյան, Միլանոյի արվարձաններեն Պաճճոյի նորակառույց եկեղեցվո մեջ, Սարգիս քահանա սիրով ընդառաջելով տեղվույն հոգևոր հո-

վիվներուն հրավերին, «Խաղաղական» և «Հանգստեան» ժամերգություն կատարեց հայերեն և իտալերեն լեզուներով՝ հոծ բազմության մը ներկայության: Արարողության սկիզբը ան խոսեցավ Հայ Եկեղեցվո հիմնադրության, Հայոց Առաքելական հավատքին, Ամենայն Հայոց կաթողիկոսության, Իտալիա բնակություն հաստատած հայերու և Հայ Եկեղեցվո Էումենիկ շարժման մասնակցության մասին:

«Քրիստոնյաներու Միության աղոթքի» շաբթվան ընթացքին տեղական ռադիոն, հեռուստացույցը, մամուլն ու ծիսական թերթիկները իրենց օրական հաղորդումներով ու հոդվածներով լայնորեն արձագանքեցին տեղի ունեցած արարողություններուն՝ շեշտելով Հայ Եկեղեցվո մասնակցությունը Էքումենիկ շարժման:

Նույն առիթով, Սարգիս քահանա բոլոր հանդիպումներու ընթացքին ներկաներուն ցուցադրեց Մայր Աթոռի հրատարակությունները՝ գունավոր ալպոմներ, «Էջմիածին» ամսագիր, Նոր Կտակարան, օրացույց, Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ի գունավոր լուսանկարները:

«Քրիստոնյաներու Միության աղոթքի» շաբաթը այս տարի ևս առիթ եղավ հայ ժողովուրդը և Եկեղեցին՝ իր պատմությամբ, Առաքելական հավատքով, ծեսով ու դավանանքով իտալացիներուն ծանոթացնելու, հիմնական նպատակ ունենալով շեշտել Հայ Եկեղեցին իր ինքնագլուխ և ինքնիշխան նվիրապետությամբ, պատմական կարգացման յուրահատուկ ուղիով:

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳԻՍՅԱՆ



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ—ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Ս/թ. փետրվարի 1—3 օրերին, Քրիստոնեական Խաղաղության Կոնֆերանսի ղեկավարության նախաձեռնությամբ, տեղի ունեցավ Քրիստոնեական-Մահմեդական երկխոսություն՝ նվիրված Մերձավոր Արևելքում խաղաղության պաշտպանման հարցերին:

Սույն երկխոսությանը մասնակցում էին 12 հոգի, որոնցից 10-ը՝ Չեխոսլովակիայից, ԳԴՀ-ից, Հունգարիայից, Լեհաստանից և ՍՍՀՄ-ից ժամանած քրիստոնյաներ էին: Սովետական պատվիրակության կազմում էին Ռուս Եկեղեցու ներկայացուցիչ Ալեքսանդր քհն. Կոժան և, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու՝ Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանը:

Մահմեդական կողմից երկխոսությանը մասնակցում էր Սիրիայի հանրապետության մեծ Մուֆթի Ահմեդ Քաֆթառուն իր որդու հետ և ՍՍՀՄ-ի Եվրոպական մասի Մուֆթի Տալգատ Տաժեդինը:

Երկխոսության նպատակն էր՝ ստեղծել բարենպաստ միջավայր քրիստոնյաների և մահմեդականների միջև, ուղղել նրանց ջանքերը խաղաղության պահպանման, հող պատրաստել քրիստոնյաների ու մահմեդականների հետագա՝ ավելի խոշորաթիվ հանդիպումների համար:

Փետրվարի 1-ին տեղի ունեցավ ժողովի բացումը: Ողջույնի խոսքով նրա մասնակիցներին դիմեց ՔԽԿ-ի գլխավոր քարտուղար դոկ. Միրեժովսկին:

Հաջորդ օրը, փետրվարի 2-ին, լսվեցին երկու զեկույցներ. ԳԴՀ-ի ներկայացուցիչ դոկտ., պրոֆ. Կարլ-Հայնց Բերնհարդի՝ «Մերձավոր Արևելքում՝ խաղաղության պահպանման ուղղությամբ տարվող ջանքերի կրոնական բնույթը քրիստոնեական տեսանկյունից» և մեծ Մուֆթի Ահմեդ Քաֆթառուի «Մերձավոր Արևելքում՝ խաղաղության պահպանման ուղղությամբ տարվող ջանքերի կրոնական բնույթը ըստ մահմեդականության»:

Զեկուցումների ընթերցումներից հետո, տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Իր հերթին խոսք առնելով, Անանիա եպս. Արաբաջյանը ներկաներին պատմեց Ադրբեջանի հայ ժողովրդի և տեղի մահմեդական բնակչության միջև եղող բարեկամական մթնոլորտի մասին: Այսպիսով, եզրափակեց Անանիա սրբազանը, իրականության մեջ մենք արդեն հասել ենք այն վիճակին, որ այժմ ծրագրում է ներկա երկխոսությունը:

Փետրվարի 3-ին, խորհրդակցություններից և քննարկումներից հետո, խմբագրվեցին այն հիմնական սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեն Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվող ներկա երկխոսության անդամները: Որից հետո կազմվեցին հաղորդագրություն և հայտարարություն՝ մամուլի համար:

Քրիստոնեական-մահմեդական երկխոսությունը իր էությամբ առաջադիմական երևույթ էր ժողովուրդների մերձեցման ճանապարհին: Միաժամանակ այն ցուցադրեց երկու կրոնների ներկայացուցիչների ձգտումը՝ օգնելու միջուկային աղետը կասեցնելու գործին:

Փետրվարի 5-ին ՍՍՀՄ-ի կրոնական պատվիրակությունը վերադարձավ Մոսկվա:

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ



ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՎՈ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մեր նպատակը չէ Հայց. Եկեղեցվո հատուկ Ընդհանուր Ժողովները հանգամանորեն ներկայացնել, այլ լոկ անդրադառնալ անոնց կազմության մասին, թե առհասարակ ո՞վքեր ներկա կըլլային անոնց և ի՞նչ հանգամանքով: Բայց որպեսզի ավելի հստակ գաղափար կարելի ըլլա կազմել այս մասին, անհրաժեշտ է նախ երթալ այդ ժողովներու արմատներուն, այսինքն անդրադառնալ համաքրիստոնեական եկեղեցիներու ժողովներու կազմության, որոնց վրա հիմնված պետք է լինին Հայ Եկեղեցվո ժողովները, իբրև անբաժանելի մասնիկը Մի, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցվո:

Պետք է հաստատել ամենեն առաջ, թե՝ ըլլա՛ մեր մեջ և ըլլա՛ այլ քրիստոնյա եկեղեցիներու մեջ, ակնարկված այս ժողովները պարբերական կանոնավորությամբ գումարված ժողովներ չեն, օրինակ տարին անգամ մը կամ հինգ տարին անգամ մը կն. այլ՝ կգումարվին երբ անհրաժեշտություն մը կամ պահանջ մը ծագեր ժողով գումարելու, այսինքն երբ կարևոր խնդիրներ հարուցվեին եկեղեցիի մեջ, որոնք լուծումի կկարոտեին: Ուրիշ խոսքով՝ ասոնք վարչական ժողովներ չէին. այլ՝ օրենսդրական ու տնօրինական բարձրագույն ժողովներ:

Ա.—ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ:

Առաջին Քրիստոնեական Ժողովը գումարվեցավ Առաքելական դարուն, Առաքյալներու նախաձեռնությամբ և գլխավորությամբ, Երուսաղեմի մեջ շուրջ 45 թվականին (ԳՈՐԾ. ԺԵ գլուխ):

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ գրքին «Ժողովեցան Առաքեալք եւ Երիցունք» բացատրութենեն բացահայտ կերևի որ ժողովի համար հավաքվածները եկեղեցվո պաշտոնյաներն էին: «ԵՐԵՑ» բառը թեև ներկայիս կգործածվի ամուսնացյալ քահանայի իմաստով, բայց ի սկզբանե այնպես չէ եղած. այսինքն Նոր Կտակարանի մեջ այդ իմաստով չէ գործածված: «Երեցները» Առաքյալներե ձեռնադրված և լիապորված անձեր էին, որոնք նշանակված էին այս կամ այն տեղական եկեղեցիներու իբրև մեծավոր և առաջնորդ: Առաքյալներու հեռանալե հետո ասոնք անոնց տեղը կանցնեին և կկառավարեին եկեղեցին առաքելական հեղինակությամբ և իշխանությամբ: Ասոնք ապա սկսան կոչվիլ «Եպիսկոպոս», որ կնշանակե վերատեսուչ, վարիչ եկեղեցվո: Արդարև Նոր Կտակարանի մեջ այս երկու բառերը անխտիր իրարու տեղ գործածված կտեսնենք (բդդ. Գործ. Ի 17 և 28. Փիլ. Ա 1. Տիտ. Ա 5, 7):

Հաջորդ դարերուն գումարված բոլոր եկեղեցական ժողովներն ալ ունեցան նույն կազմավորությունը, այսինքն միայն եկեղեցիներու վարիչներն և վերատեսուչներն էին որ կհավաքվեին հարուցված խնդիրները լուծելու համար:

Օրինակ. Նիկիո առաջին համաքրիստոնեական ժողովի նախաբանին իսկ բացատրությամբ՝ «անդէն հասանէին ի գումարութիւն եւ ի սահմանադրութիւն գլխաւորք՝ վարդապետք, առաջնորդք, օրէնսուսոյցք կարգի ժողովրդեան 318 ԵՊԻՍԿՈՊՈՍՔ...»

(ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ Ա. Վապգեն Հակոբյան, էջ 116):

Պետք է գիտնալ թե այստեղ հիշված «վարդապետք, առաջնորդք եւ օրէնսուսոյցք» բառերը եկեղեցական կարգ չեն նշանակեր, այլ **ստորոգելիներ** են «ԳԼԽԱՒՈՐՔ»-ին, այսինքն «ԵՊԻՍԿՈՊՈՍՔ»-ին: «Վարդապետ»-ը մյուս եկեղեցիներու մեջ հատուկ կարգ մը չէ, ինչպես եղած է մեր մեջ: Համաքրիստոնեական հասկացողությամբ ԲՈԼՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ, առանց բացառության, **վարդապետ** են, **առաջնորդ** են և **օրենքի ուսուցիչ** են: Որով առաջին համաքրիստոնեական ժողովի բոլոր ժողովականները ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ են. ու եթե ապագա Աթանաս Հայրապետը ներկա է այս ժողովին սարկավագ վիճակին մեջ, այնտեղ է ան պարզապես իբրև օգնականը և խորհրդականը Աղեքսանդրիո իր Պատրիարքին և ոչ որպես ժողովական. արդարև իր անունը չերևիր ժողովի կանոններուն հաջորդող ժողովականներու անվանացանկին մեջ:

Նույն է պարագան երկրորդ Տիեզերական Ժողովին համար. «Ժողովին ի Կոստանդնուպոլիս ԵՊԻՍԿՈՊՈՍՔ 150» (Անդ, էջ 273): Նույն է նաև երրորդին համար. «Ժողովեալ յԵփեսոս ԵՊԻՍԿՈՊՈՍՔ 200» (Անդ, էջ 278): Իսկ ժողովի հրավիրողներն են ԿԱՅՍՐԵՐԸ, որպես գործադիր իշխանություն ժողովներու տալիք որոշումներուն, որոնք պետական օրենք կնկատվեին:

Ասոնցմե պատ կան նաև **7 տեղական ժողովներ**, որոնք ընդունված են թե՛ մեր և թե՛ մյուս բոլոր առաքելական եկեղեցիներե, որոնց ևս մասնակցողները միայն Եպիսկոպոսներ են: Ուրեմն բացահայտ է, թե համաքրիստոնեական ժողովները ամենքն ալ կբաղկանան միայն եպիսկոպոսներե:

Բ.—ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԺՈՂՈՎՆԵՐ:

Գանք հիմա Հայաստանյայց Եկեղեցվո յուրահատուկ ժողովներուն:

Պատմության մեջ հիշված մեր առաջին ժողովը, որ կրոնական ու եկեղեցական հարցերով զբաղված է, Մեծն Ներսես Հայրապետի գումարածն է 354-ին, ԱՇՏԻՇԱՏԻ մեջ: Մեծ Հայրապետին կենսագիրը, Փավստոս Բյուզանդացի պատմիչը, այս մասին ունի հետևյալ հատկանշական հավաստումը. Ներսես «Ժողովէր առ ինքն ԶԱՄԵՆԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ .. ի գիւղն Աշտիշատ... ի տեղի լեալ ժողովոց Սիւնհոդոսին» (Փ. Բյուզանդացի. Վենետիկ. 1832. էջ 74): Ուրեմն այստեղ ևս կշարունակվի համաքրիստոնեական եկեղեցիի մեջ ի կորու եղած սովորությունը կամ Առաքելական ավանդությունը:

Հայց. Եկեղեցիի երկրորդ և ամենեն կարևոր ժողովներեն մեկը եղած է ՇԱՀԱՊԻՎԱՆԻ մեջ գումարվածը 444 թիվին. և Հայոց ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ անցած առաջին հայկական ժողովն է (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ. Ա. էջ 422): Անոր հառաջաբանին մեջ (էջ 427) ըսված է. «Գային ժողովէին **ի հրամանէ Միաբանութեանն** յեղեալ կէտն ի Շահապիվան. ի բանակեցող թագաւորացն Հայոց. ի ժամանակի նորաբեր տօնին (կոր Օրմանյան կուզե սրբագրել իբրև «ի յամանորաբեր տօնին»): Կշարունակե սույն ժողովի հառաջաբանը. «Եւ ժողովէին ԵՊԻՍԿՈՊՈՍՔ 40 եւ **Երիցունք** եւ **սարկաւագունք** բազում եւ նախանձաւոր **պաշտօնեայք** եւ **համօրէն ուխտ սրբոյ եկեղեցւոյ**, ԻՇԽԱՆՔ ԱՄԵՆԱՅՆ՝ գաւառատեարք, գաւառակալք, պետք, բռնաւորք, զօրագլուխք, հապարատրք (կարգ մը ձեռագիրներ ունին՝ հապարապետք) կուսակալք, ազատք կողմանց կողմանց **աւագ նախարարք աշխարհին Հայոց**՝ որք էին նախանձախնդիր օրինաց եւ սրբութեան, միաբան ասէին այսպէս. թէ՝ «Զեղեալ կարգ Սրբոյն Գրիգորի եւ Ներսեսի եւ Սահակայ եւ Մաշտոցի, **ԴՈՒՔ անդրէն հաստատեցէք**, եւ այլ գլուն եւս որպէս եւ Ձեր կամք են, եւ **ՄԵՔ կամաւք եւ խորժիւք յանձն առնումք**: Քանզի կարգք եկեղեցւոյ թուլացան եւ մարդիկ յանօրէնութիւն դարձան: Արդ՝ օրէնք որ Աստուծոյ հաճոյ են եւ եկեղեցւոյ նորաշինութիւն, **ԴՈՒՔ կայն կարգեցէք եւ ՄԵՔ հնազանդիմք եւ հաստատուն պահեմք**: Եւ եթէ ոք հաստատուն ոչ պահիցէ զկարգս օրինաց՝ կա՛մ Եպիսկոպոս, կա՛մ երէց, կա՛մ ազատ, կա՛մ զինական՝ պատուհաս կրեսցէ եւ տուգանս տացէ» (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ Ա. Վապգեն Հակոբյան, էջ 427—429):

Բացահայտ է, որ այս ժողովին ներկա են, բացի ՔԱՌԱՍՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԵՆ, նաև «շատ մը **երէցներ** եւ **սարկաւագներ** եւ եկեղեցւոյ նախանձաւոր **պաշտօնեաներ** եւ սուրբ եկեղեցւոյ **ամբողջ ուխտը**»: ՈՒԽՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ բացատրությամբ կհասկացվին եկեղեցվո ամբողջ պաշտոնեությունը, եկեղեցիին գործնականապես ծառայողներ: Ասոնց կարգին կան նաև «ԲՈԼՈՐ ԻՇԽԱՆՆԵՐԸ», որոնցմե կհիշվին 8 կամ 9 տեսակ աշխարհիկ պաշտոնակալներ, «Հայոց աշխարհի ավագ նախարարները»:

Այստեղ հարց կծագի, թե ասոնք ի՞նչ հանգամանքով ներկա են ժողովին: Պաշտոնակալներու թվումեն հետո, երկուստեք խոսակցություն մը տեղի կունենա «դուք»-ով և «մեք»-ով: Այս խոսակցությունը ըստ բավականին լույս կսփռե ներկաներու ժողովական հանգամանքին վրա: Ուրեմն «Հայոց աշխարհի ավագ նախարարները, որոնք օրենքի և սրբության նախանձախնդիր էին,

միաբան այսպես կըսեին Եպիսկոպոսներուն. «Ս. Գրիգոր Լուսավորիչի, Մեծն Ներսես Հայրապետի, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի դրած կարգ կանոնը «ԴՈՒՔ» վերահաստատեցեք ինչպես նաև ուրիշ լավ ու պատշաճ կանոններ ևս դրեք, «ինչպես որ ԴՈՒՔ կկամենաք. իսկ ՄԵՆՔ կամավորապես և սիրով հանձն կառնենք» հնապանդիլ: Արդ այս «մենք»-ով խոսողները իշխաններն են. հավանաբար ասոնց հետ են նաև «երեցները, սարկավագները, նախանձավոր պաշտոնյաները և եկեղեցվո ամբողջ ուխտը»: Իսկ որոնց որ կուղղվի ասոնց խոսքը «դուք»-ով նույնինքն ներկա քառասուն Եպիսկոպոսներն են. «դուք կարգ ու կանոն դրեք, և մենք կհնազանդինք և հաստատուն կպահենք զանոնք: Ու եթե ոևէ մեկը հաստատուն չպահե դրված կանոնը՝ ըլլա այդ եպիսկոպոս, կամ երեց, կամ սարկավագ, կամ ազատորյար կամ շինական՝ պատժի պիտի ենթարկվի և տուգանք պիտի կրե»: Ուրեմն աշխարհիկ իշխանները, թերևս նաև եկեղեցվո ուխտը, այնտեղ ներկա են պահանջելու եկեղեցվո հոգևոր իշխաններեն, եպիսկոպոսներեն, որ նախ թուլցած օրենքները վերահաստատեն և նորեր ևս դնեն եկեղեցիի վերաշինության համար. «ԴՈՒՔ զայն կարգեցէք եւ ՄԵՔ հնազանդիմք եւ հաստատուն պահեմք»:

Ուրեմն այստեղ հիշված «իշխանները» կամ «Ավագ նախարարները» կներկայացնեն աշխարհիկ գործադիր իշխանությունը, համապատասխան Բյուզանդական կայսրերու, որոնք ինչպես տեսանք, ժողովները կհրավիրեին և տրված որոշումները կգործադրեին իբրև պետական օրենքներ: Ըստ երևույթին օրենքներու այս թուլացման մեջ պատասխանատվության կարևոր բաժին մը ունեցած են բարձրագույն հոգևորականները, որոնք անփույթ գտնված են կարգ կանոնի ուսուցման և գործադրության իրենց առաջնահերթ պարտականության մեջ, և այդ իսկ պատճառով կըսեն իշխանները, «կարգք եկեղեցւոյ թուլացան եւ մարդիկ յանօրէնութիւն դարձան: Արդ՝ օրէնք որ Աստուծոյ հաճոյ են եւ եկեղեցւոյ նորա՝ շինութիւն, դուք զայն կարգեցէք եւ մեք հնազանդիմք եւ հաստատուն պահեմք»: Այս խնդրանքին, այս թելադրանքին, վրա է, որ եպիսկոպոսներ «կարգեցին եւ եդին» 20 խիստ կանոններ: Ու եպիսկոպոսներ օրինակ ըլլալու համար ամենքին, բարեկարգությունը կսկսին իրենցմե: Օրենքներուն գրեթե կեսը կվերաբերի հոգևորականներուն, ավելի շիտակ կմատնանշե հոգևորականներու մեղքերը, թերությունները և թերացումները, ինչ որ կնշանակե, թե եպիսկոպոսներ լինելով հանդերձ եկեղեցվո օրենսդիր իշխանությունը, օրենք չեն դներ լոկ աշխարհականներու համար, այլ նաև և առավելաբար՝ իրենց համար:

Այս տեսակետե հատկանշական է այս փառավոր և պատվաբեր ժողովի առաջին կանոնը ընդդեմ եպիսկոպոսաց: եթե եպիսկոպոս մը ծանր մեղք մը գործե կամ «վատթար գործ» մը ընե, իր «առաքելական պատիվը և եպիսկոպոսական աթոռը անարգած կըլլա»: Եթե «վկայությամբ» հաստատվի իր մեղքը «Աթոռեն և իշխանութենեն թող մերժվի» և պետք չէ այլևս քահանայագործե: Տուգանք պետք է վճարե եկեղեցիին, որ պետք է բաշխվի կարոտյալներուն» (Անդ, էջ 429):

449-ին ԱՐՏԱՇԱՏԻ մեջ տեղի ունեցավ մեր երրորդ ժողովը, պատասխանելու համար Պարսից թագավորի պաշտոնական մեկ հրովարտակին, որով հայերը կհրավիրեր կրոնափոխ ըլլալու, կրակապաշտ դառնալու: Այս ժողովը արքայական այդ հրովարտակին հերքողական ու ժխտական փառավոր պատասխան մը տվավ որուն հաջորդեց Վարդանանց Պատերազմը: Ժամանակակից պատմիչ Ղազար Փարպեցի կըսե, որ ժողովը գումարված է «ըստ հրամանի տանուտեարցըն Հայոց». իսկ Եղիշե կըսե՝ «հաւանութամբ մեծամեծաց նախարարաց», այսինքն աշխարհիկ իշխանության, նմանողությամբ Բյուզանդիոնի կայսրերուն: Երկու պատմիչներն ալ կհաստատեն որ ժողովին ներկա են 17 եպիսկոպոսներ գլխավորությամբ օրվան Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսին: Եղիշե եպիսկոպոսներու անունները հիշելեն հետո կավելցնե. «բազում քորեպիսկոպոսք եւ պատուական երիցունք, հանդերձ Ս. Ուխտիւ Եկեղեցւոյ»: Իսկ Փարպեցին 17 եպիսկոպոսներեն հետո կավելցնե. «ի պատուական երիցանց Սուրբն Ղեւոնդ եւ Խորէն ի Մրենեայ եւ Դաւիթ եւ այլ պատուական երիցունք եւ աւագ վանականք բազումք, հանդերձ աքանչելի եւ հրեշտակակրօն տերամբըն Աղանաւ, որ էր յազգէն Արծրունեաց»: Փարպեցի կհիշե նաև անունները 18 նախարարներու, իբրև մասնակիցներ ժողովին, ավելցնելով որ «ազգ սեպուհներ» ալ ներկա եղած են: Իսկ Եղիշե նախարարներու ո՛չ անունները, ո՛չ ներկայությունը, ո՛չ ալ թիվը կհիշատակե:

Մեր հաջորդ եկեղեցական ժողովները գումարված են ԴՎԻՆ քաղաքի մեջ, որ Ե դարու վերջերը եղած էր Հայոց նոր մայրաքաղաքը և ուր փոխադրված էր նաև Հայրապետական Աթոռը 480-ական թվականներեն սկսյալ: Ասոնք թիվով 5 կամ 6 եկեղեցական ժողովներ են, ոմանք իշխաններու մասնակցությամբ, ուրիշներ՝ ասոնց բացակայությամբ: Առաջին ժողովը կգումարվի

506-ին, Բաբգեն Որմսեցի կաթողիկոսի օրով, եկեղեցական ընթացիկ խնդիրները՝ կարգադրելու համար. «ԵՊԻՍԿՈՊՈՍՕՔ, ՎԱՆԱԿԱՆՕՔ, եւ ՆԱԽԱՐԱՐՕՔ»: Եպիսկոպոսներեն 20 հոգի հիշված են հանվանե, իսկ նախարարներեն 14 հոգի (ԱԶԳԱՊԱՏՈՒՄ, հատված 339): Ըստ Օրմանյանի երկու տարի հետո ուրիշ ժողով մը գումարված է գրեթե նույն ժողովականներով, այսինքն բաղկացած «յԵպիսկոպոսաց Հայոց, որք ըստ գաւառաց եւ ըստ տանց... եւ յամենայն ազատաց, մեծամեծաց եւ փոքունց» (ԱԶԳԱՊԱՏՈՒՄ, հատված 343): Այս ժողովին է, որ, ըստ Օրմանյանի, մերժված է Քաղկեդոնի ժողովը և Լևոնի Տոմարը: Ուրիշ ժողով մը գումարված է Ներսես Բագրևանդացի կաթողիկոսի օրով, 554-ին, 18 եպիսկոպոսներով և անոնց ճիշդ կրկին թիվով 36 նախարարներու մասնակցությամբ. ըսված է մինչև իսկ թե «ոչ ոք արտաքոյ մնաց յաշխարհականաց», այսինքն աշխարհական իշխաններեն: Օրմանյան կենթադրե, որ «նախարարներու շատությունը տրվելիք որոշման արտաքին գործադրության պետք ունենալեն հառաջ եկած է»: Ու արտաքին այդ գործադրությունն էր «քանդել ու աւերել կտեղի ապաւինի նեստորականաց» (ԱԶԳ., հտծք. 367—370):

Վերջին ժողովին դրված են նաև 37 կանոններ, որոնք մեր ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ անցած են «ՆԵՐՍԷՍԻ ԵՒ ՆԵՐՇԱՊՀՈՅ» անվան տակ (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ Ա, էջ 175):

Իսկ 607-ին Սմբատ Բագրատունի Վրկանաց Մարզպանի նախաձեռնությամբ Դվինի մեջ գումարված է Եպիսկոպոսաց ուրիշ ժողով մը, ուր սակայն նախարարներու ներկայության նշան մը չկա: Հսկա ժողով մըն է բաղկացած 50 եպիսկոպոսներե և 390 վարդապետներե և երեցներե: Ժողովին նպատակը եղած է օրվան Հայոց կաթողիկոսը ընտրել (ԱԶԳ., հտծ. 410):

Իսկ 645-ին ալ ժողով մը գումարված է Դվինի մեջ Ներսես Իշխանցի կաթողիկոսի օրով: Կհիշվին անունները լոկ 16 եպիսկոպոսներու. իսկ աշխարհականց հիշատակություն չկա (ԱԶԳ., հտծ. 480): Այս ժողովը կսահմանե 12 կանոններ որոնք անցած են մեր կանոնագրքին (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ Բ, էջ 200):

648-ին վերջին ժողովը գումարված է Դվինի մեջ, դարձյալ Ներսես Իշխանցի կաթողիկոսի օրով. «ժողովեցան ամենայն· եպիսկոպոսունքն եւ նախարարքըն Հայոց Դուռին»: Սակայն ո՛չ եպիսկոպոսներուն և ո՛չ ալ նախարարներուն թիվը հայտնի է (ԱԶԳ., հտծ. 484):

726-ին կգումարվի ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ժողովը Հայ և Ասորի Եկեղեցիներու դավանաբանական համաձայնության համար: Ներկա են Հայոց Հովհ. Օձնեցի կաթողիկոսը 23 եպիսկոպոսներով և 8 վարդապետներով. իսկ Ասորիներու կողմե ներկա են 6 եպիսկոպոսներ: Կան նաև, ըստ Օրմանյանի, «այլեւ նշանավոր քահանաներ և վանականներ, որոնց անունները չեն հիշվիր»: Ներկա չեն նախարարներ կամ իշխաններ (ԱԶԳ., հտծ. 573):

Եկեղեցական ժողով մը տեղի ունեցավ 768-ին, Սիոն կաթողիկոսի օրով, ՊԱՐՏԱՎԻ մեջ, որ սահմանած է 24 կանոններ (ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ Բ, էջ 3): Այստեղ ալ ներկա են Հայոց կաթողիկոսի հետ իր «Եպիսկոպոսակիցները» այսինքն «Աստուածապատիւ Եպիսկոպոսունք աշխարհին Հայոց». որոնցմե սակայն 4 հոգի կհիշվին անունով: Իսկ իշխաններեն 8 հոգի: Պարտավը Աղվանից մայրաքաղաքն էր, որով Աղվանից կաթողիկոսը և 3 անվանե հիշված Աղվան նախարարներ «այլովք ազատովք» կմասնակցին ժողովին: Անունով հիշված կամ թվված ժողովականք 17 հոգի են. 6 բարձրաստիճան հոգևորականներ և 11 նախարարներ: Ժողովի կանոններուն հառաջաբանին մեջ ըսված է, որ շատեր «խափանված» կամ «արգելված» են ժողովին մասնակցելե, բայց գրավոր ձևով իրենց հավանությունը հայտնած են, որ ժողովը գումարվի և հառաջդրված նպատակները ի գլուխ հանե:

841-ին, եպիսկոպոսներու և նախարարներու «համագունդ ժողով» մը գումարված է, հավանաբար ԵՐՆՋԻԿԻ մեջ, նախաձեռնությամբ Բագրատունյաց և Սյունյաց իշխաններուն, արդարացնելու և վերստին պաշտոնի կոչելու համար Հովհաննես Դ Ողայեցի կաթողիկոսը, որ անիրավ դրպարտության մը պատճառավ հեռացած էր Աթոռեն: Ներկաներու թիվին մասին ոչ մեկ տեղեկություն տրված է (ԱԶԳ., հտծ. 641):

969-ին ԱՆԻԻ մեջ ժողով մը գումարվեցավ Աշոտ Ողորմած Բագրատունի թագավորի հրավերով, քննելու համար օրվան Վահան կաթողիկոսի ուղղափառությունը: Ժողովին ներկաներեն հանվանե կհիշվին մեկ եպս. և երեք վանահայրեր և ապա կավելցվի. «այլ եպիսկոպոսունք եւ հարք բազումք». ըստ երևույթին առանց աշխարհիկ իշխաններու ներկայության գումարվեցավ այս ժողովը (ԱԶԳ., հտծ. 770):

ԺԱ դարեն սկսյալ հայոց աշխարհիկ և հոգևոր կեդրոնները կփոխադրվին ԿԻԼԻԿԻԱ, ուր ևս բազմաթիվ ժողովներ գումարվեցան: Ասոնցմե առաջինը տեղի ունեցավ Քեսունի ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ, Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի ընտրութենեն գրեթե անմիջապես հետո, այսինքն 1113-ին, ընդդեմ Դավիթ Թոռնիկյան եպս.ի, որ ապստամ-

բած և ինքզինքը Աղթամարի կաթողիկոս ձեռնադրել տված էր: Ժողովին ներկա են «սուրբ եւ առաքինեաց արանց ապգիս Հայոց, աւելի քան վերկու հապար եւ հինգ հարիւր», բոլոր եկեղեցական դասակարգերե, այսինքն «Եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց եւ միանձանց», որոնք միաձայնությամբ «նզովեալ հերքեցին յԵկեղեցւոյ Քրիստոսի՝ ապստամբ Թոռնիկյանը և իր հետևորդները: Իշխաններու անուն կամ ներկայությունը չի հիշվիր (ԱՋԳ., հտծ. 929):

Երկրորդ ժողովը գումարվեցավ 1179-ին ՀՌՈՄԿԼԱՅԻ մեջ Գրիգոր Տղա կաթողիկոսի հրավերով Հունաց հետ միաբանելու նպատակով: Ժողովը բաղկացած է 33 եպիսկոպոսներե միայն (ԱՋԳ., հտծ. 1009):

1197-ին ալ ՏԱՐՍՈՆԻ մեջ գումարվեցավ ժողով մը Լևոն Ա թագավորի և Գր. Ջ Ապիրատ կաթողիկոսի հրավերով լատինաց հետ միաբանելու միտքով: 12 կամ 14 եպիսկոպոսներ միայն ներկա եղած են այս ժողովին (ԱՋԳ., հտծ. 1058): Աշխարհիկ իշխաններու հիշատակություն չկա:

ՍԻՍԻ մեջ, 1208 ժողով մը կգումարվի դարձյալ Լևոն Ա թագավորի նախաձեռնությամբ և Դավիթ հակաթոռ կաթողիկոսի նախագահությամբ, և մասնակցությամբ Կիլիկիո «վարդապետաց եւ եպիսկոպոսաց, հարց եւ երիցանց», Հյուսիս. Հայաստանի Ջաքարե Հայ իշխանի առաջարկներուն պատասխանելու համար: Աշխարհական իշխաններու հիշատակություն չկա (ԱՋԳ., հտծ. 1082):

Ասոր կհաջորդեն բազմաթիվ ուրիշ ժողովներ Սիսի մեջ, առհասարակ ամենքն ալ Կիլիկիո և շրջակայքի եպիսկոպոսներե բաղկացած: Բացառություն է 1307-ին գումարված ժողովը, հրավերով օրվան Հայոց Լևոն Գ, 18 տարեկան լատինամիտ թագավորին և դրդումովը իր լատին-կրոնավոր թագավորահոր Հեթում Բ-ի: Օրվան կաթողիկոսը, լատինամիտ Գր. Անավարզեցին վախճանած էր արդեն: Ներկա են 26 եպիսկոպոսներ, որոնց 16-ը Կիլիկիայեն են, 5—Կիլիկիո շրջակայքեն և մնացյալ հինգն ալ Մեծ Հայքեն: Սակայն այս թիվը ապա կբարձրանա 36-ի, կարգ մը նոր եպիսկոպոսներու ժամանումով: Եպիսկոպոսներե վատ վարդապետներ ալ կհիշվին թիվով 17: Կհիշվին նաև անունով 9 աշխարհական իշխաններ, ավելցնելով՝ «այլեւս իշխանք եւ ազատորդիք Հայոց»: Ամենեն հետո կհիշվին «բազմութիւն քահանայից եւ կրօնաւորաց»: Թեև մեկ օր միայն տևած է և իբրև օրինավոր ժողով չէ ճանչցված Հայ Եկեղեցիի կողմե, բայց ներկաներու այլազանությամբ և բազմությամբ Կիլիկիո մեծ ժողովներեն մեկն է, այն աստիճան, որ լատին հեղինակ մը—Կալանոս—կըսե այդ մասին. «Նա եղեւ Հայոց ընդհանուր Սիւնհոդոս, եւ մեծագոյն քան զայլս ամենայն, որք ժողովեցան ի Հայաստանս» (ԱՋԳ., հտծ. 1230—1232):

1317-ին կգումարվի ԱՏԱՆԱՅԻ ժողովը, հրավերովը Օշին թագավորի և Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսի, վերև հիշված ժողովին որոշումները օրինական դարձնելու միտքով. բայց չի հաջողիր: Ժողովին կազմը վերինին հետ գրեթե նույն է, միայն թիվերը ավելի պակաս են. 18 եպիսկոպոսներ և 8 վարդապետներ. իշխանները՝ 10 հատ են. հոս ալ կան «բազմութիւնք քահանայից եւ կրօնաւորաց» (ԱՋԳ., հտծ. 1253—1254):

ՍԻՍԻ մեջ ուրիշ ժողով մը տեղի ունեցած է 1343-ին, հայոց վերագրված 117 Մոլորությունները հերքելու համար: Ներկա են 30 եպիսկոպոսներ, 15 վարդապետներ, 7 ավագերեցներ և ուրիշ քահանաներ. եպիսկոպոսներուն 21-ը Կիլիկիայեն են. իսկ վեց հոգին Փոքր Ասիո մերձավոր վիճակներեն, երեքը Հայաստանեն: Իշխաններ չկան (ԱՋԳ., հտծ. 1291):

ԺԴ դարու վերջին քառորդին կվերջանա Կիլիկիո տկարացած թագավորությունը: Կվտանգվի Հայրապետական Աթոռի կացությունը ոչ-քրիստոնյա նոր աշխարհիկ իշխանության ներքև՝ լատինանալու վտանգին ենթակա: Հետևաբար հայոց բնաշխարհի հոգևոր իշխանությանց մեջ կստեղծվի զորավոր ձգտում Աթոռը իր նախկին կեդրոնը, Ս. Էջմիածին փոխադրելու: Այս նպատակի իրագործումին համար մեծ ժողով մը տեղի ունեցավ 1441-ին ԷՋՄԻԱԾՆԻ մեջ: Ժամանակակից Թովմա Մեծոփեցի պատմիչը, որ ներկա է այս ժողովին, եկեղեցական թիվը կնկատե «աւելի քան զերեք հարիւր անձինս», ինչպես նաև «այլ բազում վանահարք եւ կրօնաւոր սուրբ հարք եւ պատուական երիցունք»: Աշխարհական ներկայացուցչության մասին ալ կավելցվի. «ազատք եւ որդիք ազատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք», որոնք, կըսե Օրմանյան. քաղաքական կարգերու խանգարվելեն ետքը, նախարարներու, սեպուհներու և իշխաններու տեղը կբռնեին: Այս ժողովին մեջ ալ, Պարտավի ժողովին պես, հատկանշական է, որ այն եպիսկոպոսները և վարդապետները, որոնք հեռավորության կամ քաղաքական արգելիչ պատճառներով չէին կրցած գալ, «թուղթով» միաբանած են Էջմիածնի ժողովին: Ասոնցմե չորսը Կիլիկյան եպիսկոպոսներ են (ԱՋԳ., հտծ. 1453—1454):

Հայ Եկեղեցիի գրեթե վերջին ժողովը գումարված է ԵՐՈՒՍԱՂԵՄԻ մեջ՝ 1652-ին (Նորայր Արք., Ցուցակ ձեռագրաց Ջ, էջ 270), Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբե-

ությունները բարելավելու նպատակով: Ժողովը կհրավիրե Ամենայն Հայոց Փիլիպոս կաթողիկոսը: Իր հետ ներկա են արտասահման իր շրջագայության ընկերացող 15 վրդ.-ներ. որոնք հիշված են հանվանե: Կիլիկիո կաթողիկոսը և իրեն ընկերացող վրդ.ը: Իսկ արտաքին թեմերեն վեց եպիսկոպոսներու անունները կհիշվին, որոնք թերևս ուխտավորաբար Երուսաղեմ կգտնվեին: Երուսաղեմի Պատրիարքը և իր միաբաններեն 4 հոգևորականներ: Ժողովականներուն ամբողջ թիվն է 63 հոգի: Քահանաներ եղած են վաթսունեն ավելի: Իսկ «ժողովրդական ուխտավորներ հապար կամ ավելի», որոնք ավելի իբրև ուխտավոր ներկա են քան իբրև ժողովի հրավիրյալներ կամ մասնակցողներ (ԱԶԳ., հտծ. 1688):

Վերև հիշված ժողովներու գումարման վերաբերյալ տեղեկությունները մենք քաղեցինք առավելաբար Օրմանյանի ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ երեք հատորներեն: Մեր այստեղ հառաջ բերածները թիվով 22 են, որոնց եթե խտացյալ մեկ համադրությունը ուզենք կատարել, կստանանք հետևյալ տվյալները:

1.—ԳՐԵԹԵ ԱՄԵՆ ԴԱՐՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ ԵՆՔ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ:

Հայց. Եկեղեցին Դ դարեն սկսյալ մինչև ԺԷ դար՝ բացի երկուքեն, գրեթե ամեն դարուն ունեցած է մեկ կամ ավելի ընդհանրական ժողովները ըստ հետևյալի: Դ դար 1 հատ: Ե դար 2 հատ: Զ դար 3 հատ: Է դար 3 հատ: Ը դար 2 հատ: Թ դար 1 հատ: Ժ դար 1 հատ: ԺԱ դար չկա: ԺԲ դար 3 հատ: ԺԳ դար 1 հատ: ԺԴ դար 3 հատ: ԺԵ դար 1 հատ: ԺԶ դար չկա: ԺԷ դար 1 հատ:

2.—ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ԿԱՄ ՀԱՅ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ ԿՀՐԱՎԻՐԵՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ, ԵԹԵ ԿԱՆ:

Եթե Հայ ժողովուրդը ժողովի օրերուն հայ թագավոր ունեցած է՝ ան հրավիրած է ժողովը նիստի. օրինակ Անիի ԺՈՂՈՎԸ—969 —Աշոտ Ողորմած Բագրատունի թագավորը հրավիրած է: Տարսոնի —1197— և Սիսի Ա —1208— ժողովները Կիլիկիո Լևոն Ա թագավորը հրավիրած է: Սիսի Բ ԺՈՂՈՎԸ —1307— Լևոն Գ թագավորը: Ատանայի ԺՈՂՈՎԸ —1377— Օշին թագավորը: Սիսի Գ ԺՈՂՈՎԸ —1343— Կոստանդին թագավորը: Իսկ թագավորի չգոյության՝ առ հասարակ կաթողիկոսներ հրավիրած են: Երկու պարագային, Դվինի Դ 607-ին և Երնջակի ժողովը, —841-ին, հայ իշխաններ հրավիրած են. որովհետև առաջին պարագային ժողով գումարված է կաթողիկոս ընտրելու՝ իսկ երկրորդ պարագային օրվան կաթողիկոսը ստիպարտության մը կոհ դառնալով Աթոռեն մեկուսացած էր, կայն արդարացնելու համար: Իսկ Վաղարշապատի —1441— ժողովը նիստի հրավիրած է Հովհաննես Հերմոնեցի մեծանուն վարդապետը «իբրև ամենեն ավելի հեղինակավոր անձնավորությունը, և Տաթևյան աշակերտության պետը, Եռամեծ Տաթևացիին հաջորդը»: Իսկ Շահապիվանի ժողովն ալ հրավիրված է «Ի հրամանէ Միաբանութեանն»: Ինչ որ ենթադրաբար կնշանակե թե «Միաբանյալ խումբ մը» բարձրաստիճան հոգևորականներու և իշխաններու գլխավորությամբ՝ և ժողովի մը անհրաժեշտությունը զգալով եկեղեցիին մեջ խանգարված կարգ կանոնները վերահաստատելու նպատակով գումարված են «40 եպիսկոպոսներ, երէցներ, սարկաւագներ, բայում նախանձաւոր պաշտօնեայք եւ համօրէն ուխտ սրբոյ եկեղեցւոյ եւ իշխանք ամենայն... աւագ նախարարք աշխարհին Հայոց»:

3.— ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

6 ժողովներ գումարված են **բարեկարգական** նպատակներով, որոնցմե չորսը դրած են նաև կանոններ, որոնք անցած են մեր ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ մեջ: 5 ժողով գումարված է **պատասխանելու համար Հայ ժողովուրդին ուղղված պաշտոնական նամակներուն:** 1 հատը գումարված է Ասորի Եկեղեցիի հետ Հայ Եկեղեցվո հարաբերությունները **բարելավելու**՝ ու հատ մըն ալ՝ Մայր Աթոռի և Կիլիկիո Աթոռին հարաբերությունները **բարելավելու** համար: Ժողովներեն մեկը հրավիրված է Հայ և Հույն **Եկեղեցիներու միացման** նպատակով. իսկ երեքը՝ կաթոլիկ Եկեղեցիի հետ **միաբանելու նպատակով:** Վերոհիշյալ 22 ժողովներեն երկուքը գումարված են **կաթողիկոսը ընտրելու** համար: Մեկ ժողով՝ զրպարտյալ **կաթողիկոս մը արդարացնելու** և ուրիշ ժողով մը՝ Քաղկեդոնական դարձած կաթողիկոս մը դատապարտելու և երրորդ ժողով մը՝ **հակաթոռ կաթողիկոս մը նզովելու համար:**

(Շարունակելի)



ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ
(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

1. ՍԿԻԶԲ (Մարկ. Ա 1)

Ա 1 Հիսուս Քրիստոսի՝ Աստուծո Որդու Ավետարանի սկիզբը:

Այս նախադասության մեջ, որով բացվում է Մարկոս ավետարանչի գիրքը, բոլոր բառերը կարևոր են: Հեղինակը մեզ հայտնում է, որ մենք մտնում ենք մի եղելության մեջ, որ Ավետարանն է, և որ այդ եղելությունը մեզ բացահայտել պիտի տա երկու բան. այն, որ՝

— Հիսուս՝ Քրիստոսն է:
— Հիսուս՝ Որդին է Աստուծո:

Ավետարան

Այն դարաշրջանում, երբ գրում էր Մարկոսը (շուրջ 65 թվականին Քրիստոսից հետո), ավետարան բառը դեռևս գիրք չէր նշանակում, այլ՝ «Բարի լուր»: Միջերկրականյան աշխարհում այդ բառը դարձել էր գրեթե տեխնիկական մի տերմին, որ նշանակում էր բարի լուրեր, ինչպես, օրինակ՝ մի իշխանի ծնունդը կամ ռազմական մի հաղթանակի ավետումը: Հին Կտակարանում, Երուսաղեմի անկումից և նրա բնակիչների տեղահանությունից հետո, մարգարեներից մեկն օգտագործել է այդ բառը՝ ավետելու համար Աստուծո թագավորությունը Հրեաստանի վերակառուցված մայրաքաղաքի վրա:

Ի՜նչ գեղեցիկ են լեռների վրա
Խաղաղության համբավաբեր ավետարանչի ոտքերը,
Իբրև բարության ավետարանիչ,
Որպեսզի լսելի դարձնեմ փրկությունը քո՝
Ասելով Սիոնին. «Աստված պիտի թագավորի քո վրա»:
(Եսայի, ԾԲ 7)

Ինչպես երևում է, Մարկոսն առաջինը չէ, որ կապ է հաստատում Ավետարանի և Աստուծո Թագավորության միջև: Սակայն առաջին անգամ նա է «Ավետարան» կոչել մի ամբողջական եղելություն, որ ընդգրկում է Հիսուսի կյանքը, մահը և հարությունը:

Հիսուս

Սուրբ Մարկոսը մեզ ցույց է տալիս, թե Հիսուս՝ ինքը Քրիստոսն է: «Հիսուս» բառը հունարենից է գալիս և նույն բանն է նշանակում, ինչ որ «Մեսիա» բառը, որը, իր հերթին, ծագում է եբրայեցերենից:

Մեսիան «նա է, ով օծում է ստացել», ինչպես հնում Իսրայելի և Մերձավոր Արևելքի բազմաթիվ այլ երկրների թագավորները:

Սակայն Երուսաղեմի թագավորներից շատերը հուսախաբ էին արել ժողովրդին, և նա

* Michel Quesnel, *Comment lire un Evangile*, (c) *Editions du Seuil*, Paris, 1984.

սպասում էր մի Թագավոր Մեսիայի, որը նույնքան հավատարիմ պիտի լիներ Աստծուն, ինչպես եղել էր Դավիթը՝ Քրիստոսից մոտ 1000 տարի առաջ ապրած այն մեծ վեհապետը, որը փաստորեն հիմնադրել էր Իսրայելի պետությունը:

Բարի էր սպասված այդ Մեսիայի դեմքը: Նրա մեջ ինչ-որ բան կար քաղաքական այն ապատարարից, որը պիտի գար հռոմեական տիրապետությունից ապատագրելու Սուրբ Երկիրը: Բայց նա պիտի լիներ նաև արդար և հավատարիմ մի մարդ, որ իր կարողությունը ի սպաս չպիտի դներ իր սեփական անձին. նա հարգել պիտի տար իշխանությունը միակ Աստուծո, որին իրապես պատկանում էր այդ իշխանությունը:

Մարկոսը մեզ ցույց է տալիս, որ Հիսուս հենց այդ սպասված Մեսիան է: Իր գրքի առաջին կեսը նա հատկացրել է դրան: Առաջին բաժնի վերջում նա մեզ ներկայացնում է Պետրոսին՝ տասներկու առաքյալներից մեկին, որն ասում է Հիսուսին՝ **դու Քրիստոսն ես** (Մարկ. Ը 29):

Որդի Աստուծո

Սա այն արտահայտությունն է, որ ընթերցողը մղվում է վերագրելու Հիսուսին երկրորդ բաժնի վերջում: Այդ արտահայտությունը արտասանվում է մի հռոմեացի հարյուրապետի կողմից, որը, խաչի մոտ կանգնած, ասում է՝ տեսնելով, թե Հիսուս ինչ ձևով է ավանդում իր հոգին.

Իրոք այս մարդը Աստուծո որդի էր (Մարկ. ԺԵ 39)

«Աստուծո Որդի» արտահայտությունը Հիսուսի ժամանակաշրջանում մի տիտղոս էր, որ հրեաները գործածում էին Մեսիայի համար: Սակայն դա, միաժամանակ, ուրիշ բան էր ասում, ինչում էր նվաչ «հրեական»: Դա նաև հասկանալի էր հեթանոսների կողմից, ինչպես, օրինակ, այն հռոմեացի կինվորի, որին Մարկոսը արտասանել է տալիս այդ բառերը: Բացի այդ, դա շատ առանձնահատուկ մի հարաբերություն է արտահայտում Հիսուսի և Աստուծո միջև: Մարկոսի ժամանակաշրջանի քրիստոնյաները, այսօրվա քրիստոնյաների նման, մտածում էին, որ Հիսուս իսկապես Աստված է, ինչպես իր Հայրը: Սակայն Մարկոսը երբեք այդ բանը չի ասում որպես ակնհայտ ճշմարտություն: Դա մի բան է, որ հայտնվում է Հիսուսի հետ կատարված ուղևորության ընթացքում: Իսկ այդ ուղևորությունը կատարել չափազանց դժվար է. որովհետև խոսքը վերաբերում է այն ճանապարհին, որը առաջնորդում է դեպի խաչը:

2. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԸ ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԱՊԱՏՈՒՄ (Մարկ. Ա 2—8)

Ա 2 Ինչպես գրված է մարգարեների գրվածքների մեջ.
«Ահավասիկ ես ուղարկում եմ իմ պատգամավորին քո առաջ, որը կպատրաստի քո ճանապարհը քո առաջ»:
3 Անապատում կանչողի ձայնն է.
«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք նրա շավիղները»:
4 Եվ այնպես եղավ, որ Հովհաննեսը մկրտում էր անապատում և քարոզում ապաշխարության մկրտություն՝ մեղքերի թողության համար:
5 Ամբողջ Հրեաստանը և բոլոր երուսաղեմացիները գնում էին նրա մոտ և մկրտվում էին նրանից Հորդանան գետում՝ խոստովանելու իրենց մեղքերը:
6 Հովհաննեսը հագել էր ուղտի մազից զգեստ և մեջքին՝ կաշվե գոտի.
նրա կերակուրն էր մորեխ և վայրի մեղրը:
7 Նա քարոզում էր և ասում.
«Իմ ետևից կգա ինձնից ավելի հզորը, որի առաջ արժանի չեմ խոնարհվելու՝ նրա կոշիկների կապերն արձակելու համար:
8 Ես ձեզ մկրտեցի ջրով, իսկ նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով»:

Հովհաննես անունը նշանակում է՝ «Աստված շնորհ արեց»: Մարկոսը նրան ներկայացնում է որպես մի մարդու, որ քայլում է Հիսուսի առաջից ինչպես մի հրեշտակ, որ հնչեցնում է փողը այն ճանապարհի վրա, որով Աստված գալիս է միանալու մարդկանց: Թափորի մեջ ամենակարևոր անձը սովորաբար քայլում է վերջից:

Ճանապարհի պատկերը հաճախ է հանդիպում Աստվածաշնչում: Հին Կտակարանն այն օգտագործում է Իսրայելի ժողովրդի պատմության գլխավոր պահերին: Դրա համար է, որ Մարկոս ավետարանիչը մեջբերում է կատարում Եսայի մարգարեի գրքից.

Անապատում կանչողի ձայնն է.
«Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհները, Ուղի՛ղ դարձրեք մեր Աստուծո շավիղները»:

(Եսայի Խ 3)

Այն ճանապարհը, որ պետք էր պատրաստել վերևի տողերը գրվելու ժամանակ, Բաբելոնից Երուսաղեմ գնացող ճանապարհն է, որը կտրում է անապատը: Այդ ճանապարհը թույլ տվեց հրեաներին վերադառ-

նալ իրենց երկիրը 538 թվականին Քրիստոսից առաջ: Մարգարեն հայտնում է նրանց, թե հասել է ուրախության օրը և վախճանն այն աքսորի, որը տևել էր տասնյակ ու տասնյակ տարիներ:

Մարկոսը հայտնապես խոսում է Եսայու մասին, բայց միայն նրանից չէ, որ մեջբերում է կատարում: Հին Կտակարանի այն տողերում, որոնք ծառայում են ներկայացնելու Հովհաննեսին, կա նմանապես մի հիշատակություն Ելից գրքից.

Ահա ուղարկում եմ պատգամաբերին քո առաջից,
Որ ճանապարհին պահպանի քեզ:
(Ելից ԻԳ 20)

Այստեղ Աստված է, որ խոսում է Մովսեսի հետ՝ վստահություն ներշնչելու համար նրան: Տերը հսկեց Իսրայելի ժողովրդի վրա նրա ուղևորության ամբողջ ընթացքում, որը նրան հասցրեց Եգիպտոսից մինչև Ավետյաց երկիր: Միշտ նույն պատկերն է մի ժողովրդի, որը քայլում է դեպի իր նպատակակետը. նա վերադառնում է գերությունից. նրան ապատություն է խոստացված:

Քրիստոսից չորս կամ հինգ դար առաջ ապրած մարգարեների գրվածքներում, այնուամենայնիվ, պատահում է, որ ուղևորությունը լինի հակառակ կողմից: Այս դեպքում ժողովուրդը չէ, որ քայլում է դեպի իր նպատակը, այլ նրա Տերն է, որ գալիս է իրեն. երթուղին դառնում է ճանապարհն Աստուծո, որը վերստին միանում է մարդկանց: Այսպիսով Իսրայելի ժողովրդի դերը գերազանցապես լինում է ընդունել Տիրոջը: Այս հեռանկարով է արտահայտված Մաղաքիայի գիրքը, որ նաև օգտագործում է սուրբ Մարկոսը՝ ներկայացնելու համար Հովհաննես Մկրտչին.

Ահա ուղարկում եմ իմ պատգամաբերին,
Որ իմ առջևում ճանապարհ պատրաստի:
(Մաղաքիա Գ 1)

Հրեական ավանդությունն ուզում է նույնիսկ, որ այդ պատգամաբերը լինի Եղիա մարգարեն, հին ժամանակների խստակրոն մի մարդ, որ կրում էր կաշվե գոտի և կենդանու մաշից կարած զգեստ և վերադառնում էր՝ ընթանալու համար Աստուծո հաղթական թափորի առջևից: Արդարև, Աստված գալու է, որպեսզի ցույց տա իր հզորությունը: Մոտավոր կամ հեռավոր այն օրը, երբ այդ պատահելու է, կոչվել է «Աստուծո օր»:

Ահա ուղարկում եմ ձեզ Եղիա մարգարեին՝
Տիրոջ մեծ ու երևելի օրը դեռ չեկած:
(Մաղաքիա Գ 23)

Հին Կտակարանից կատարված այս բոլոր մեջբերումները կարող են շատ բարդ թվալ: Սակայն դրանք անհրաժեշտ են՝ ըմբռնելու համար մեծությունը մի կերպարի, որը նույնքան բարդ է, որքան Հովհաննես Մկրտչի կերպարը: Նա այն Եղիան էր, որին սպասում էին հրեաները՝ ավետելու համար այն օրը, երբ գալու էր Աստված իր հզորությամբ փրկելու իր ժողովրդին: Չմոռանանք, որ Իսրայելի երկիրը գրավված էր հռոմեացիների կողմից: Այն Հիսուսը, որին նա նախորդում է, ինքը Տերն է, որ գալիս է, Եթե նույնիսկ նրա գալուստը սպասվածից շատ ավելի ծածուկ է:

Արդ, ի՞նչ է անում Հովհաննես Մկրտիչը: Նա դարձ է քարոզում և մկրտում: Դարձի գալ՝ նշանակում է ետ կանգնել չարից՝ գնալու համար դեպի բարին: Այն մկրտությունը, որ նա կատարում է, մաքրագործող ջրի մեջ թաթախելու մի գործողություն է, որից մարդ դուրս է գալիս իր հանցանքներից մաքրված:

Ով լսում է Հովհաննես Մկրտիչ մարգարեին և դառնում նրա աշակերտը, կերպարանափոխվում է. մկրտությունը ներքին դարձի նշան է, նա թույլ է տալիս ընդունել Տիրոջը, որը գալիս է: Քանզի, միաժամանակ, Հովհաննեսը հայտնում է, որ մոտ է նա, ով իր ետևից է գալիս. նա չի տալիս նրա անունը, բայց Մարկոսի ավետարանի ընթերցողը հասկանում է, որ խոսքը Հիսուսի մասին է: Հիսուս էլ իր աշակերտներին պիտի մկրտի, նրանց պիտի թաթախի ջրի մեջ: Դա շատ ավելին կլինի, քան ջրով մկրտությունը, երբ մաքրվում են մեղքերը: Դա կլինի թաթախում Սուրբ Հոգու մեջ, Աստուծո Հոգու մեջ, որը հանգչում էր մարգարեների վրա և որը Հիսուսի աշակերտներին ուժ ներշնչեց վկայություն տալու նույնիսկ ամենասոսկալի հալածանքների մեջ: Ավելի ուշ, Հիսուս պիտի ասեր իր աշակերտներին.

«Երբ ձեզ տանեն հանձնելու, առաջուց հոգ մի՛ արեք և մի՛ մտածեք, թե ինչ պիտի խոսեք, այլ ինչ որ ձեզ տրվի այդ նույն ժամին, ա՛յն խոսեցեք, որովհետև դո՛ւք չէ, որ պիտի խոսեք, այլ՝ Սուրբ Հոգին» (Մարկ. ԺԳ 11):

Հովհաննես Մկրտիչը մի մարգարե է, որ նախապատրաստում է հողը: Հիսուս, երբ գա, շատ ավելին պիտի անի. նա իր աշակերտներից պիտի պատրաստի Աստուծո ժողովուրդ:

3. ՀԻՍՈՒՍ ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԱՊԱՏՈՒՄ (Մարկ. Ա 9—13)

Ա 9 **Այն օրերին Հիսուս եկավ Գալիլիայի Նազարեթ քաղաքից և Հովհաննեսից մկրտվեց Հորդանանում:**
10 **Եվ նույն ժամին, երբ ջրից դուրս էր գալիս, տեսավ երկինքը՝ պատռված, և Աստուծո Հոգին, որպես աղավնի, որ իջնում էր իր վրա:**
11 **Երկնքից մի ձայն եկավ, որն ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ հաճությունը»:**
12 **Եվ անմիջապես Հոգին նրան հանեցտարավ դեպի անապատ:**
13 **Եվ նա այնտեղ էր քառասուն օր՝ փորձվելով սատանայից: Եվ նա գազանների հետ էր, իսկ հրեշտակները ծառայում էին նրան:**

Հիսուս բեմ է դուրս գալիս: Նրա անունը նշանակում է՝ «Աստված փրկում է»: Մարկոսն արդեն խոսել է նրա մասին, բայց նա դեռ չի հիշատակել որևէ եղելություն, որտեղ Հիսուս հանդես է գալիս:

Այս առաջին տեսարանը ցույց է տալիս ընթերցողին, թե ով է Հիսուս, մի քիչ նըման այն նախադասության, որով բացվում է գիրքը: «Աստուծո Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկիզբը»: Սակայն Մարկոսի լեզուն էապես խորհրդանշական է: Ի՞նչ է հայտնում նա Հիսուսի մասին:

Հիսուս անցնում է նույն ճանապարհը, որով անցել էին եբրայեցիները Գաղթի ժամանակ: Նա սուզվում է ջրի մեջ և դուրս գալիս այնտեղից. դա հիշեցնում է եբրայեցիների անցքը Կարմիր ծովից: Դրանից հետո քառասուն օր փորձվում է անապատում ճիշտ այնպես, ինչպես քառասուն օր փորձության էր ենթարկվել Իսրայելի ժողովուրդը այնտեղ: Հիսուս Իսրայելի ժողովրդի հանգման կետն է, այն ժողովրդի, որի հետ Աստված խոսել էր՝ նրան կոչելով «Որդիս»: Հիսուս միաժամանակ հոտի հովիվն է, մի տեսակ նոր Մովսես: Եսայի մարգարեի գրքում մի կոչ կա ուղղված Աստծուն, որի միջնորդությունները հրեաները սիրում էին ոգեկոչել Գաղթի ժամանակ: Մարկոսն անտարակույս ներշնչվել է դրանից Հիսուսի մըկըրտությունը նկարագրելիս.

Ո՞ւր է Մովսեսն ու ժողովուրդը նրա.
(Տերն) երկրից հանեց հոտերի հովվին.
Ո՞ւր է (նա), ով դրեց նրանց մեջ
Սուրբ Հոգին:

(Եսայի ԿԳ 11)

Ջրի մեջ սուզվող և այնտեղից դուրս եկող Հիսուսը նաև այն անձն է, որը պիտի անցներ մահվան միջով: Մարկոսի ավետարանում «մկրտվել» բառը կարող է նշանակել «մահանալ», ինչպես այդ թելադրում է թաթախումով կատարվող մկրտության գործողությունը. անհետանում ես ջրի մեջ՝ վերըստին դուրս գալու համար ապատ օդ, ուր կյանքը կարող է ծաղկել: Խաչելությունից քիչ ժամանակ առաջ Հիսուս հարցրեց Հակոբոս և Հովհաննես առաքյալներին, որոնք ուզում էին բաժանել նրա ապագա փառքը.

Կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ, կամ մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ: (Մարկ. Ժ 38):

«Սիրելի որդի» արտահայտությունը, որ արտասանում է երկնքից եկող ձայնը, մտածել է տալիս Աբրահամի որդի Իսահակի մասին: Նա նույնպես անցել էր մի տեսակ մահվան և հարության միջով, քանի որ մատուցվելու էր իբրև զոհ, բայց ազատվել էր: Աստված ասել էր Աբրահամին.

Վերցրո՛ւ քո սիրելի որդուն՝ Իսահակին, որին սիրեցիր,
Եվ գնա՛ դու երկիրը բարձրադիր.
Այնտեղ ողջակեզ կանես նրան լեռներից մեկի վրա,
Որ ցույց կտամ քեզ: (Ծննդոց ԻԲ 2)

«Որդիս» բառը մեկն է այն արտահայտություններից, որ Աստված տալիս է Մեսիային, այն թագավորին, որին պետք ուներ Իսրայելը և որին դիմում է նա սքանչելի մի սաղմոսում.

Դու իմ որդին ես,
Ծնեցի քեզ ես այսօր:
(Սաղմոս Բ 7)

Այսպես, Հին Կտակարանին և հրեական ավանդություններին վերաբերող մի ամբողջ շարք ակնարկություններով Մարկոսը ընդհանուր գծերի մեջ ներկայացնում է Հիսուսի կերպարը: Հիսուս Իսրայելի ժողովրդի հանգման կետն է, նա հովիվն է, Մեսիան, բայց նաև՝ Որդին, որը պիտի մահանա:

Մարկոսի մոտ խոսքերն ասվում են կեսբերան: Այստեղ մեծաբարբառ հայտարարությունների հետքն անգամ չկա: Երբ կարդում ես Մարկոսի գրվածքը, նկատում ես, որ նշանները քողարկված են: Հիսո՛ւս միայն տեսնում է երկնքի պատռվելն ու Սուրբ Հոգու իջնելը. դարձյալ նրա՛ն է միայն, որ դիմում է Հոր ձայնը: Ավետարանիչը չի ասում բնավ, որ ներկաներ կային այնտեղ, ի տար-

բերություն Մաթեոսի և Ղուկասի, որոնք շատ ավելի տեսանելի ձևով են նկարագրում երկնային նշանները: Մարկոսը կարծես վերապահորեն է խոսում իր ընթերցողի հետ. նա ուզում է պարզապես ուղղու մեջ դնել նրան, որպեսզի ընթերցողն ինքը բացահայտի այն, ինչ բացահայտելու է իր ընթերցման ընթացքում:

Հիսուսի մկրտության և փորձության տեսարանը նման է մի օպերայի նախերգանքի, որտեղ ուրվագծվում են երկի գլխավոր թեմաները, իսկ դրաման հենց նոր է սկսվում:

4. ԱՍՏՈՒԾՈ ԱՎԵՏԱՐԱՆԸ (Մարկ. Ա 14—15)

Ա 14 Հովհաննեսի մատնվելուց հետո Հիսուս Գալիլիա եկավ. նա քարոզում էր Աստուծո Ավետարանը և ասում.

15 «Ժամանակը լրացել է, և հասել է Աստուծո Թագավորությունը. ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին»:

Նախքան Հիսուսի շրջագայության դուրս գալը քարոզության համար, Հովհաննես Մկրտիչը անհետանում է հրապարակից: Մարկոսի գրվածքը մեկ ասում է, որ նա «մատնվեց», ինչպես մատնվելու էր ինքը Հիսուս, իսկ նրանից հետո էլ՝ նրա աշակերտները: Հովհաննեսն արդեն բաժանում է հալածված ապագա քրիստոնյաների ճակատագիրը: Մարկոսի համար թերևս դա մի ձև է նրան կապելու Եկեղեցու հետ:

Հիսուս ինքը վերադառնում է Գալիլիա, այն շրջանը, որտեղից մեկնել էր, որպեսզի գար Հորդանան ու գտներ Հովհաննեսին: Այնտեղ է, որ նա սկսում է քարոզել: Ավետարանիչը տալիս է այդ քարոզության ամփոփումը, որ կոչում է «Աստուծո Ավետարան», այսինքն՝ այն Բարի լուրը, որն Աստծուց է գալիս և սահմանված է մարդկանց: Ամփոփումը արտահայտված է երկու նախադասությամբ:

Հիսուս նախ հայտնում է մի նոր կացության մասին՝ ասելով.

Ժամանակը լրացել է, և հասել է Աստուծո Թագավորությունը:

Ո՞ր ժամանակի մասին է խոսքը, և ի՞նչ է այդ Աստուծո Թագավորությունը, որը մոտեցել է:

Շատ դժվար է բառերով պատասխանել այս հարցերին: Ավետարանները երբեք Աստուծո Թագավորության մասին որևէ սահմանում չեն տալիս: Այդ մասին Հիսուս միայն առակներ է պատմում, որոնք թույլ են տալիս բացահայտել որոշ երևույթներ. սակայն դա այնպիսի բազմաբովանդակ մի իրողություն է, որ հնարավոր չէ ըմբռնել մի քանի նախադասություններով: Թե ինչ բան է Աստուծո Թագավորությունը, կարելի է հասկանալ միայն այն դեպքում, երբ այն ապրում ես ներքնապես:

Այսուհանդերձ, ինչ որ Հիսուս ասում է հստակորեն, այն է, որ ինչ-որ բան այլևս առաջվա նման չէ: Նրա մկրտության ժամանակ տեղի էր ունեցել մեծ տակնուվրայություն տարածության մեջ. ջնջվել էին սահմաններ, պատռվել էր երկինքը, հաղորդակցություն էր ստեղծվել վերևի աշխարհի և ներքևի աշխարհի միջև: Այժմ Հիսուս պատգամաբերն է այդ նոր կացության, նա այն դարձնում է իր քարոզության մեկնակետը:

Հիսուսի տված պատգամի երկրորդ մասը շտապեցնող մի հրավեր է.

Ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին:

Բավական չէ գիտենալ, որ Աստուծո Թագավորությունը մոտեցել է: Նրանք, ովքեր թիկունք են դարձնում Աստուծո Թագավորությանը, օտար են մնում դրան: Հարկավոր է նրա կողմը դառնալ, ապաշխարել և եռանդագին ձեռնամուխ լինել որոնելու այդ Թագավորությունը: Հիսուս քարոզում է հանդես բերել դինամիկ մի կեցվածք: Նա հրավիրում է մարդկանց, որ նետվեն մի տեսակ արկածախնդրության մեջ՝ մղված իր իսկ քարոզած Ավետարանի նկատմամբ իրենց ունեցած հավատից:

«Ավետարան» բառը, որն արդեն գործածված էր գրքի առաջին նախադասության մեջ, հետաքրքրական է, որ վերստին երկու անգամ հիշատակվում է վերոհիշյալ հատվածում: Հիսուս «քարոզում է Աստուծո Ավետարանը», գրում է Մարկոսը (համար 14), իսկ Աստուծո այդ Ավետարանի բովանդակությունը հենց «Ավետարանին հավատալն» է (համար 15): Մարդ փորձվում է մաթեմատիկական լեզվով ասել, որ Հիսուս Ավետարանը քարոզում է քառակուսի արմատով:

Ինչո՞ւ այս առանձնահատկությունը: Անտարակույս նրա համար, որ, ըստ սուրբ Մարկոսի, Հիսուս միաժամանակ **նա է, որ** քարոզում է Ավետարանը, և **նա, որին** Ավետարանն է քարոզում: Ի վերջո, Բարի լուրը ինքը Հիսուսն է: Այստեղից մեկնելով, գրքի առաջին նախադասությունը՝

Աստուծո Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկիզբը

կարելի է հասկանալ՝

Սկիզբն Ավետարանի, որ է Աստուծո Որդի Հիսուս Քրիստոս (Մարկ. Ա 1):

Հիսուսի և Ավետարանի միջև եղած նույնությունն այսպես թելադրելով՝ Մարկոսը կարգացնում է իր ընթերցողի հասկացողությունը: Բայց միևնույն ժամանակ նա ընթերցողին առաջ է մղում ավելի երկար մի հանգրվանի համար, այն հանգրվանի, որն սկսվում է այժմ և որը նրան հասցնելու է այն բանին, որ նա Հիսուսի մեջ ճանաչի հրեաների կողմից սպասված Մեսիային:

5. ՉՈՐՍ ԿԱՆՉՎԱԾՆԵՐԸ (Մարկ. Ա 16—20)

Ա 16 **Երբ նա անցնում էր Գալիլիայի ծովեզրով, տեսավ Սիմոնին և նրա եղբայր Անդրեասին, որոնք ուռկանները ծովն էին գցել, որովհետև ձկնորսներ էին:**
17 **Եվ Հիսուս նրանց ասաց. «Իմ ետևի՛ց եկեք, և ես ձեզ կդարձնեմ մարդկանց որսորդներ»:**
18 **Եվ իսկույն ուռկանները թողնելով՝ գնացին նրա հետ:**
19 **Այստեղից մի քիչ առաջ գնալով՝ տեսավ Զեբեդյան Հակոբոսին և նրա եղբայր Հովհաննեսին. սրանց էլ տեսավ իրենց նավակի մեջ, մինչ ուռկաններն էին կարգի բերում:**
20 **Եվ կանչեց նրանց. և նրանք իսկույն նավակի մեջ թողնելով իրենց հորը՝ Զեբեդեոսին, վարձկան ձկնորսների հետ միասին, գնացին նրա ետևից:**

Իր խոսքերով ու գործերով Հիսուս հայտնում է, որ ինքը Մեսիան է, Քրիստոսը: Նա աստիճանաբար ճանաչվում է որպես այդպիսին: Նա գործում և խոսում է վկաների առջև, որոնք խոստովանում են այն, ինչ տեսել են: Սիմոնը՝ առաջին երկու մարդկանցից մեկը, որին Հիսուս կանչում է, որպեսզի ուղեկցի իրեն, հենց այն մարդն է, որը պիտի կարողանար ասել.

Դու Քրիստոսն ես (Մարկ. Ը 29):

Երբեմն մարդ նեղվում է՝ մտածելով, թե որքան հապճեպ որոշում են ընդունել Սիմոնն ու Անդրեասը, Հակոբոսն ու Հովհաննեսը: Շատ հաճախ ասում ես ինքդ քեզ, որ այն ընտրությունները, որոնց վրա մարդիկ կառուցում են իրենց կյանքը, պահանջում են հասունացման երկար շրջան: Սովորաբար մարդիկ կգուշանում են կատարել մի բան, որ պատահաբար անցնում է իրենց մտքով:

Արդարև, սխալ կլիներ մտածել, որ Մարկոսը կամ մյուս ավետարանիչները կարող էին նկարագրել Հիսուսի աշակերտների հոգեփոխությունը այն պահին, երբ նրանք կանչվեցին: Հնարավոր է և նույնիսկ հավանական, որ Սիմոնն ու ընկերները վաղուց ճանաչած լինեին Հիսուսին, և որ իրենց ընդունած որոշումը հասունացած լիներ ժամանակի ընթացքում: Ինչ որ Մարկոսն արժեքավորում է, դա այն է, որ Հիսուսին հետևելու նրանց որոշումը եղել է արմատական: Նա այդ բանը ներկայացնում է «կանչվելու պատմության» ձևի տակ, որը կանչերը պատմելու մի եղանակ է (շատ գործնական Աստվածաշնչում) և ընդգրկում է չորս փուլեր.

1. Տերը **տեսնում է** ապագա աշակերտին.
2. **Կանչում է** նրան.
3. Կանչվածը իր համաձայնությունը արտահայտում է որևէ շարժումով (վեր կենալ, թողնել կբաղումը և այլն).
4. Կանչվածը **հետևում է** տիրոջը:

Ճիշտ այս ձևով է, որ Մարկոսը նկարագրում է Սիմոնի ու Անդրեասի, ապա նաև Հակոբոսի ու Հովհաննեսի կանչվելը: Պատմելու այս եղանակը հաշվի չի առնում ապագա աշակերտի հոգեկան կամ հոգեբանական փոփոխությունը: Դրան հակառակ, արժեքավորում է երկու հիմնական բան ամեն մարդու համար, որ որոշում է իր կյանքը ի սպաս դնել Աստուծո Թագավորությանը.

Առաջին՝ նա նույնն է մնում իր որոշումից առաջ և հետո. Սիմոնը, որ ձկնորս էր, դառնում է «մարդկանց որսորդ»:

Երկրորդ՝ նա ետին պլան է մղում ամեն ինչ, որ կարող է արգելք հանդիսանալ իր նոր առաքելությանը՝ հանձն առնելով անհրաժեշտ բաժանումները: Սիմոնն ու Անդրեասը թողնում են իրենց ուռկանները: Հակոբոսն ու Հովհաննեսը թողնում են իրենց ընտանիքն ու գործընկերներին: Այս արարքով Հիսուսի աշակերտները հասնում են ապատության, որը թույլ պիտի տա նրանց ամբողջովին նվիրվել իրենց նոր պարտականությանը:

Յուրաքանչյուր կոչում ունի իր պատմությունը, այնքան առանձնահատուկ, որ հետաքրքրական չի լինի նկարագրել նրա բազմատեսակ հանգամանքները: Սակայն միշտ էլ կան պահանջներ, որոնք ընդհանուր են՝

— մնալ այնպես, ինչպիսին կաս,
— դառնալով հանդերձ ավելի պատրաստակամ:

6. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՀԱՐՑՈՒՄ Է ԱՌԱՋԱԴՐՈՒՄ (Մարկ. Ա 21—28)

Ա 21 **Եվ մտան Կափառնայում: Հիսուս**

նույն շաբաթ օրն իսկ ժողովարան մտնելով՝ ուսուցանում էր նրանց:
22 Եվ նրանք զարմանում էին նրա քարոզության վրա, որովհետև նրանց ուսուցանում էր իշխանությամբ և ոչ՝ ինչպես դպիրները:
23 Արդ, նրանց ժողովարանում մի մարդ կար, որի մեջ կար պիղծ ոգի, որն աղաղակեց և ասաց.
24 «Թո՛ւյլ տուր, ի՞նչ ես ուզում մեզնից, Հիսո՛ւս Նազովրեցի. մեզ կորստյան մատնելո՞ւ եկար. գիտենք քեզ, թե ով ես դու՝ Աստուծո Սուրբդ»:
25 Հիսուս սաստեց նրան և ասաց. «Զայնը դադարեցրո՛ւ և դո՛ւրս ել դրանից»:
26 Եվ պիղծ ոգին սաստիկ ցնցեց դիվահարին և բարձրաձայն աղաղակելով՝ դուրս ելավ նրանից:
27 Եվ ամենքը զարմացան, այնպես որ հարցնում էին իրար և ասում. «Այս ի՞նչ նոր վարդապետություն է, որ իշխանությամբ պիղծ ոգիներին էլ է սաստում, և նրանք հնազանդվում են նրան»:
28 Եվ նրա համբավը տարածվեց Գալիլիայի բոլոր կողմերում:

Կափառնայումը մի մեծ գյուղաքաղաք է, որը գտնվում է Տիբերիական լճի արևմտյան ափին: Մարկոսը, չափազանցնելով, այդ լիճը կոչում է «Գալիլիայի ծով»: Կափառնայումը հիմնականում ձկնորսների քաղաք է: Թվում է, որ Հիսուս այստեղ է եկել առնվազն մի քանի օրվա համար:

Ամեն շաբաթ օր, առավոտյան, ժողովարանում տեղի էր ունենում աղոթաժողով: Հիսուս գնում էր այնտեղ քաղաքի մարդկանց հետ: Նա այդ բանին սովոր էր դեռևս մանկությունից:

Ժողովարանում ժամասացությունը բաղկացած էր լինում աղոթքներից ու երգերից, որոնք մեծ մասամբ փոխառություններ էին լինում Աստվածաշնչից: Այն ընդգրկում էր նաև երկու ընթերցումներ. մի հատված Օրենքի գրքից կամ «Թորայից» (Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը) և մի քաղվածք մարգարեությունների գրքից, ընդհանրապես՝ Եսայի մարգարեից: Այնուհետև ընթերցված գրվածքի շուրջ մի քարոզ էր խոսվում ներկա մարդկանցից մեկի կողմից, որը Աստվածաշնչին բավականաչափ գիտակ մի անձնավորություն էր լինում՝ քաղաքի բնակիչներից մեկը կամ անցորդ մի հյուր: Կրոնական համայնքի ղեկավարները ավելի հաճախ ուրիշ մեկին էին հրավիրում խոսելու, քան իրենք էին խոսում:

Ահա այս շրջանում է, որ Հիսուս սկսում է ուսուցանել: Ներգործությունը լինում է անմիջական. նրա խոսքը տարբեր է այն կոնչյուններից, որ մարդիկ լսում են սովորաբար: Այդ խոսքը պարտադրում է իրեն, պարտադրում իր հեղինակությամբ:

Սակայն Հիսուսի հեղինակությունը դրանով չի վերջանում. այն դրսևորվում է նաև այն հնազանդությամբ, որ նրա հանդեպ ցույց են տալիս չար կորությունները, որոնք բնակություն էին հաստատել ժողովարանի աղոթքին մասնակցող մի խեղճ մարդու մեջ, որը երևի լսել էր Հիսուսի կողմից արտասանված քարոզը:

Պարզ չէ մեզ համար, թե ինչպիսի մեկն էր այդ դիվահարը և թե այդ բոպեին հոգեկան ինչ վիճակի մեջ էր գտնվում: Նրա խոսքերը այն տպավորությունն են թողնում, որ նա մեծ շփոթության է մատնված. ասում է «մենք», ասում է «ես», կասկածում է իր սեփական անձին: Եվ սակայն Հիսուսի մասին նա ունի այնպիսի հստակ պատկերացում, որից կուրկ են մյուսները: Նա գիտի, որ քիչ առաջ խոսող մարդը շատ մոտ է կանգնած Սրբության Աստծուն, որ այդ մարդը նա է, որին Տերը առանձնացրել է բացառիկ մի առաքելության համար:

Դիվահարի հայտարարությունը միանում է այն խոսքերին, որ Հիսուս լսեց երկնքից իր մկրտության օրը՝

Դո՛ւ ես իմ սիրելի Որդին,
Որ ունես իմ ամբողջ հաճությունը
(Մարկ. Ա 11)

Որոշ իմաստով, բնական է, որ մի դև, որը գերբնական աշխարհին է պատկանում, Հիսուսի մասին իմանա այնքան բան, որքան ինքը Աստված: Այսուհանդերձ, Հիսուսի աչքին նա շատ բան գիտե, և Հիսուս լռություն է պարտադրում նրան: Մարկոսի Ավետարանում Հիսուս միշտ մերժում է իր անձի մասին կոպտորեն արված հայտնությունները: Հոգեպես չպատրաստված մարդկանց առաջ իր ինքնության բացահայտումը խորապես չարաղետ է, նույնիսկ՝ դիվական:

Հավատին հասնելու համար հարկավոր է ժամանակ, հարկավոր է անհատական և աստիճանական հայտնագործություն:

Հիսուս, հետևաբար, վտարում է այդ ուժեղ ոգուն, որը շատ բան գիտի. նա ի վիճակի է այդ բանն անելու, որովհետև նրանից ավելի ուժեղ է:

Այս եղելությանը ներկա գտնվողների մեջ առաջանում է կրկնակի զարմանք. նրանք լսում են մի նոր վարդապետություն. վկա են լինում չարի դիմաց հանդես եկող մի արտասովոր կորության: Ուստի, հետևյալ հարցը են տալիս իրենք իրենց, մի հարց, որ գուցե նրանց թույլ կտա առաջ ընթանալ. «Ի՞նչ է սա»:

Ամեն առաջադիմության հիմքում միշտ մի հարցադրում կա, մի կասկածանք իր սեփական համոզմունքների նկատմամբ:

7. ԱՌԱՋԻՆ ԲԺՇԿՈՒՄԸ (Մարկ. Ա 29—31)

Ա 29 Եվ իսկույն, ժողովարանից դուրս ելնելով, եկավ Սիմոնի և Անդրեասի տունը, Հակոբոսի և Հովհաննեսի հետ:
30 Սիմոնի կոքանչը տաքության մեջ պառկած էր. իսկույն նրա մասին ասացին Հիսուսին:
31 Եվ նա, մոտենալով, բռնեց նրա ձեռքը և նրան վեր բարձրացրեց. և տենդը նրան թողեց. և նա ծառայում էր նրանց:

Սիմոնի տունը պետք է մոտ եղած լիներ ժողովարանին, որովհետև շաբաթ օրը սովորություն չկար շատ քայլելու: Հենց որ ժողովարանում ժամասացությունը վերջանում է, Հիսուս գնում է այնտեղ չորս ձկնորսների ուղեկցությամբ, որոնք դարձել էին նրա ընկերները:

Տանեցիք օգտվում են Հիսուսի գալստից՝ այդ պահի մտահոգությունը վստահելով նրան: Մի փոքրիկ սենյակում, որը ընդհանուր սրահից բաժանված էր մի վարագույրով, Սիմոնի կոքանչը, տենդից բռնված երևի պառկած էր գետնին: Նա, ով ժողովարանում քիչ առաջ ցույց էր տվել իր խոսքի իշխանությունը և իր կորությունը չարի դիմաց, անկասկած ինչ-որ բան կարող էր անել: Ինչո՞ւ չդիմել նրան:

Արդարև, Հիսուս միջամտում է: Ձեռքի մի պարզ շարժում բավական է լինում, որպեսզի կինը ոտքի կանգնի և վերսկսի կբաղվել իր տնական գործերով: Առաջին հերթին, իհարկե, նա իր ստացած նոր եռանդը նվիրում է տանը հավաքված այդ փոքրիկ խմբի՝ Սիմոնի, Անդրեասի, Հակոբոսի, Հովհաննեսի և Հիսուսի ծառայությանը:

Այս խոնարհ կինը Մարկոսի և նրա ընթերցողների համար դառնում է օրինակելի տիպարը բոլոր այն կանանց և տղամարդկանց, որոնք իրենց անձը նվիրում են Հիսուսի և նրա Եկեղեցու ծառայության գործին:

8. ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ (Մարկ. Ա 32—34)

Ա 32 Երբ երեկո եղավ, արևի մայր մտնելու ժամանակ, նրա մոտ էին բերում բոլոր հիվանդներին և դիվահարներին:
33 Եվ ամբողջ քաղաքը հավաքվել էր դռների առաջ:
34 Եվ նա տեսակ-տեսակ հիվանդություններից բազում հիվանդներ բժշկեց և բազում դևեր հանեց. և թույլ չէր տալիս դևերին խոսել, որովհետև գիտեին նրան, որ Քրիստոսն է:

Շաբաթ օրն սկսվում է ուրբաթ երեկոյան, երբ երևում է առաջին աստղը: Այն վերջանում է քսանչորս ժամ հետո, այնպես որ շաբաթ օրվա երեկոն տոնական օրվան մաս չի կազմում:

Կառափնայումի բնակիչները սպասում էին շաբաթ օրվա վերջավորության, որպեսզի եկրակացություններ անեն հուզումնալից այդ օրվա մասին: Առավոտից սկսած՝ լեզուները կանգ չէին առնում ժողովարանում տեղի ունեցածի շուրջ: Սիմոնի կոքանչի բժշկումը եթե նույնիսկ տեղի ունեցած լիներ ավելի ծածուկ մի շրջանակում, դարձյալ շրջան պիտի աներ ամբողջ քաղաքում:

Եվ ահա, հպիվ ավատված շաբաթ օրվա պահեցողությունից, երբ արգելվում է որևէ տեղ որևէ բան փոխադրել, մարդիկ սկսում են վազել Սիմոնի տունը (որտեղ գտնվում էր Աստուծո նոր մարդը), յուրաքանչյուր ընտանիք քարշ տալով իր հիվանդ, անոր-մայ, տխեղծ մեկ անդամին՝ ջահերի կամ աստղերի լույսի տակ:

Մի հրաշալի՜ շքերթ...:

Հիսուս սկսում է բժշկել, ինչպես արել էր առավոտվանից ի վեր. ապաքինվում են հիվանդներ, հանվում են դևեր և միաժամանակ դատապարտվում լռության, որովհետև Հիսուս միշտ մերժում է իր ինքնության կոպիտ բացահայտումը:

Նրա համար, սակայն, դա մի իսկական հաջողություն է: Մի ամբողջ քաղաք նրա շնորհիվ ապրել էր հույսի առանձնահատուկ մի պահ:

9. ԱՋԱՏԱԳՐՈՂ ԱՂՈԹՔ (Մարկ. Ա 35—39)

Ա 35 Առավոտյան մոտ, լույսը բացվելուց առաջ, վեր կացավ և ելավ-գնաց ամայի մի տեղ ու այնտեղ աղոթում էր:
36 Նրա ետևից գնաց Սիմոնը և նրանք, որ նրա հետ էին:
37 Եվ երբ գտան նրան, ասացին. «Ամենքը փնտրում են քեզ»:
38 Եվ նա ասաց. «Եկեք գնանք այլ մոտակա գյուղաքաղաքներ ևս, որպեսզի այնտեղ էլ քարոզեմ, որովհետև հենց դրա համար եմ եկել»:
39 Եվ ամբողջ Գալիլիայում նրանց ժողովարաններում քարոզում և դևեր էր հանում:

Նախքան սենյակից դուրս սողոսկելը՝ Հիսուս, անկասկած, խարխափելով ու լոք տալով անցավ մի քանի մարդկանց մարմիններ ի վրայով, որոնք պառկած էին խսիրներով ծածկված այդ փոքրիկ սենյակի հատակին: Կափառնայումը իր դիրքով իշխում էր Տիբերիական լճի վրա: Մի քանի քայլ անելով՝ մարդ կարող էր դուրս գալ քաղաքից և ինքն իրեն գտնել աստղերով ցանցնված լճի անհունության դիմաց:

Երբ Սիմոնն ու իր ընկերները արթնացան, շատ կարմացան Հիսուսին չգտնելով այն տեղում, որտեղ նա պառկել էր նախորդ գիշերը: Ո՞ւր էր գնացել արդյոք: Կափառնայումի բնակիչների հուսախաբությունը շատ մեծ եղավ. մի երեկո, ինչպիսին նախորդ օրվա երեկոն էր, չի մոռացվի բնավ: Նրանք ուզում էին, որ Հիսուս նորից բժշկի: Ուստի, բոլորը մեկնեցին փնտրելու նրան:

Երբ վերջապես նրան գտան, Հիսուս նրանց հասկացրեց, որ տոնական օրը վերջանալու մոտ է: Աղոթքի երկար ժամերի ընթացքում, Աստուծո հայացքով կրկին նայելով նախորդ օրվա եղելությունների վրա, նա չափել էր իր հաջողությունը, իր հաջողության սահմանները, հարևան գյուղերի բնակիչների սպասման անսահմանությունը: Կափառնայումն ստացել էր իր բաժինը: Շատ հեշտ կլիներ համենալ այնտեղ այն պատրվակով, որ ամեն ինչ լավ է ընթանում: Սակայն կարևոր էր Ավետարանը սերմանել նաև ա՛յլ վայրերում:

Հիսուսի աղոթքը օգնել էր նրան՝ ապատագրվելու ժողովրդականություն ձեռք բերելու հրապուրանքից և ապրելու անհրաժեշտ բաժանումների դառնությունը:

Աստուծո հետ ստիպողաբար հարաբերության մեջ մտնելով է, որ մարդ գտնում է իր ճշմարիտ ուժը: Մարկոսն այդ ապացուցում է Հիսուսի առնչությամբ: Նա նաև հրավիրում է իր ընթերցողներին, որպեսզի համարձակություն ունենան աղոթելու այնպես, ինչպես արել էր իրենց Տերը:

10. ՄԻ ՇԱՏԱԽՈՍ ԲՈՐՈՏ
(Մարկ. Ա 40—45)

Ա 40 Նրա մոտ եկավ մի բորոտ. նա աղաչում էր, ծնկի էր գալիս և ասում. «Տե՛ր, եթե կամենաս, կարո՛ղ ես ինձ մաքրել»:

41 Իսկ Հիսուս, գթալով, ձեռքը երկարեց, դիպավ նրան և ասաց. «Կամենում եմ, մաքրվի՛ր»:

42 Եվ երբ նրան այս ասաց, բորոտությունը իսկույն գնաց նրանից, և նա մաքրվեց:

43 Եվ Հիսուս խստությամբ խոսելով՝ իսկույն դուրս հանեց նրան և ասաց.

44 «Զգո՛ւյշ եղիր, ոչ ոքի բան չասես, այլ գնա՛, քեզ քահանային ցո՛ւյց տուր և մաքրվելուդ համար ընծա տուր այն, ինչ հրամայել էր Մովսեսը՝ նրանց համար իբրև վկայություն»:

45 Բայց նա, դուրս գնալով, սկսեց եռանդուն կերպով քարոզել և լուրը տարածել այն աստիճան, որ Հիսուս չէր կարողանում այլևս հայտնապես քաղաք մտնել, այլ մնում էր դուրսը, ամայի տեղերում. և բոլոր կողմերից գալիս էին նրա մոտ:

Դեպքի վայրը հայտնի չէ: Մարկոսը որոշակիորեն չի ասում, թե որտեղ և երբ է տեղի ունեցել այն: Կարող ենք պատկերացնել, որ դեպքը կատարվել է Կափառնայումից Հիսուսի հեռանալուց մի քանի օր հետո, երկու գյուղերի միջև գտնվող մի ճանապարհի վրա, քանի որ բորոտներն ապրում էին մեկուսացված՝ ուրիշներին չվարակելու համար:

Հին Կտակարանում, արդարև, օրինագրված են բորոտների կյանքի պայմանները: Ելատացվոց գրքի պատվիրանները, որոնք խմբագրված են վաչկատունների համար, տակավին ուժի մեջ էին Հիսուսի ժամանակաշրջանում, երբ Իսրայելի ժողովրդի մեծամասնությունը դարձել էր նստակյաց:

Իր վրա խոց ունեցող բորոտի հանդերձը թող քանդված լինի, և նրա գլուխը մերկ լինի. թող նա իր բերանը ծածկած պահի և պիղծ կոչվի: Իր վրա խոց եղած բոլոր օրերին թող նա պիղծ համարվի. և քանի պիղծ է, առանձին թող ապրի, և նրա բնակարանը թող լինի ճամբարից դուրս:
(Ղևտ. ԺԳ 45—46)

Առաջին դարում, ինչպես դեռևս միջնադարյան շրջանում, բորոտությամբ տառապող մեկը ամենից առաջ հասարակությունից արտաքսված մարդ էր: Արդ, այս բորոտը համարձակվում է դիմել Հիսուսին, որի համբավը, այնուամենայնիվ, հասել էր իրեն: Նա ծնրադրում է նրա առջև գրեթե ծիսական մի շարժումով: Նա վստահություն ունի նրա հանդեպ:

Հիսուս խորապես հուզվում է: Նա արքաներին հատուկ մի շարժում է կատարում. ձեռքը երկարում է առաջ, որովհետև դիպչել մի բորոտի՝ նշանակում էր իր անձը ենթարկել վարակումի և անմաքրության վտանգին: Նա պարզ ու մեկին մի խոսք է արտասանում՝ «Կամենում եմ»:

Հիսուս հայտնապես մի նպատակ ուներ. որ հիվանդը լավանար: Նա մաքրվեց: Այժմ թող գնա-գտնի քահանային և տա նրան ապաքինված մի բորոտի համար հրեական օրենքով նախատեսված ընծան. թող բոլորի

կողմից ճանաչվի որպես քաջառողջ մարդ, ուստի և թող ներգրավվի բնականոն կյանքի մեջ, և թող այլևս այդ մասին չխոսվի:

Հիսուս ոչ մի ցանկություն չունի, որ իր կատարածի շուրջ ժողովրդի մեջ որևէ խոսակցություն տարածվի: Այստեղից էլ նրա խոսքերը՝ ուղղված խեղճ մարդուն, որին, որպես առաջին պատվեր, հրահանգվում է լեզուն կսպել:

Սակայն, ավա՜ղ, նա չի հնազանդվում: Հիսուս իշխանություն ունի մարդկանց անմաքրության և հիվանդության վրա, բայց ոչ նրանց խղճի: Ապաքինված բորոտը շատախոս մարդ է: Հենց որ Հիսուս մի գյուղաքաղաք է գալիս, իր համբավը ավելի արագ է հասնում այնտեղ, և նա չգիտի ինչ անել, որովհետև դա խաթարում է հարաբերությունները:

Քարոզչական այն շրջագայությունը, որ Հիսուս մտադրվել էր կատարել Գալիլիայի գյուղերում Կափառնայումից հեռանալու ժամանակ, տեղի չի կարող ունենալ: Հետևաբար նա մնում է գյուղում, ասես բորոտությունը կպած լիներ նրան, և սակայն, հակառակ դրան, նա դեռևս անհանգիստ է:

Ի վերջո նա վերադառնում է Կափառնայում:

(Շարունակելի)





«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ФЕВРАЛЬ 1986 г.)

1. Энциклика Католикоса всех армян Вазгена I дирекции Галлейского университета и доктору-арменоведу Герману Колцику по случаю 60-летия со дня смерти отца Иоанна Лепсиуса, 10 февраля 1986 г., № 1410 (стр. 3—5).

2. Научное собрание, посвященное 60-летию со дня смерти отца Иоанна Лепсиуса в Галле-Витенбергском университете имени Мартина Лютера Восточной Германии, 18—19 февраля 1986 г. Помещен также доклад проф. Герхарда Басарака на тему «Миротворческая деятельность Армянской Церкви» (стр. 6—13).

3. Праздник свв. Гевондидов в первопрестольном Эчмиадзине 4 февраля 1986 г. (стр. 14—15).

4. Праздник свв. Варданидов и годовщина тезеименитства Католикоса всех армян Вазгена I в первопрестольном Эчмиадзине, 5—6 февраля 1986 г. (стр. 16—22).

5. Праздник Сретения Иисуса Христа и диаконское рукоположение в первопрестольном Эчмиадзине, 14 февраля 1986 г. (стр. 23—26).

6. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за февраль месяц (стр. 27—28).

7. Биография священника Езника Петросяна по случаю получения ученой степени доктора богословия в теологическом факультете Афинского университета (стр. 29).

8. **Диакон Геворг Мкртчян**—Рождение Ваагна (стихотворение)—(стр. 30).

9. **Епархиальная жизнь:**

Посещение епископа Нарека Шакаряна в армянскую епархию Египта (стр. 31—35).

Ерванд Мелконян—Откуп армянской церкви в г. Амстердаме (стр. 35—38).

Иеромонах Затик Аветикян—Диаконское рукоположение в армянской церкви св. Акопа в г. Лионе (стр. 38—39).

Диаконское рукоположение в армянской церкви св. Богородицы в г. Мольбурне (стр. 39—40).

Праздник Варданидов в армянской епархии Ирака (стр. 40—42).

Священник Саркис Саркисян—Участие Армянской Церкви в неделе «Молитва союза христиан» в г. Милане и близлежащих городах (стр. 42—43).

10. **Епископ Анания Арабаджян**—Христианско-мусульманский диалог в г. Праге, 1—3 февраля 1986 г. (стр. 44).

11. **Архиепископ Шнорк Галустян**—Краткий очерк о строении всеобщих соборов Армянской Церкви (исследование)—(стр. 45—50).

12. **Отец Мишель Кенел**—Как читать Евангелие (перевод с французского)—(стр. 51—60).

"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(FEBRUARY 1986)

1. The encyclical of His Holiness addressed to the administration of Halle university and Dr. Hermann Goltz on the occasion of the 60-th anniversary of Father Johannes Lepsius' death, 10-th February 1986, No. 1410 (pp. 3—5).

2. International symposium in the Martin Luther university in the city of Halle-Wittenberg of East Germany, devoted to the 60-th anniversary of the death of Father Dr. Johannes Lepsius, 18—19-th February 1986. Report of Prof. Gerhard Bassarak in the symposium with the topic „Activity of the Armenian Church in favour of peace" (pp. 6—13).

3. Celebration of Saints Ghevondian in Holy Etchmiadzin, 4-th February 1986, (pp. 14—15).

4. Commemoration of the Day of Saint Vardan in the Holy See, 5—6-th February 1986 (pp. 16—22).

5. The Candlemass-day celebration and ordination of deacons in the Cathedral of Holy Etchmiadzin, 14-th February 1986 (pp. 23—26).

6. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of February (pp. 27—28).

7. The biogr phy of Father Yeznik Petrossian on the occasion of his receiving the degree of Doctor in the faculty of theology of Athens' university (p. 29).

8. **Deacon Gevorg Mkrtchian**—The birth of Vahagn (poetry)—(p. 30).

9. **Diocesan life:**

a. **Bishop Narek Shakarian**—Visit to the Armenian diocese of Egypt (pp. 31—35).

b. **Yervand Melkonian**— The purchasing again of the Armenian Church of Amsterdam (pp. 35—38).

c. **Reverend Zatik Avedikian**— Ordination of deacons in the Armenian Church of Lyon (pp. 38—39).

d. Ordination of deacons in the Holy Virgin Armenian Church of Melbourne (pp. 39—40).

e. The commemoration of thn Day of Saint Vardan in the Armenian diocese of Iraq (pp. 40—42).

f. **Father Sarkis Sarkissian**—The participation of the Armenian Church in Milano (Italy) and the neighbouring cities during the „Week of the prayer for unity of christians" (pp. 42—43).

10. **Bishop Ananya Arabadjian**— Christian-Mahometan dialogue in Praga, 1—3rd February, 1986 (p. 44).

11. **Archbishop Shenork Galoostian**—A brief study on the constitution of the councils of the Armenian Church (pp. 45—50).

12. **Father Michel Quesnel**—„How to read a gospel" (translation from french to modern Armenian)—(pp. 51—60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(FEVRIER 1986)

1. Encyclique No. 1410 du 10 février 1986 de Sa Sainteté Vasken Ier adressée à la direction de la Section de Téologie de l'Université de Halle et au Dr. Hermann Goltz à l'occasion de la célébration du 60e anniversaire de la mort du Dr. Johannes Lepsius (pp. 3—5).

2. Symposium international tenu du 18 au 19 février 1986 à l 'Université Martin-Luther de la ville de Halle-Wittenberg (RDA) et consacré au 60e anniversaire de la mort du Dr. Johannes Lepsius.

Conférence du Dr. Gerhard Bassarak au Symposium sous le thème: „L'activité de L'Eglise apostolique arménienne en faveur de la paix" (pp. 6—13).

3. Célébration de la fête des saints Ghévondian à Saint-Etchmiadzine (4 février 1986)— (pp. 14—15).

4. Commémoration de la Journée de saint Varţan à Saint-Etchmiadzine (5—6 février 1986)— (pp. 16—22).

5. Célébration de la fête de Chandeleur et ordination de diacres dans la cathédrale de Saint-Etchmiadzine (14 février 1986)—(pp. 23—26).

6. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de février 1986 (pp. 27—28).

7. Biographie du Père Yeznik Pétrossian, docteur en théologie de l'université d'Athènes (p. 29).

8. **Diacre Guévork Mekertchian**—„La naissance de Vahagn" (poème)—(p. 30).

9. **Vie diocésaine:**

a) Visite de l'évêque Narek Chakarian au diocèse des Arméniens d'Egypte (pp. 31—35).

b) **Yervand Melkonian**—Le rachat de l'église arménienne d'Amsterdam (pp. 35—38).

c) **Père Zatik Avétikian** — Ordination de diacres dans l'église arménienne St. Jacques à Lyon (pp. 38—39).

d) Ordination de diacres dans l'église arménienne de la sainte Vierge à Melbourne (pp. 39—40).

e) Commémoration de la Journée de saint Varţan dans le diocèse des Arméniens d'Iraq (pp. 40—42).

f) **Père Sarkis Sarkissian**—La participation de l'Eglise arménienne à la „Semaine de prière pour l'unité des chrétiens" à Milan (Italie) et dans les villes d'alentour (pp. 42—43).

10. **Evêque Anania Arabadjian**— Dialogue entre chrétiens et musulmans tenu à Prague du Ier au 3 février 1986 (p. 44).

11. **Archevêque Chenorhk Galoustian**— „Aperçu sur la constitution des conciles de l'Eglise arménienne" (Etude)—(pp. 45—50).

12. **Père Michel Quesnel**—„Comment lire un évangile" (Traduction du français en arménien moderne)—(pp. 51—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հալեթի համալսարանի տնօրենությանը և հայագետ դոկտ. Հերման Կոլցին՝ Հայր Իոհաննես Լեփսիուսի մահվան 60-ամյակի առթիվ 3

Դոկտ. Հայր Իոհաննես Լեփսիուսի մահվան 60-ամյակին նվիրված գիտաժողով . . 6

ՊՐՈՖ. ԳԵՐՀԱՐԴ ԲԱՍԱՐԱԿ—Հայ Եկեղեցու գործունեությունը ի նպաստ խաղաղության 10

Սրբոց Ղևոնդյանց տոնը Մայր Աթոռում 14

Ս. Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում 16

Տյառնընդառաջ և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում 23

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 27

Եվնիկ քահանա Պետրոսյան 29

ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ—Վահագնի ծնունդը 30

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ—Եգիպտահայ թեմում 31

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ—Ամստերդամի հայկական եկեղեցու վերագնումը . . 35

ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Սարկավագական ձեռնադրություն Լիոնի Ս. Հակոբ հայոց եկեղեցում 38

Սարկավագական ձեռնադրություն Մելբուռնի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում 39

Վարդանանց տոնը իրաքահայ թեմի մեջ 40

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳԻՍՅԱՆ—Հայ եկեղեցվո մասնակցությունը «Քրիստոնյաներու Միության աղոթքի» շաբաթին՝ Միլանոյի և շրջակա քաղաքներու մեջ 42

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Քրիստոնեական-մահմեդական երկխոսություն Պրագայում 44

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Համառոտ ակնարկ Հայց. Եկեղեցվո ընդհանուր ժողովներուն կազմության վրա 45

ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ—Ինչպես կարդալ Ավետարանը 51

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата 61

«Etchmiadzin» official journal of Holy Etchmiadzin 62

«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 19.02.1986 թ.: Ստորագրված է տպագրության 2.04.1986 թ.:
Տպագրական 4 մամուլ+2 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 137:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1986 թ.